

Գին՝
\$10.00


ԱՆԵԿՏ ՍԱՐԳՍԵԱՆ

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՄՕՏԵՅՈՒՄ
ԱԶԱՏ-ՈՐՄՆԱԳԻՐՆԵՐԻ
ԵՒ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՀԱՅ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

ՊՈՍԹՈՐ
2003

ԱԼԲԵՐՏ ՍԱՐԳՍԵԱՆ

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄ
ԱԶԱՏ-ՈՐՄՆԱԴԻՐՆԵՐԻ
ԵՒ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՀԱՅ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ



ՊՈՍԹՈՐ
2003



Վաղինակ Սարգսեան
(Վ. Իրանեան, ԵՆԳԻ, VASARO)
(1890-1929)

Հ.Յ.Դ.-եան նուիրում ընդատակեայ գործիչ — Թաւրիզ,
Իրան: 1912-ին, Ռուսական զինուորադաշտային դատա-
րանի հրահանգով բանտարկում է: Առաջնորդ Մելիք
Թանգեանի անմիջական միջամտութեամբ փրկում է
կախաղանից և աքսորում է Մէշէդ: Իր ուժեղ գրչի
միջոցով, պարսիկ մամուլում ներկայացրեց Հայ դատը:

Յարգանք քո յիշատակին, անմոռաց հայր:

Ալբերտ Սարգսեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հառաջաբան	vii
1- Մասոն գաղափարական մտածելակերպը	1
2- Համաշխարհային մասոնները	10
3- Եւրոպան և մասոնական շարժումը	18
4- Մասոնականութիւնը Գերմանիայում	21
5- Հայկական սփիւռքը և մասոն օթեակներ	26
6- Հայկական նոր սփիւռքը և The Library-archives of the Dutch Order	31
7- Թուրքիոյ և հայերին վերաբերող	46
8- Հայկական Ազատ-որմնադրական օթեակները	50
9- Պոլսահայ առաջին օթեակը	57
10- Թուրքիոյ «Սէր» օթեակից յետոյ	79
11- Ինչո՞ւ կազմուեցան հայ որմնադրական օթեակներ	86
12- Բրիտանական դիւանագիտութեան քայքայիչ դերը	92
13- Փոխան եզրակացութեան	106
Օգտուած աղբիւրների ցանկ	118

Սոյն աշխատութեամբ կարելոր է ներկայացնել Ազատ-Որմնադիրներ (Free-Masons), հաւատամքը և մտածելակերպը և քանի որ, հայկական մասոնական օթեակները կազմուել են Անգլիոյ և Ֆրանսիոյ հետեւողութեամբ, պիտի փորձել ներկայացնել՝ նաեւ նրանց հակահայ գործունէութիւնը:

Չնայած որ միջազգային մասոնականները ունեցել են շատ խիստ գաղտնիացում, բայցեւայնպէս շահագործուել են իրենց պատկանած պետութեան կողմից: Եղել են նաեւ բացառիկ դէպքեր, որ նրանք են գաղտնիօրէն ղեկավարել իրենց պետական գործունէութիւնն, որոնց յայտնաբերումը եղել է նաեւ օգտակար՝ հայ դատի կապակցութեամբ՝ որեւէ եզրակացութեան լանգելու, ինչպէս, William J. Whalen-ի, "Christianity and Free Masonry", գրքից հետեւեալ մէջբերումը՝ "From the fall of the MacMahon government in 1877 until World War II Masons held the reins of the French government—the notorious affaire des fiches was exposed. The Grand Orient kept index Cards on each army officer, and these cards were forwarded to War Department and those who were guilty of such Christian practices were ineligible for promotion. Over 18,000 officers were thus blacklisted by the Grand Orient, etc."

Յենուելով միկ ուրիշ մէջբերման, Պրոֆ. Յովհաննէս Փիլիկեանի «Ռ՝վ Զարդեց Հայ Ժողովուրդը» յօդուածից, - 1917 թուականին յայտնաբերուած յոյժ «գաղտնի» նամակի որ գրուած էր Մայիս 29, 1910 թուին, Անգլիոյ այդ թուի հիւպատոս Սըր Շ. Լօթհըրի կողմէ, Անգլիոյ Արտաքին Գործոց Նախարար Սըր Ս. Հարտինկին: Ինչ յայտնութիւններ կան պատմական այս փաստաթուղթին մէջ, որ կասկած չի ձգեր թրքական պետութիւնը կը ղեկավարուի Անգլիական մասոնականութեան և սիոնիզմի թուրք սիրահարներով: Ըստ Լոթհըրի, (Թուրքիոյ անտեսանելի կառավարութիւնը Կրանտ Օրիէնթն մասոնական լոճն) է, Թալաաթ Պէյն ալ անոր Կրանտ Մասթըրը (մասոնական բարձրագոյն աստիճան)...»:

Լոթհըրը կը փաստագրէ թէ ինչպէս մեր մեծագոյն շարդարար Թալաաթ պէյը իր կոմիտէին ույժը երկրին վրայ տարածելու համար կը ծրագրէ մասոնական լոճերու տարածումը թուրքիայով մէկ. այն խայծով որ մասոն դարձողը «պիտի դառնար եղբայրը Անգլիոյ թագաւորին, և

... Գարսամար աստվածը թողնում ասոր և իստը նշաններ փոխանակել երբ ան Իսթանպուլ այցելել եւայլն»։ (Փրոֆ. Յովհ. Փիլիկեան, Լիբանանի Ամերիկեան, Գերմանիոյ Միւնիխի և Անգլիոյ Լոնտոնի համալսարաններէն է, Մեծն Բրիտանիոյ Մարդասիրական կաճառի անդամ, և դափնեկիր Հայաստան Պետրոս Ադամեան մրցանակի)։

Բրիտանական հակահայ քաղաքական գործունէութեան կապակցութեամբ, կուզէի յիշատակել, որ օգտուել եմ վերջերս Հայաստանում լոյս տեսած հայ պատմաբանների մէջբերումներից, որոնք ընդգրկում են Մոսկուայի, Լոնդոնի և Վաշինգթոնի թէ պետական և թէ օրէնսդրական արձանագրութիւնները։

Եզրափակելով սոյն Յառաջաբանը կուզէի շեշտել, որ սոյն աշխատութիւնը որ սկսուեց խմբագրուել 1995-ից, իրականում կրում է Ընկեր Վահագն Գարագաշեանի հայեցողութիւնն և խրախուսանքը՝ երբ խմբագիրն էր «Հայրենիք» շաբաթաթերթի։

Նաեւ ընթերցողների ուշադրութեան կուզէի յանձնել, որ «սփիւղք»ի մանրամասն պատմականը մաս կազմելով սոյն աշխատութեան, թէ Ծառ Արքայի օրոք և թէ յետոյ, թէ ինչպէս հայութիւնը ցրուեց աշխարհով միւս, մասնաւորապէս Հին Ջուղայից Նոր Ջուղա հաստատուելով՝ ջողայեցի հայ վաճառականների դերը՝ Եւրոպայից մինչ հեռաւոր Ասիա շեշտելու համար։

1. ՄԱՍՈՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԸ

Ազատ-Որմնադիրները չեն ընդունում երրորդութիւնը, որոնք են, Անկումը, ոչ-աստ-լածայինը և քաւութիւնը։

Նրանք ընդունում են.-

«Ա» Աստուածը, ամէն ինչի ստեղծիչը, որն է Տիեզերքի Մեծ Ճարտարապետը. «The Grand Architect of the Universe»։

«Բ» Հաւատամքը յաւերժական կեանքի։ Ներկայ կեանքը համարելով նախապատրաստական և փորձնական միջոց։

Ըստ Գէօթէի, որ մասոն էր.- «Մասոնների նպատակն է անհատական կատարելագործման միջոցներով կատարելագործել մարդկութիւնը»։

Մասոնականութիւնը քրիստոնէական հաւատքի նման չէ խոստանում մարդկութեան երջանկութիւնը հանդերձեալ աշխարհում և ոչ էլ ընկերվարական վարդապետութեան՝ նիւթական ուժերի զարգացման ու դասակարգերի կռուից ու պայքարից ստեղծուած մարդկային արքայութիւնը՝ այլ առաջնորդում է մարդկային զարգացման և ինքնակատարելագործման ճամբան, առանց խոստումի, քանի որ մարդ-

կային կեանքը շարունակական բարեշրջումների է ենթարկուած և երբեւէ հնարաւոր չէ հաշտուել, որ մարդկային միտքը սահմանափակուի որոշ մի վարդապետական դաւանանքի շարունակական ուսմունքներով: Ըստ իրենց, դեռ եւս յաւիտենական ճշմարտութիւնը չէ գտնուած:

Միջին դարերի քրիստոնէական տաճարներ կառուցող հիմնադիրների արհեստակցական լեզուն և խորհրդանիշները, յետագային կը փոխարինուի մտազննական ազատ-որմնադրական իմաստ ունեցող նշանակութիւններով, և կը բացատրուի հետեւեալ՝ նման մի լուսաբանութեամբ, որ «Մասոնականութիւնը կամ ազատ-որմնադրութիւնը, ըստ իր փիլիսոփայական ըմբռնումներին էլ, խորհրդանշանային բնոյթ է կրել: Նրա համար չը կայ ոչ մի բան, որ լինէր յաւիտենական իր անշարժութեան մէջ: Նա ընդունում է Յոյն Հերաքլիտի "ամէն ինչ հոսում է" խոր փիլիսոփայական միտքը: Ոչինչ անշարժ, ոչինչ վերջնական. մշտական է միայն փոփոխումը»:

Նախ քան անցնել Անգլիայում վերակազմըւած ներկայի մասոնական համաշխարհային շարժման, կարեւոր է նաեւ մի քանի խօսքով անդրադառնալ աւանդական կամ առասպելական պատմականին:

Սողոմոն իմաստունի տաճարի կառուցման ընթացքին, իբրեւ թէ գաղտնի որմնադիրներ ի կազմակերպութեան ներկայացուցիչը՝ Հիրամ Աբիֆֆը (Hiram Abiff) կը յայտարարէ, որ որեւէ որմնադիր մահը պիտի գերադասէ՝ քան իրենց

կ'անուանէին ազատ-որմնադիրներ:

XVI-րդ դարի վերջերին մասոնական խիստ արհեստական օթեակները չունեցան նախկին եռու գեղը, յատկապէս Բողոքական Բարենորոգումները՝ վնասելով շինարարութեան, իրենց օթեակները դարձնելով աւելի խորհրդանշական քան թէ գործնական: Իրենց միութիւնների մէջ կ'սկսեն ընդունել յայանի ուսեալներ և բարձր պաշտօնեաներ, որոնց կ'անուանեն «ընդունուած մասոններ»:

Ժամանակի ընթացքին, մինչեւ 1700 թիւը, մասոնական անդամները զանազան պատճառներով կը յուսախաբուեն և կը ցրուեն: Լոնդոնում կը մնայ միայն մի քանի օթեակներ:

Վերակազմուած Մասոնականութիւնը

Երեք անուանի Դոքտորա տիտղոսներ ունեցող անգլիացի բողոքական պատուելիներ, Desaguliers, James Anderson, George Payne-ը, Յունիս 24, 1717-ին, Լոնդոնի Apple Tavern-ում, միացնելով անցեալից վերապրող չորս «եղբայրական որմնադիրներ»ի օթեակները, կը հիմնադրեն «Grand Lodge of England»: Հիմնադիրներից, Dr. James Anderson (1684-1739), Scotch Presbyterian, կը խմբագրի «Մահանադրութեան Գիրք»ը, որ 1723-ին կը հրատարակուի, իսկ երկրորդ բարեփոխուածը՝ 1738-ին: Չնայած սահմանադրութիւնը մնում է իբրեւ մի հիմնական վարկածական կանոնադրութիւն, բայց և այնպէս, անգլո-սաքսոն երկրներում լինում է փիլիսոփայական բարեփոխումներ, յատկապէս ներմու-

ծելով կրօնական ըմբռնումներ:

Մահմանադրութիւնը՝ յատուկ յօդուածով կը յայտարարէ որ օթեակը պիտի որդեգրէ կրօնական հետեւեալ ըմբռնումները՝ «Որեւէ Որմնադիր երախտապարտ է իր Կոչման՝ հնազանդելու Բարոյական Օրէնքին և եթէ ճշգրտօրէն ըմբռնել է Արուեստը, երբէք չը պիտի դառնայ մի յիմար Անաստուած կամ էլ անկրօն ազատամիտ: Թէեւ հնադարեան ժամանակներում մասոններին պարտադրուած էր, որ իւրաքանչիւր երկրի մէջ համաձայնելու այդ Երկրի կամ Ազգի որեւէ կրօնական ըմբռնումներին համակերպուելով, այդ ու հանդերձ ներկայիս աւելի նպատակաշարմար է որ նրանց պարտաւորեցնել այն կրօնը, որ ամէն մարդ համաձայն է՝ լինելով լաւ Մարդ և անկեղծ կամ Յարգելի ու Հաւատարիմ, ձգելով որ, իրենց մասնաւոր կրօնական ըմբռնումները պարփակուէ իրենց մէջ...»:

Պարզ է որ հնադարեան ժամանակներում կրօնը Կաթոլիկութիւնն էր, որ ստեղծուած էր ամբողջ Եւրոպայում, բայց չէր կարելի ընդունել որ ամէն անհատ համաձայն է այսպիսով առիթ տրուեց, որ թէ Հրեաները, թէ Մահմեդականներն և թէ որեւէ աստուածապաշտ անդամակցելու մասոնական օթեակներին, այն ենթադրութեամբ որ միայն անաստուածապաշտների մոտքն է արգիւրուած: Հետաքրքիր է, որ վերոյիշեալ կանոնադրական յօդուածով, վերակենդանացում է Հրէական մտածելակերպը՝ որ օթեակներում պիտի ազատ զգան, յատկապէս որ Հիւրամ Արիֆֆ լեզենդը կառուցուած էր Հին և ոչ թէ Նոր Կտակարանի ըմբռնումով և Արհեստը իր եզրաքանութեան (Craft terminology)


գաղտնի կապի նշանաբանը՝ (password) քողագերծել, և ինքն էլ այդ պատճառով կը նահատակուի: Մի ուրիշ պատմաբան Օլիվըրը (Oliver), Աղամին համարել է մասոնական առաջին օթեակի Մեծ Վարպետը: Ըստ իր՝ սկզբնական մաքուր մասոնականութիւնը այլասերուեց Բաբելոնի աշտարակի շինարարութեան ժամանակաշրջանում և վերակենդանացաւ ու սրբագործուեց Յովհաննէս Մկրտիչով: Քանի որ նա լոյսի նախակարապետն էր: Կայ նաեւ հետեւեալ ենթադրութիւնը, որ իրենք ժառանգորդներն են Յունաստանի «Dionysiaks»-ի և Հռոմի «Collegium Mariorum»-ի որմնադիրների, որոնք կոչուում էին ազատ-որմնադիրներ, նաեւ Հրեայ Քաբալիստներ (kabbalists):

Մասոնական պատմական սկզբնաւորութեան շուրջ կան մի քանի իրական յիշատակութիւններ. աւելի իրական է թուում միջին դարերի շարժումները, յատկապէս Անգլիայում և Գերմանիայում: Գերմանիայի որմնադիրների թիւը հաշուում էին 600-800-ի շուրջ, որոնց մէջ մաս էին կազմում արհեստաւորները, ինչպէս քարտաշներ, քանդակագործներ, հիւսններ, եւայլն: Նրանք պայմանաւորուում էին վարդապետների կամ զանազան հոգեւորականների հետ կառուցելու տաճարներ և եկեղեցիներ:

XIII-րդ դարում արդէն անկախ մարմիններ էին Քոլոյնում, Վիէննայում, Զիւրիխում, նաեւ ուրիշ շրջաններում: Բոլորն էլ ունէին իրենց օթեակները: Յենուած գաղտնապահական խիստ սկզբունքների վրայ, ամէն մի օթեակ բաղկացած էր լինում եօթ անդամներից: Իրենք, իրենց

մեծ մասը փոխ է առած եղել Հիբրու լեզուից: Առեւին, մասոնական խորքը ընդգրկում է այն մտածելակերպը, որ մարդկութիւնն ենթարկուելով բազմաթիւ կորուստներ, վերջ ի վերջոյ պիտի իրեն վերագրանէ: Իբրեւ փոխաբերական՝ վերագրում է Սողոմոնի Տաճարին և Հրեայ ազգութեանը:

THE MASONIC STRUCTURE





*George Washington
b. February 22, 1732
d. December 14, 1799*

*Initiated November 4, 1752
Frederichsburg, VA*



*George Washington
1732-1799*



*King Edward VII
Grand Master (England)
1874-1897*

*The design of the apron
has remained practically
unchanged through the years*



*Benjamin Franklin
1706-1796*

2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՍՈՆՆԵՐԸ

Մասոնական զանազան օթեակներ ինչպէս դարձան համաշխարհային գաղտնի քաղաքական վտանգաւոր ուժերից մէկը:

Ամերիկեան Միացեալ Նահանգների դէմքերից Quincy Adams-ի գրուածքը իբրեւ փաստաթուղթ թարգմանաբար կը ներկայացնենք. — «Ես պատրաստ եմ Աստծոյ և մարդու առաջ, լրիւ կերպով բացայայտել, որ մասոնական երդումը, պարտաւորութիւնները և պատիժները անհնար է հաշտեցնել Քրիստոնէական կամ երկրի բարոյական օրէնքների հետ»: Մի երկրորդ դէմք՝ նախկին մասոն Filmore-ի ազդարարութիւնը՝ «Մասոնական եղբայրական համայնքը ոտնահարում է մեր իրաւունքները, պարտութեան է մատնում արդարութեան ղեկավարութիւնը, արհամարհում է որեւէ կառավարութիւն՝ որ իրենք իշխողի դերի մէջ չեն»:

Տիւմորը Մ. Նահանգների 13 նախագահներից մէկն էր, որ զգուած օթեակից կը հրաժարուի: Մասոն նախագահներ էին՝ Washington, Jackson, Mason, Polk, Andrew Johnson, Garfield, McKinly, Theodore Roosevelt, Taft, Harding, Franklin D. Roosevelt, Truman, Teddy Roosevelt, փոխ-նախագահութեան

ընթացքին կ'անդամակցի օթեակին: Աւելի ուշ, առանց մասնակցելու անդամակցական ծիսակատարութեան, հետեւեալները մաս կը կազմեն օթեակին. — General Marshall և MacArthur: 1948-ից յետոյ մասոն նախագահական թեկնածուներ ասպարէզ չեկան: Թրումանը վերջին մասոն նախագահն էր, որ անցեալում եղեր էր Միգուրի Օթեակի Մեծ Վարպետը:

1948-ին կատարուած ուսումնասիրութեան հիման վրայ Մ. Նահանգների 48 նահանգապետներից 34-ը եղել են Մասոններ, որոնցից 13-ը ունեցել են 32-րդ և մնացեալը 33-րդ աստիճաններ, իսկ Սենատի պատգամաւորներից, 55-ը մասոնական եղբայրներ են համարուել: (Տես էջ 7՝ մասոնիկ կառույցի լուսապատճէնը):

Զգալու համար Մ. Նահանգների Մասոնականութեան ահռելի ուժը, որին մինչ 1950-ը՝ հետեւեալ համբաւաւոր և ուսեալ դէմքերը անդամակցել են օթեակներին:

Benjamin Franklin, Voltaire, Paul Revere, Alexander Hamilton, Patrick Henry, Lafayette, John Jacob Astor, Mark Twain, Henry Ford, Will Rogers, General Pershing, Henry Clay, John Philip Sousa, Bolivar, Sam Houston, Irving Berlin, Charles Lindberg, Ku Klux Klan's (KKK) Benedict Arnold, Aaron Burr-ը և իրենց ղեկավարութեան մեծամասնութիւնը:

Համաձայն Շիքագոյի Մասոնիկ ուսումնասիրութեան գիտնական Gen S. Smith-ի, հնարաւոր է եղել ստուգել, որ Միացեալ Նահանգների Անկախութեան Հրովարտակի 55 ստորագրողներից վեցը՝ եղել են օթեակների անդամներ: Ուրիշ գրողներ կը հաշուեն 40-45ը, որ կազմում են մեծամասնութիւնը:

Առաջին նախագահ Ջորջ Ուոշինգտոնը 1752-ին կ'անդամակցի Virginia State's Fredericksburg Lodge No.4-ին: Որոշ պատմաբաններ չեն ընդունել որ երբեւէ Ջորջ Ուոշինգտոնը և Բենջամին Ֆրանկլինը անդամակցել են մասոններին, ըստ իս, կարելի է վերագրել որ մի քանի պատմագիրներ չեն ուզեցել իրենց հերոսներին, մասնաւորապէս անկախութեան առաջին նախագահին կամ հիմնադիրներին արժէքազրկել:

Benjamin Franklin (1703-1790) 1731-ին կը լինի առաջինը անդամակցելով մասոնական Մեծ Օթեակին և շատ արագ կը պարգեւատրուի բարձր աստիճաններ վաստակելով: Նա յայտնի քաղաքական գործիչ էր և դիւանագէտ, նաեւ գիտնական և գիւտարար: Ամենից կարեւորն է յիշատակել որ նա և ուրիշ կըթուած մասոններ, մամուլի միջոցով հրատարակչական-քարոզչական արշաւով, նեցուկ կը կանգնեն յայտնի The Boston Tea Partyի գործադրմանը՝ Դեկտեմբեր 16, 1773, և կարելի է ասել որ այդ պատահարը նպաստեց ամերիկեան յեղափոխութեան կազմաւորման, որ տեւեց 1775-1783: (Սոյն կապակցութեամբ տես նաեւ հայկական բաժնում):

Ամերիկեան կաթոլիկ մասոնները ձեռնարկել են նպաստաւոր շինարարական գործեր, ինչպէս ազատ որմնադիր Ջեմս Հոբանը, Ա. Մ. Նահանգների կոնգրէսի շէնքի նախագիծը կը կազմէ, որ այսօր կը կոչուի Capitol Hill, (District of Columbia's Federal Lodge No. 1)-ի ղեկավար հիմնադիրը: Բոլորից հետքերթրականը, տես Ջորջ Ուաշինգտոնի լուսանկարը, որ մասոնական համագգեստով և հովանաւորութեամբ Մերիլան-

դի Մեծ Օթեակի՝ Քափիթուլի հիմնարկէքի հիմնաքարը կը զետեղէ:

Միացեալ Նահանգներում մասոնական կազմակերպութիւնը ամենասիրուած և յարգուած գաղտնի ուխտերից մէկն էր համարւում և երբեւէ չէին ակնկալում որեւէ խափանարարական գործունէութեան կարելիութիւն: Մասոնները 1812 թուի պատերազմի հերոս William Morgan, 1826-ին կ'առեւանգեն և մահուան կը դատապարտեն, որովհետեւ իբրեւ հիասթափւած մասոն, իրենց գաղտնիքները չը պիտի դոսեւորած լինէր: Չնայած իր մարմինը չը գտնուեց, բայց այդ արարքի պատճառով մասոնական շարժումը ունեցաւ ծայրայեղ անկում: Բաթալիա՝ Նիւ Եորքում, 38 ոտք բարձրութեամբ, Մորգանի արձանը կը կառուցուի՝ ի յիշատակ վիրջինիոյ Նահանգի 1812 պատերազմի հերոսի: Նա նաեւ յայտնի անձնաւորութիւն էր իբրեւ ազատութեան գրողի, տպագրիչ և ճշմարտութեան արտայայտիչ:

Ժամանակի ընթացքին հակամասոնական շարժումը կը մոռցուի և ուրիշ նման գաղտնիացած ուխտերի հետ, XIX դարի ընթացքին կը վերակազմուի և նորէն կը դառնայ յարգի և կարեւոր շարժումներից մէկը:

Համաձայն ամերիկեան 1958-ի վիճակագրական տուեալների, համաշխարհային Ազատ-Որմնադիրների օթեակների 80 տոկոսը գտնուում էր Միացեալ Նահանգներում, որոնց մէջ մաս չեն կազմում ոչ-լրիւ կամ համակիր զանազան գաղտնի եղբայրական համայնքներ, որ որդեգրած են եղել մասոնական կառույցները՝ ինչպէս

Knights of Columbus-ը և Ջեզուիթները, որ ընդհանրապես չեն համարուել իբրեւ մաքուր կրօնական համայնք: Միացեալ Նահանգների բնակչութեան ինը տոկոսն է միայն արձանագրուած մասոնական, որոնց մեծամասնութիւնը բաւարարուելով զուտ հասարակական և կեր ու խումի նկատառումներով՝ հակապատկերը իրենց եղբայրներին: Հանդէպ կաթոլիկութեան երբեմն միայն կը ցուցաբերէին ատելի արտայայտութիւններ: Մասոնականներն շատ անգամ անւանուել են իբրեւ դանակ-պատառաքաղի մասնակիցներ՝ չհետաքրքրուելով մասոնական գաղտնուսոյց փրկիսոփայական երեւոյթներով: Օթեակը դարձել էր պարզապէս փոխադարձ հակակրօնական հանդիպումների միջավայր: Ընդհանրապէս, կաթոլիկութեան հանդէպ ունեցել են բարիացակամ վերաբերմունք՝ մասնակցելով նրանց բարեգործական ձեռնարկներին անգամ՝ իրենց երախաներին ուղարկելով նրանց ծխական դպրոցները և համալսարանները: Նրանք, միայն մեղադրում էին Պապերին, որ իրենք լինելով Անգլո-Սաքսոն մասոնականութեան հետեւորդներ, իրենց պիտի զատէին Թրանսական Grand Orientի հետեւորդներից:

Յաջորդական մի շարք անգլո-սաքսոն և ֆրանսական գրանդ-օրիէնթի վերաբերեալ վաւերական համաշխարհային տուեալները շատ կարեւոր են՝ երբ անդրադառնանք հայկական բաժնի ուսումնասիրութեան:


Նախ քան անցնելը եւրոպական ցամաքամասի մասոնական արագ ճիւղաւորման և իրենց ընդլայտակեայ գործունէութեան, կարեւոր է մի

քանի խօսքով անդրադառնալ 1700-1900-ական պատմական տուեալներին, որոնք նպաստելով հանդերձ մասոնական վերելքին նաեւ առիթ ստեղծեցին ենթարկուելով շատ անգամ դաժան և ատելավառ հալածանքներին:

Ա - Ապրիլ 28, 1738 Clement XII Պապից սկսած, կաթոլիկ եկեղեցին մինչեւ 1802-ը, շարունակական կոնդակներով արգիլեւ էր իր հաւատացեալների մասնակցութիւնը մասոնական օթեակներին այն պատճառաբանութեամբ որ քրիստոնեան չէ կարող բաժանել իր հաւատարմութիւնը և նուիրումը Յիսուս Քրիստոսի և նրանց Մեծ Տիեզերքի Ճարտարապետ՝ աստծու միջեւ: Նմանապէս, մի շարք արեւելեան Օրթոդոքս - ինչպէս նաեւ՝ Պոլսի Հայոց Պատրիարքարանը, որ յետոյ պիտի անդրադառնանք - և եւրոպական համայնքներ եւս կ'ունենան նման մօտեցումներ:

Բ - Բողոքական կարեւոր դաւանանքներ, ինչպէս, Մեթոդիստ, Բաթիստ, Բրէզբրիթէրեան և էպիսկոպոլեան, երբեւէ չարգիլեցին իրենց հաւատացեալների մասնակցութիւնը Օթեակներին, այն մեկնաբանութեամբ, որ նրանք եւս հաւատում են Աստծուն և հոգու անմահութեանը: Ընդհանրապէս - 1717-ից սկսած մինչեւ օրս - բարձրաստիճան բողոքական պատուելիներ են եղել ազատ-որմնադիրների հիմնադիրները, նմանապէս՝ հայկական օթեակները:

Գ - 1877-ին ֆրանսական Գրանդ Օրիէնթը, ընդմիջտ կը բաժանուի Անգլո-Սաքսոն մասոնականութիւնից՝ ընդգրկելով թէ հակակրօնական և



թէ հակակղերական որեւէ դաւանանքի պատկանող համայնք կամ հաւաքականութիւն:

Գ- Ընդհանրապէս Բրիտանական գաղութներում, պապական կոնդակները չունեցան ուժեղ և կտրական գործադրումներ՝ իր մէջ առած հեռաւոր Ամերիկաները: Քսաներորդ դարու նման գոյութիւն չունենալով արագ հաղորդակցական միջոցներ, ինչպէս օդայինը, բացի դայ, չկային անթելի, շարժանկարի կամ հեռատեսիլի միջոցով քարոզչական ազդարարութիւններ, ուրեմն որեւէ թերթի, ամսագրի, պարբերականի կամ թուղթիկի առաքումը ամիսներ էր տեւում: Կային նաեւ ուրիշ պատճառներ: Այն շրջաններում որ մասոնականութիւնը խնդրոյ առարկայ չէր, կաթոլիկ վարդապետները քանի տարիներով կը յետաձգէին պապական հրահանգները: Այն պարագային երբ պատիժները և կամ հաւատաքնութեան (Inquisition) կարեւորութիւնը կոնդակների մասն էր կազմում, այդ պարագային, ըստ իրենց սովորութեան, մինչ պատիժներ զործադրութեան միջոցներ չստեղծէին՝ կոնդակները չը պիտի ազդարարուէին: Այդ դարաշրջանում երբեմն շինծու կամ կեղծուած կոնդակներ եւս կը հրապարակուէին՝ խրախուսելով հաւատացեալներին հնարաւորին չափ նըպաստելու օթեակներին:

Պարագան միանգամայն տարբեր էր Հռոմին անմիջապէս ենթակայ եւրոպական և իր անմիջական շրջանի աշխարհամասում: 1738, Clement XII Պապի և յատկապէս իր յաջորդ երկրորդ կոնդակը կը գործադրուի, որ պարունակում էր խիստ պատիժներ, ինչպէս ունեց-

ւածքի բռնագրաւում և մահ: Ամենասարսափելին տեղի կ'ունենայ Սպանիայում, որ կը շարունակուի մինչեւ 1854 թուականը, որից յետոյ նման սոսկալի հաւատաքնական պատիժներ զործադրութեան պատմականը մեր նիւթից դուրս է՝ որեւէ դէպք չը պիտի յիշատակուի:

3. ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՄԱՍՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ազատ որմնադրութիւնը Անգլիայից մուտք կը գործի Ֆրանսիա և 1721-ին առաջին Օթեակը կ'անուանուի Amitié Fraternité at Dunkerque: Իսկ Ֆրանսական անուանի Գրանդ Օրիէնթ օթեակներում գաղտնապահութիւնը խստօրէն կը գործադրուի և կ'ընդգրկէ անաստուածութեան քան թէ Անգլիական Մայր Օթեակների փիլիսոփայական մտածելակերպը: Յատկանշական է, որ Փարիզի պարլամենտը կը մերժէ վաւերացնել Պապական կոնդակը, բայց իբրեւ քաղաքավարութիւն Դուբլինում, Պապին ուղղուած՝ ներողամտութեան թերթիկ կը տպագրուի:

Նապոլիոնը ջանաց ղեկավարել թէ Եկեղեցին և թէ Մասոնական Օթեակները: 1805-ին, իր եղբայր՝ Ժոզէֆին կը նշանակէ իբրեւ Գրանդ Օրիէնթի Մեծ Վարպետ: Այդ ժամանակաշրջանում օթեակների մասնակիցների մեծամասնութիւնը արիստոկրատներ էին, բայց ժամանակի ընթացքին առիթ ստեղծւեց որ փոխարինւեն վաճառականներով, կառավարական վերնախաւերի պաշտօնեաներով, թերթերի թղթակիցներով և փաստաբաններով: Նապոլիոն Երրորդը, Marshal Magnan-ին հրահանգեց որ մէկ օրուայ ընթացքում ուսուցէ մասոնականութիւնը և ար-

ժանանայ 33-րդ աստիճանին, որպէսզի նշանակուի Գրանդ Օրիէնթի Մեծ Վարպետ և կը յաջողի:

1877-ից, McMahon կառավարութեան անկումից մինչեւ երկրորդ համաշխարհային պատերազմը, Ֆրանսական պետական սանձը կը գտնուէր Գրանդ Օրիէնթի ղեկավարութեան ձեռքը: Նրանք ցրել տուեցին բոլոր կրօնական Ուխտերը, շատերին էլ երկրից արտաքսելով: Փակուած յայտարարեցին բոլոր կրօնական դպրոցները:

Տխրահռչակ կոչուած, affaire des fiches —որն է Grand Orient de France գաղտնի գործունէութեան արխիւը յանկարծ կը բացայայտուի՝ երեւան գալով բարձրաստիճան զինւորականների ցանկը: Կը պարզուի՝ նրանք որոնք մասնակցում էին Պատարագին կամ իրենց երեխաները յաճախում էին կրօնական դաստիարակչական կենդրոններ և կամ իրենց ենթակայ ջոկատներին խրախուսում էին որդեգրել կրօնական ըմբռնումներ, դրանց անուանացանկը տրամադրւում էր զինւորական ղեկավարութեան, որոնց որոշմամբ այդ զինւորականներին տրւում էին աննշան պաշտօններ: Կը պարզուի, որ Գրանդ Օրիէնթը, 1901-1904-ի ընթացքին, աւելի քան 18000 զինւորականների արձանագրած են եղել Սեւ Ցանկի մէջ: Բացայայտուելով մասոն փոքրամասնութեան ուժը ամբողջ Ֆրանսայում՝ պատճառ կը դառնայ Ֆրանսական բանակի բարոյալքման: Չնայած որ 1914-ին, մի ուրիշ մասոնական մրցակից՝ Grand Lodge Nacional-ը կը հիմնադրուի՝ որդեգրելով անգլիական ըմբռնումները և որ Անգլիայից ճանաչում կ'ստանայ՝ բայցեւայնպէս,

Marshal Petain-ը բոլոր մասոնական օթեակները փակուած կը յայտարարէ: Այսպիսով Ֆրանսան կ'ազատուի մասոնական կափանքներից: Մասոնականութիւնը, որպէս գաղտնի կազմակերպութիւն կը շարունակուի բայց այլեւս չի կարողանայ դառնալ պետական ղեկավար մի ուժ:

Ըստ Ա. Ֆէնէրճեանի՝ 1950-ական թուերին, Ֆրանսայում գոյութիւն ունէին երեք ազատ որմնադրական օթեակներ:-

Grande Orient de France, Grande Loge de France, Grande Loge Nationale: Առաջին երկուսը չը ճանաչուեցին Անգլիական և Սկոտլանդական մեծ օթեակների կողմից, քանի որ Սահմանադրութեան մէջից հանուած էին «Տիեզերքի Մեծ Ճարտարապետի գոյութիւնը և հոգու անմահութիւնը»:

Grande Loge Nationale, 42 Rue Rochecouart, La Confiance-ի Օթեակում քանի հայեր կը մասնակցէին: Ճարտարապետ Արմէն Յակոբեանի անդամակցութեամբ, շրջապատուած թէ հայ պաշտօնեաներով և բազմաթիւ ֆրանսացի և անգլիացի հիւրերով, հայերէնով կը կատարուի հայերի անդամակցութեան ծիսակատարութիւնը: Հայերի մասնակցութիւնը առիթ է ստեղծել հայութիւնը ճանաչեցնլու օտարներին:

4. ՄԱՍՈՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

1737-ին Համբուրգում կը հիմնուի առաջին գերմանական օթեակը և Մեծն Ֆրէդրիկը որոշ ժամանակ ձեւականօրէն կը մասնակցի: Goethe, Mozart, Hayden, Fichte, XVIII-րդ դարու Երդուեալ մասոնականներ են համարուել: Յաջորդ դարում Պրուսական զինուորական սպաների մեծամասնութիւնն և Hohenzollen դինաստիայի մի քանիսը կ'անդամակցէին օթեակներին: Մի առ ժամանակ ունեցել են ութ անկախ մեծ օթեակներ: Օրթոդոքս Լութերականները դժուարութեամբ էին համակերպուում Օթեակների գոյութեանը, իսկ դատապարտուում էին կաթոլիկներից և արհամարում էին կոմունիստներից և սոցիալիստներից: Պրուսիայից և Բերլինի «Քրիստոնեայ» օթեակները ըստ աւանդութեան՝ հակասեմիտիկ էին: Համբուրգի և Ֆրանկֆուրտի «Մարդասիրական օթեակներում հրեաների մուտքը արգելւած էր: Հիթլերը երրորդ Ռայխում ոչնչացրեց մասոնականներին: Յետ պատերազմեան շրջանում, ամերիկեան զինուորականները նեցուկ հանդիսացան գերման մասոնական վերակազմութեանը: 1958-ին, Արեւմտեան Գերմանիայում շուրջ 14000 մասոններ խմբուած էին 250 օթեակներում:

Մասոնները Եւրոպայի զանազան երկրներում

Սկանդինավիան թագաւորական հովանաւորութիւնը՝ նման Անգլիայի, մասոնական շարժման պարզեւեց հեղինակութիւն։ Նրանք դարձան Մեծ Վարպետներ։ Օթեակներին մասնակցում էին աւելի ընտրեալներ՝ քան էր Անգլիայում կամ Ամերիկայում։ 1958-ին, Նորվեգիան, Շվեդիան և Ֆինլանդիան, ունէին յարաբերաբար 10000, 23000, 250 մասոն անդամներ։ Չունեցան համաշխարհային ճանաչում։

Նշանակալից դէպքերից մէկն է Բելգիայի օթեակը, որ կը հիմնուի 1770-ին և Ֆրանսական ղեկավարութիւնից կը բաժանուի 1814-ին, բայց, առաջին անգամ, 1834-ին, Բրուքսէլում կը հիմնեն՝ Եւրոպայի անդրանիկ մասոնական համալսարան առանց որեւէ պետական կամ եկեղեցական օժանդակութեան։ Կը դառնայ մրցակիցը Լուվէյնի կաթոլիկ համալսարանի, նաեւ կը պայքարի նրանց դպրոցների դէմ։ Նկատելի ուժ կը դառնան պետական ղեկավարութեան մէջ։ Թագաւորական ընտանիքը լինելով կաթոլիկ երբեւէ չէ հովանաւորել մասոնական օթեակներին։

Հոլանդական the Dutch Grand Orient, 1758-ին կը կազմուի և կ'ունենայ մտերիմ յարաբերութիւններ թէ՛ Անգլիոյ և թէ՛ Միացեալ Նահանգների Մեծ Օթեակների հետ։ Ունեցել են 5000 անդամներ։

Աւստրիայում Ֆրանսիս Առաջինի աջակցութեամբ կը կազմուի Վիէնայի օթեակը, բայց Benedict XIV Պապի հրամանով՝ Թագուհին կը հրահանգի բռնի ուժով ներխուժել օթեակը և

ցրել անդամներին։ Օթեակների գոյութիւնը կ'արգիլուի։

Սպանական Գրանդ Օրիէնթը Ջոզէֆ Բոնափարթի իշխանութեան ժամանակ կը ճիւղաւորուի։ Տասնամեակներ կը ձեռնարկեն հակակղերական գործունէութիւն, որ կը նպաստի քաղաքական խլրտումների զարգացման։ Ֆրանկոյի ժամանակ նրանց գործունէութիւնը խստիւ կ'արգիլուի, որից յետոյ մասոնները կ'որդեգրեն ընդլայնակեայ գործունէութիւն։

Փորթուգալիայի մասոնները, 1910-ին կը յաջողեն հաստատել հանրապետական պետականութիւն՝ խմբագրելով շատ խիստ հակակրօնական, հակակղերական, հակաեկեղեցական Սահմանադրական Կանոնադրութիւն։ Առանց պետական թոյլտուութեան որեւէ բառ, փաստաթուղթ, կոնդակ, որեւէ սեմինար, դաստիարակչական եւայլն, արգիլուում է։ Որեւէ Ջէզուիթ կամ ուրիշ վանական աղանդների կամ կրօնական միաբանութիւնների մոտաջր արգիլուում է, նրանք որոնք ներկայում գտնուում են երկրում, բնիկ կամ օտարերկրեայ՝ կ'արտաքսուեն։ Բոլոր ունեցուածքները և կալուածները կը դառնան պետական սեփականութիւն։ Երբ պետական ղեկը կ'անցնի Սալազարին՝ մասոնական ուխտը կը համարուի անվավեր։

Իտալիայում երկու տարբեր յիշատակութիւններ կան՝ երկու հարիւր թուերի տարբերութեամբ, 1512-ին Ֆլորենսում և նորից 1733-ին, (The Trowl), (Company of Trowl) անուններով մասոնականութիւնը մոտաջ է գործել Իտալիայում։ Charles II, 1751, Ferdinand IV, Թագաւորու-

թեան Տէջ, երկու տարբեր հրովարտականներով կազմուել են մասոնական օթեակներ, բայց վատիկանի միջամտութիւնների պատճառով երկար կեանք չեն ունեցել: 1814, 1860 թուերի ընթացքում, Carbonari և Երիտասարդ Իտալիայի յեղափոխութեան ժամանակ մասոնականութիւնը կը նսեմանայ: Փալմերոյում, 1860, Garibaldi Mazzini, Cavour-ը կը լինեն Գրանդ Օրիէնթի հիմնադիրներից: Հռոմում, 1872-ին, Մուսոլինիի յուղարկաւորութեան ընթացքին կը նկատուի մասոնական դրօշակներ:

Մուսոլինին իր պետականութեան կազմաւորման շրջանում որոշ թիւ մասոններ մասնակից դարձրեց, բայց յետոյ խստիւ արգելեց բոլոր օթեակների գոյութիւնը: Գարիբալդիի յուշարձանի վրայ զետեղուած մասոնական խորհրդանիշերը փոխարինուեցին Փաշիստականով: Պատերազմից յետոյ օթեակների գործունէութիւնը՝ իբրեւ Մեծ Օթեակ կը վերակազմուի: 1958-ին, զանազան ուխտերի անուամբ կ'ունենան 120 օթեակներ:

Յունաստանում, Օրթոդոքս Եկեղեցիի ուժեղ հակառակութեան պատճառով, օթեակների ճիւղաւորումը կը դժուարանայ և հազիւ կ'ունենան շուրջ յիսուն օթեակներ: Նացիների տիրապետութեան ժամանակ օթեակների գոյութիւնը կ'արգիւրուի: Պատերազմից յետոյ ամերիկեան օգնութեամբ նոր օթեակներ կը հիմնուեն: Անգլիայում աքսորուած Յունաստանի Զորջ թագաւորը հակառակ իր եկեղեցու արգելքին, կ'անդամակցի մասոնական օթեակին: Յունական օթեակները կը նուիրուեն քաղաքական գործունէութեան: Մեծ Օթեակը շարադրուած յատուկ

բովանդակութեամբ՝ ուղղուած բոլոր օտար երկիրների Մեծ Օթեակներին, կ'առաջարկէ, որ միասնաբար ճնշում բանեցուի պետական իշխանութիւնների վրայ, որպէսզի հնարաւորութիւն ստեղծուի, որ Կիպրոսը վերադարձուի Յունաստանին: Անգլիական Մեծ Օթեակը, Սկովտիական և Իրլանդական Մեծ Օթեակների հետ, կատաղի շարադրուած բովանդակութեամբ՝ ուղղուած Յունական Մեծ Օթեակին՝ ազդարարելով որ խափանել են (no politics)-ի սկզբունքը:

(Մանօթութիւն: Ինչպէս գիտենք, Կիպրոսը Թուրքիոյ կողմից կը նուիրուի Անգլիոյ երբ Բերլինի Կոնֆերանսում, Սան Ստեֆանոյի դաշնագրութիւնը կը բեկանուի, յօդուած 16-ը փոխարինուելով 61-ով՝ ջուրը նետելով պարտադրուած հայկական բարենորոգումների գործադրումը: Անգլիական կայսրութեան այդ կեղտոտ պատմական ակտը ոչ թէ միայն մենք հայերս, յոյներն անգամ չը պիտի մոռացութեան տան):

5. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌԸ ԵՒ ՄԱՍՈՆ ՕԹԵԱԿՆԵՐԸ

Հայ մասոնների թիվը որ անդամակցել են օտար օթեակներին հնարաւոր չէ եղել ճշտել, քանի որ հայկական օթեակ չէ համարուել: Չը նայած որ զգալի թուով ունեցել ենք մասոնականներ, որ օտար օթեակները յիշատակել են հայկականը շահագործելու մասնաւորապէս միջին և հեռաւոր արեւելքում, կամ քաղաքական կամ առեւտրական միտումներով: Բրիտանական, Հոլանդական և Ֆրանսական օթեակների մասնակցութեամբ, կարելի է ասել, որ մեր կամքից անկախ, եղել ենք դերակատարներ վերոյիշեալ երկիրների կայսերական սահմանների ընդարձակմանը և կայունութեանը նպաստելով: Հայերն արդէն, Հնդկաստանում և թէ ինդոնէզիայում և իրենց անմիջական երկրամասերում յարգի և վստահելի արժէքաւոր քաղաքացիներ էին համարուում յատկապէս որ, որեւէ մտաւախութիւն չկար որ «հայկական հարց» գոյութիւն ունենար:

Շատ կարեւոր է թուցիկ ակնարկով նշել, ինչպէս կառուցուեց Սփիւռքը, որ իբրեւ առեւտրականներ պիտի նաեւ շահագործուէին մասոնական օթեակների անդամակցութեամբ:

Հայ արքայական, նախարարական և իշխանական տոհմերը ջախջախուած և տասնորդուած, ցրոււմ են զանազան վայրեր և կամ ապաստանում արտասահման: Վրաստանն ու Բիւզանդիոնը մի առ ժամանակ պատսպարում էին հայ մեծատուններին ինչպէս նաեւ Սիւնիքի և Արցախի լեռնային և անմատչելի շրջանները:

Պարսից Շահ Աբբաս Առաջինը, (1604-05), 300-500 հազար հայեր, արեւելեան և արեւմուտեան Հայաստանից գաղթեցրեց Պարսկաստան: Մեծ մասը բնակեցրեց Իսֆահան և իր շրջակայքում: Կենդրոնական քաղաքը Իսֆահանում կոչուեց Նոր-Ջուղայ: Հայ առեւտրականներին շնորհուեց արտօնութիւններ, որոնք իրենց ձեռքում կենդրոնացրին Պարսկաստանի արտաքին առեւտուրը: Գործարքներ էին կատարում Անգլիոյ, Հոլանդիոյ, Ջենովայի ու Վենետիկի, Ռուսիոյ, Թուրքիոյ, Հնդկաստանի և Ասիական երկրների հետ: Մի շարք հայեր ծառայեցին պետութեան մէջ որպէս խորհրդականներ, թարգմանիչներ, դեսպաններ, զինուորականներ եւայլն:

Ըստ Ֆ. Մաքլերի՝ Շահ Աբբասի հայերի տեղահանութեան կապակցութեամբ՝ «Իր դրամագուրկ և առեւտուր չունեցող երկիրը կանոնաւոր հիմքերի վրայ դնելու համար» (Revue des Etudes Armeniennes-1927):

Յաջորդ թագաւորներ՝ Շահ Սէֆին և Շահ Աբբաս երկրորդը (1629-1666), պարսկահայերի նկատմամբ վարում էին համեմատաբար բարիացակամ քաղաքականութիւն: 1666-1694՝ Շահ Սուլէյմանի և Շահ Սուլթան Հուսէյնի՝ 1694-1722

Թագաւորների իշխանութեան ընթացքին, Սաֆաւեան տոհմը գործադրեց զգուշի հակահայ քաղաքականութիւն: Ըստ «Պատմութիւն Նոր Զուղայի», գործադրուած էր չափազանց հարկապահանջութիւն, կեղեքում, յափշտակութիւն, տուգանք, վաժաշոտ բռնակալութիւն, հաւատքի ուրացում և ուրացողների ժառանգական իրաւասութեան օրէնքը: Բացի թագաւորական նաեւ արքունի ծառաների հարստահարութիւնները, ազգայինների մատնութիւնը, անիրաւ վարձ և փոխ առած դրամի տոկոսը, բնակիչների յուսալքումը:

Ամենադաժան և անմարդկային հակահայկական կեցուածքը եղաւ Նադեր Շահի թագաւորութեան՝ 1736-1747 : 1747-1748-ի իրար անմիջական մրցակից հինգ թագաւորների ընթացքին: Այդ բոլոր դէպքերը գործադրուեցին ամբողջ Իսֆահանի շրջանի գիւղերում եւս:

Պարսկահայերի զանգուածային արտագաղթը դէպի Ասիական՝ յատկապէս Հնդկաստան և Եւրոպական երկներ XVІI-րդ դարի 70-80ական թթ. որ տեւեց, 36 տարիներ շարունակ, մինչեւ Քէրիմ խանի իշխանութիւնը: 12-հազար Զուղայի բնակիչների թիւը իջաւ 300-ի:

1752-53ին, Պօղոս Եպիսկոպոսը գրում է Յովհաննէս Սաւայանին, որ Զուղան մեծ չափով դատարկուել է բնակիչներից, «Օրհնութիւնս թըղթի հետ տեղեկացիր որ ներկայումս քաղաքի պատահարը այսպէս է՝ որ քաղաքապետ Քէրիմ խանը՝ Զանդի ազգից, շատ լաւ հանգիստ է պահում մեզ և Աստուծով շատ հանգիստ ենք քան առաջինը, բայց ինչ անենք որ գիւղում այլեւս ոչ ոք չի մնացել, բոլորը թողեցին տները և փախան, որ այլեւս տեղումս հարկ տւող չկայ»:

Մի ուրիշ կարեւոր միջադէպ և արտագաղթ:

1786-ից Պարսկաստանի թագաւորութիւնը անցնում է Ղաջարական հարստութեան: Ներքինի Աղա Մոհամմադ խանը՝ առաջին թագաւորը երբ կը տեղեկանայ որ Վրաստանի Հերակլէս թագաւորը յարաբերական կապեր է ստեղծել Ռուս Եկատերինէ կայսրուհու հետ, 1795-ին, Երեւանի Մուղանի և Շուշիի երեք գծերով կ'արշաւէ հիւսիս, արիւն և աւեր սփռելով թէ Հայաստան և թէ Վրաստան: Հերակլէսը, Թիֆլիսի մօտ կը պարտուի և կը փախչի: Ներքինի Աղա Մոհամմադը Թիֆլիս մտնելով կը հրահանգէ բնաջնջել բնակչութիւնը՝ աւերելով բոլոր եկեղեցիները: Թիֆլիսը համեմատաբար նոր էր դարձել միացեալ Վրաստանի մայրաքաղաք: Բնակչութեան երեք քառորդից աւելին հայեր էին, որոնք դարերից ի վեր 23 եկեղեցիներ ունէին: Այդ քաղաքում էին ապաւինել մեր հայ աւագանի ընտանիքները: Արիւնարբու ներքինին յաղթական մուտք կը գործէ իր նորաստեղծ մայրաքաղաք՝ Թէհրան: 1795-~~1797~~ ¹⁷⁹⁷-ին գաղթեցնելով բազմաթիւ հայեր և վրացիներ, ոմանց էլ ներքինի դարձնելով: Գերիներին կը ցրէ Պարսկաստանի զանազան շրջաններ:

Եկատերինէ կայսրուհու հրահանգով, ռուս զօրքերը կ'արշաւեն Պարսկաստան, գրաւելով Կովկասը՝ նաեւ առաջապահ մի զօրագունդով կը մտնեն Էնգէլի և Ռաշթ քաղաքները: Կայսրուհին յանկարծ կը հիւանդանայ և իր մահուան պատճառով, ռուս զօրքերը կը նահանջեն: Սոյն դէպքի պատճառով՝ Աղա Մոհամմադ խանն, որ իր առաջին արշաւանքի ընթացքին չէր յաջողել գրաւել Շուշին, այս անգամ, նորից կ'արշաւէ Ղարաբաղ,

Ջուճշուղ Մելիք-Շահնազարեանը կը վերաւորուի ու իբրեւ գերի, Շուշիի բերդի դռները բացել կը տայ և հայ հոգեւորականութիւնը զգեստաւորուած ընդառաջ կգան ներքինի վեհապետին և կ'առաջնորդեն Մելիք Ջուճշուղի՝ (պարսկերէն Ջամշիդ, այսինքն ճաճանցող)ի ապարանքը: Այդ թափօրին, Սաֆար Ալի խան անունով երիտասարդ պալատականն, ապշութեան մատնելով Աստուածածնի նկարով զարդարուած խաչ վառը շրջապատող հոգեւորականներին, ջերմեռանդութեամբ կը մօտենայ և արտասուելով կը համբուրէ Աստուածածինը: Ներկաները կռահեցին, թէ մի քանի տարի առաջ գերուած ու մահմեդականացած հայ իշխանական ընտանիքի գաւակ պիտի լինի այդ յանդուգն ու գեղեցիկ երիտասարդը:

Թագաւորն ազդուած հայերի ու մելիքների աջակցութիւնից և ընդունելիութիւնից, յատկապէս նկատի առնելով ընդէմ տաճիկների հայերի գործունէութիւնը, խոստացաւ աւելին անել, քան ինչ արել էին Շահ Աբբասն ու Նադըր Շահը: Բայց լինելով արիւնարբու անհատ, յատկապէս որ ներքինի էր, ակնկալուած էր որ յաջորդ օրը պիտի չարիքներ գործի իր պալատականների հանդէպ և ամբողջ աւագանու աչքերը պիտի կուրացնէ: Նոյն գիշերը, Սաֆար Ալի խանն երկու ուրիշ գործակիցների հետ մտնելով արքայից վրանը կը գլխատեն իրեն:

6. ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՍՓԻՌՔԸ ԵՆ The Library Archives of the Dutch Order

1605-ի և 1797-ի հայութեան բռնի տեղահանումները և համարեայ շուրջ երկու դարերի շարունակական արտագաղթերը՝ ստեղծեցին հետեւեալ ազգային եկեղեցական թեմերը ըստ «Նոր Զուղայի պատմութեան»:

«Եւ եկեղեցական կառավարութիւնը Հընդ-կաստանում կը լինի այսպէս Նախ վաղարշապատում գտնւող Հայրապետի հրամանը, որ իշխանութիւն ունի բոլոր հայերի վրայ Հայաստանում և թէ օտար երկրներում:

«Երկրորդ՝ վիճակաւոր Եպիսկոպոսը ունենայ Առաջնորդական հրամանի նամակ Հայրապետից: Նոր Զուղայի Տան վրայ և Հնդկաստանում:

«Երրորդ՝ Բասրայի աւագ երէցը հրաման ունենայ Բուշեռի քահանայի վրայ:

«Չորրորդ՝ Սուրաթի աւագ երէցը հրաման ունենայ Բոմբէյի, Ջհանբատի, Օվրակապատի և Հէյդարաբադի քահանաների վրայ:

«Հինգերորդ՝ Մադրասի աւագ երէցը հրաման ունենայ Մուշլիքադարի Նակիաթանմա,

Բաթալիայի և Փէքուի քահանաների վրայ:

«Վեցերորդ՝ Կալկաթայի աւագ երէցը հրաման ունենայ Ջիշրայի, Սէյդաբադի և Դաքայի քահանաների վրայ:

«Եօթերորդ՝ բոլոր եղած հրահանգները և կառավարութիւնները վերոյիշեալ քահանաներին պէտք է լինի Համաձայն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու աւանդութեան և Նոր Զուղայի Սուրբ Յովսէփայ Աթոռի իրենց Առաջնորդի հրամանով»:

Վերոյիշեալ պատմական մէջբերումներով ուղեցի ապացուցել, նախ հայրենիքից արտաքսուած հայկական բեկորները կառչած մնալով իրենց հայրենիքին և Հայաստանեայց Եկեղեցուն՝ ստեղծեցին կազմակերպուած գաղութներ տարածուելով Պարսկաստանի ծոցից՝ Բուշեռից և հարաւարեւմտեան սահմանի Բէլուչիստանից՝ ներկայի Փաքիստանից դէպի Հնդկաստան՝ Բոմբէյ, Կալկաթայ ապա Հոլանդական Բաթալիայ՝ ներկայի Ինդոնէզիան և Հնդկաչինի զանազան շրջաններ. չմոռնանք յիշել Արաբական Բասրան:

Հիմա տեղին է յիշատակել հետեւեալը:

Էդինբուրգի, Սկոթլիա, Cannangate Lodge-ի արձանագրութիւններից պարզուել է, որ 1762-ին անգլիական Մայր Օթեակը, Մերձաւոր Արեւելքի՝ Հալէպի և Պարսկաստանի համար չորս «Մեծ Վարպետներ» էր նշանակած, որից մէկը հայազգի Դր. Մանասն էր, որ պիտի հիմնէին մասոնական օթեակներ: Օթեակները համախմբող մարմինը կոչւում էր «All Armenia in the East Indies»: Այս անունը մնաց միջեւ 1805-ը:

1860-ական թուերին հայ մասոններին վե-

րաբերող փաստերը գտնուած են նախ Էդինբուրգի Ֆրանս-Մասոնական դիւանագիտական գաղտնի արձանագրութիւնների մէջ, մասամբ՝ Ֆրանսիոյ «Մեծ Արեւելք» Մայր Օթեակի թղթերում:

Բնական էր, որ Բրիտանական և Հոլանդական կայսերական սահմանների ընդարձակմանը, անուղղակի նպաստած պիտի լինեն իրենց ունեցած առեւտրական համաշխարհային կապերի շնորհիւ: Կայսերական գաղութներում արեւելքից մինչեւ Ամերիկաները, մասոնական ցանցը արդէն գոյութիւն ունէր, որոնք օգտագործում էին իրենց մասնակցութեամբ՝ հետեւեալ առեւտրական նաւային ընկերութիւնների մէջ:

Անգլիական East India, որ տեւեց մինչ 1874ը, որոնք պատմական դեր կատարեցին իրենց թէյի առեւտրում, որ մենաշնորհ էր տրուած վերոյիշեալ ընկերութեան: Դեկտեմբեր 16, 1773-ին, Ամերիկեան գաղթարնիկները ծպտուած իբրեւ տեղացի հնդիկներ, գրգռուած խմբով արկղներով թէյը թափում են Բոստոնի Նաւահանգստի ջրերում յարձակուելով Բրիտանական նաւերի վրայ իբրեւ բողոք թէյի մենաշնորհի հանդէպ: Այդ միջադէպը համարուեց նաեւ սկիզբը՝ Ամերիկեան յեղափոխութեան:

Երկրորդը՝ 1600-1798, Holland's East India, Indonesia and Malay Archipelgo, ընկերութիւնը, որ զատ-զատ հայեր իբրեւ մասոններ մասնակցել են:

Երրորդը՝ Ֆրանսական, French East India (1664-1769):

Չորրորդը՝ Դանիմարկայի ընկերութիւնը՝

Danes East India (1729-1769):

Բըրմայի մայրաքաղաք Ռանգունի հայոց օրացոյցը յիշատակում է, որ 1612-ից հայերը մոտաք են գործել Բըրմայի Սիրիամ քաղաքը: Նոյն քաղաքում, մի հայ վաճառական, հռոմէական կաթոլիկների համար մի եկեղեցի կը կառուցի: Առաջին գերեզմանաքարը քանդակուած է 1725-ին: Համաձայն Հոլանդական Dutch East India ընկերութեան և Հէյգի պետական արխիւների, «Jerusalem» անուամբ Հայկական մի նաւ 1683-ին կը հասնի Masulipatman որ Բըրմայի Փէգու քաղաքի թագաւորից լուրեր կը փոխանցի ընկերութեան ուղղուած, որ կը վերաբերի դրամական գործառնութեան: Նաւի մէջ Ձոզէֆ Մարգար (Յովսէփ Մարգարեան) անունով կարեւոր վաճառական կը լինի որ միջնորդի դեր կ'ստանձնի Փէգուի թագաւորի և վերոյիշեալ ընկերութեան մէջ:

Համաձայն Հէյգի, Librarty-Archavies of the Dutch Order of Freemasons, մասոնականութիւնը մոտաք կը գործի արեւելքում Dutch East India ընկերութեան կողմից, որոնց առեւտրական կենտրոնը գտնւում էր Բաթաւիա, ներկայի Զաքարթան:

Հոլանդական գաղութի առաջին օթեակը կը հիմնուի Նոյեմբեր 7, 1758-ին, Հնդկաստանի Հոլալի քաղաքում, որը կ'անուանուի Dutch Lodge "Salomom", Yacobus Larwood of Schevichanen-ի՝ Դըշ ընկերութեան, մասոն նաւաստիի արարողութեամբ և ղեկավարութեամբ: Երբ Բրիտանացիք կը գրաւեն Հոլալին, 1762-ին, Բաթաւիայում կը կազմուի Հոլանդական օթեակը, որ կ'անուանուի

Ըստ Lodge la Choisie, (=The Elect), որ կը տարածուի Սուրաբայա, Սէմարանգ, Ջոզհահարթա, Բարգունգ, Փալէմբանգ, Մահասէր: Մէկ օթեակ էլ կը հիմնադրուի Ծապոնիայի Դէսիմա կղզում՝ 1868-ին, որ Հոլանդական գաղութ էր:

Ջաւայում գոյութիւն կ'ունենան նաեւ թէ Անգլիական և թէ Սկոտիական օթեակներ:

Ովքեր էին հայ մասոնները:-

Paul Andrias (Poghos Andreasian), ծնուած Նոր Ջուղա, Դեկտեմբեր 3, 1804, մահացած Նոյեմբեր 19, 1861, Semarang-ում: Հարուստ վաճառական էր և ունէր երկու շաքարի գործարաններ: Անդամակցում էր Dutch Lodge Constante et Fidèle (=Constancy and Royal) at Semarang since 1833.

Archam Joseph Malcohlm - Արչամ Յովսէփ Մելքոնեան, ծնուած Իրանի Բուշէր՝ Պարսից Ծովի քաղաքում, Հոկտեմբեր 31, 1839-ին: Սեմարանգում՝ վաճառական էր: Սկզբնական շրջանում անդամ էր Բոմբէյի Բրիտանական Քոնքորդ Օթեակին, որից յետոյ անդամակցեց Սեմարանգի Constante et Fidèle-ին, 1866-ից:

Անդրիասեան ընտանիքից քանի քանի մասոնականներ ձուլուեցին Հոլանդացիների հետ:

Մարկոս Մովսէս Սիմոն-Սիմոնեան, ծնուած Հայաստանի Սերթում՝ Ապրիլ 4, 1866-ին, մահացած Սուրաբայա Օգոստոս 27, 1955-ին: Իր դպրոցական կրթութիւնը ստացել է Կալկաթայում: Եղել է անդամը Բրիտանական Օթեակ Փիոնիէրին, 1914-ին արժանանալով Վարպետ կոչման: Յետագային՝ 1923-ին կ'անդամակցի The Dutch Lodge Arbeid Adelt (= Labour Ennobles)-ին: Կը պաշտօնավարէր Մակասարի Հայկական Մայքըլ

Ստիֆընզ (Միքայէլ Ստեփանեան) ընկերութեան մէջ: Կ'ամուսնանայ Զուղայեցի աղջկայ հետ:

Thaddeus Seth Paul, Tilly de Yong Հոլանդոհոհոհ հետ կ'ամուսնանայ: Նոր Զուղայեցի Սէթ Պօղոսեանի տղան էր: Հարուստ վաճառական: Ծնուած Մակասար Սեպտեմբեր 28, 1890-ին, մահացած Հոլանդիա Յունիս 3, 1971-ին: Անդամ էր և ատենադպիր՝ The Dutch Lodge Arbeid Adelt at Makassar:

Machertich John Edgar (Մկրտիչ Յովհաննէս հոգարեան) ծնուած Նոր Զուղա Օգոստոս 17, 1895-ին, մահացած Աւստրալիա: Տղան էր Յովհաննէս և Աննամարիա Տէր Մկրտիչեանի, որ կը կոչուէին Բարվազեան մականունով՝ Նոր Զուղա: Նա փոխանորդ գործակալ էր Messrs. Michael Stephens and Co. Ltd. at Makassar: Dutch Lodge Arbed-ի անդամ էր Հոկտեմբեր 1936-ից:

Paul Anton Zorab (Պօղոս Անտոն Զորապեան) ծնուած Լէյդըն, Հոլանդիա, Հոկտեմբեր 1, 1888-ին, մահացած Յունուար 13, 1944-ին Սուրաբայա: Հոլանդական ընկերութիւնների պաշտօնեայ էր: Զաւակն էր Eleazar Zorab-ի (Էլիազար Զորապեան), որ նախագահն էր Սուրաբայայի վերաքննութեան Դատարանի՝ (President Court of Appeal at Surabaya) և (Marie Müller)-ի: Նա թոռն էր Նոր Զուղայի Մարտիրոս Մկրտիչ Զորապի և Մերխաթուն Գասպարեանի: Անդամ էր 1919-ից The Lodge de Dagerand (=The Dawn) at Blitar in East Java:

George Aretoon Martirose Zohrab (Գէորգ Յարութիւն Մարտիրոս Զորաբ), ծնուած Սուրաբայա Յունուար 11, 1898-ին. մահացած Յունիսին 1990, Zaltermeer, Hague-ի մօտերը: Զաւակն էր Ալբերտ

Մանուէլ Զորապի և Հոսաննա Էդգարի, թոռ՝ Մարտիրոս Մկրտիչ Զորապ և Մերխաթուն Գասպարի: Andam hr Dutch Lodge "De Oude Plichken" (= The Old - Obligations):

Dr. Alfred Arathoon Gallestin, Doctor-of-Laws in the University of Leiden, Holland, Հոլանդական ազատ-որմնադրութեան շարժման կարկառուն դէմքերի ամենամեծն է համարուում: Ալֆրէդ Յարութիւն Գալստեանը ծնուել է Սեպտեմբեր 12, 1881-ին Սուրաբայա և մահացած Հէյգոււմ, Մարտ 29, 1965-ին: Զաւակն էր Նոր Զուղայի Գասպար Տէր Գալստեանի, որ զաւակն էր Տէր Գալստեան Նազարէթեանի և Քարոլանիա Մարթա Յարութիւնեանի և իր եղբօր՝ Յարութիւն Թաթէոս Տէր Յովհաննէսի ծոռը կամ թոռան զաւակը, որ հեղինակն է «Պատմութիւն Նոր Զուղայի» Սպահան, կամ Իսֆահան:

«Պատմութիւն Նոր Զուղայի», Սպահան, աշխատասիրած հանգուցեալ Պրն. Յարութիւն Թ. Տէր Յովհաննէսից, Ա. Հատոր, տպագրւած Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպարանում, 1880 թւին: Բարեյիշատակ պատմաբանի ծննդեան 150-ամեակի առթիւ: Աշխարհաբարի թարգմանեց՝ Պօղոս Ա. Քհնյ. Պետրոսեան 1880:1881-ին կը տպագրուի երկրորդ հատորը, նոյն տպարանում:

Դր. Ալֆրէդ Յարութիւն Գալստեանը կը նշանակուի նաեւ Բաթավիայի Հոլանդական պարլամենտի անդամ՝ Հոլանդական Հնդկահինի ընդհանուր կառավարիչի հրահանգով: Կը լինի նաեւ Զաւայի Բաթաւիա բանքի տնօրէնը: Երբ հանգստեան կը կոչուի, 1925-1938 կը դառնայ



Դոքտ. Ալֆրեդ Գալուստեան
(Alfred Aratoon Galestin)

Ծագումով և ծնունդով ՀԱՅ, կը ներկայանայ 1925-1938ը, իբրեւ Նախագահական Մեծ Վարպետը՝ L'Union Royale Օթեակի: Նա որ կենդանացրեց Օթեակի և Ռիստի խորհրդանշանակ լեզուն: (Տես էջ 7)

Վերոյիշեալը ժառանգորդներից է Յարութիւն Թադէոս Տէր Յովհաննէսեանի՝ ղեկիւնակը՝ «Պատմութիւն Նոր Զուղայի»: (Տես էջ 39)

Հէյդի Dutch Lodge L'Union Royale (= Royal Union)-ի ատենապետը, յետոյ կը լինի Մեծ Հրապարակախօսը և Մեծ Վարպետի տեղակալը այդ նոյն օթեակի որ հիմնադրուել էր 1734-ին: Նա ամբողջ Հոլանդական կայսրութեան և թէ բուն Հոլանդիոյ մէջ այնքան անուանի դէմք էր որ ազատ-որմնադիրներից՝ Dr. W. Birsa-ն, իրենց ուխտի 250-ամեակի կապակցութեամբ, 1984-ին խմբագրած գրքում կ'արտայայտէ, որ Գալէս-թինը իր արժէքաւոր գիտութեամբ և Արեւելքում ունեցած շփումների շնորհիւ, թէ Անգլիական և թէ Սկոտլանդական օթեակների հետ ունեցել է մեծ ներդրում Հոլանդական որմնադրութեան կառուցուածքի մէջ: Օթեակի 200-ամեակի տօնակատարութեան իր փառաւոր «The Evolution of Freemasonry»-ի ճառով արտայայտեց հետեւեալը.- «Ազատ որմնադրութիւնը երբէք չը պիտի դիտուի իբրեւ երեւոյթ (phenomenon) և անջատ՝ ուրիշ կրօնական շարժումներից, որոնք դարերի ընթացքին ցնցել են մարդկային միտքը»: Նա եղաւ պատասխանատուն Հոլանդական ազատ-որմնադիրների միութեան՝ շեշտելով խորհրդանշական լեզուն:

Տես Dr. Galestin-ի լուսանկարը (էջ 38): Գծուած է Willy Slinte-ի կողմից, օթեակի շքերթի ընթացքին, որ իբրեւ նուիրեալ և ոգեշունչ մէկը՝ Ծագումով և Ծնունդով ՀԱՅ, կը ներկայանայ 1925-1938ը, իբրեւ Նախագահական Մեծ Վարպետը՝ L'Union Royale Օթեակի: Նա, որ կենդանացրեց Օթեակի և Ռիստի խորհրդանշանակ լեզուն:

Վերոյիշեալ՝ The Library of Archives of the Dutch Order of Free-masons in the Hague-ի և Հոլանդիային

վերաբերող՝ խմբագրել է Պրն. Արմէն Ջոզէֆը։ Նա, գաւազն է իմ կնոջ՝ բնիկ Նոր Զուղայեցի Լինա Աղանուրեանի մօրեղբոր, որ բնակուում է The Hague-ում։ Նա, կարելի ասել, որ տիրապետում է հոլանդերէն լեզուին և հմուտ՝ հայերէն, անգլերէն լեզուներին։ Վերոյիշեալ պատմական տեղեկութիւնները ստացուել է 1966-ին, որ մաս է կազմում սոյն աշխատութեան։ Նա, նաեւ, յիշատակում է, որ վերջերս, Armenological ակումբ է հաստատուել Leiden-ի համալսարանում և Պրոֆ. Weitenberg-ի կարգադրութեամբ, իր բոլոր անձնական, թէ օտար և թէ հայերէն գրքերի հետ միասին, ինչպէս հայոց պատմութեան և գրականութեան վերաբերող, իր հանգուցեալ տիկնոջ և իր անուամբ՝ (Rose and Armen Joseph Library) յանձնուել է հայագիտական բաժանմունքին, քանի որ, մասնաւորապէս Հայաստանի վերանկախութեան կապակցութեամբ շատ Հոլանդիոյ ուսանողներ սովորում են հայերէն և ուսանողների փոխանակումներ են տեղի ունենում երկու երկիրներում մէջ։

Պրոֆ. Weitenberg-ը անձնական բարեկամն է Արմէնի. նա տիրապետում է հայերէն թէ գրաբար թէ աշխարհաբար և նաեւ հիթայթ լեզուներին։

Հիւսիսային Ամերիկայի Հայ Գաղութը

Համաձայն Մեսրոպ Արք. Աշճեանի գրքոյկի, «Հայոց Եկեղեցին Ամերիկայում»՝ հայկական գաղութը Միացեալ Նահանգներում սկսել է կազմուել 1800-ական թուերից, չնայած որ հայ անհատներ մուտք են գործել XVII-րդ դարուց սկսած։

1607-ին երբ անգլիացիները՝ Captain John Smithի առաջնորդութեամբ հասնում են Վերջինիա և նոր գաղութի հիմքն էին դնում ձեռնարկելով ծխախոտի մշակութեան, Սըմիթի կողմից, Պարսկաստանից Մարտիրոս կամ Մարտին անուամբ հայը կը հրաւիրուի Jamestown, որ իր մասնակցութեամբ նպաստելու ծխախոտի արտադրութեան։ Մարտիրոսը պիտի զինուոր եղած լինի՝ երբ թուրքերը յարձակում կը գործեն Եւրոպական ցամաքամաս՝ նա Սըմիթի կեանքը կ'ազատի։

Վերջինիայի կառավարիչ Էդուարդ Դիքսը, 1655-ին, Պարսկաստանից երկու հայեր կը հրաւիրի, որպէսզի այդ նահանգում շերամաբուծութեան հիմքը դրուի։ Հայերից մէկի անունը կը յիշուի George the Armenian: Արձանագրուած է որ այդ հայերը, առաջին մետաքսի արտադրութիւնից դրոշակ կը հիւսեն և կ'ուղարկեն Սբ. Էջմիածին։ Մինչ օրս Զէյթնթաունի գերեզմանատունում հայերէն քանդակած գերեզմանաքարերը պահպանուած են։

1830-ին, միւս հայը՝ Յարութիւն Վարդապետեան կ'ուսանի Ֆիլադելֆիայում։ 1860-1880-ին կը նշանակուի Կարինի Արքեպիսկոպոս, 1885-1888 Կ. Պոլսի Պատրիարք և 1889-1910 Երուսաղէմի Պատրիարք։

1880-ին, առաջին բողոքական եկեղեցին կը հիմնուի Ուսթրում։

16 տարեկանում Խաչատուր (Քրիստափոր) Ոսկանեանը, 1834-ին կը գայ Նիւ Եորք ուսանելու։ Ուսումնական շրջանը աւարտելուց յետոյ կը գործի New York Tribune աշխատանոցում, յետոյ

կը նշանակուի Թիւրքիոյ հիւպատոսը Նիւ Եորքում:

Ամերիկեան Միսիոնարների օթանդակութեամբ, Կ. Պոլսից բազմաթիւ հայեր, իբրեւ ուսանողներ կը գան կըթուելու, Փրինսթընի, Նիւ Եորքի, Ելի և Անդովըրի կրօնական դպրոցներում: Տէր Սահակեանը վերադառնալով Պոլիս, որպէս բողոքական պատուելի կը ծառայի գաւառներում: Միւս ընկերակիցը՝ Խաչատուր Տէր Սերոբեանը, որ միասին Ամերիկա էին եկել, իբրեւ ծիսական՝ առիթը կ'օգտագործի և կ'ուսանի քրիստոնեութիւն: Կը հնարի յատուկ կանաչ գոյն: Ամերիկեան կառավարութիւնը այդ գիւտը գնելով կ'օգտագործի իբր թղթադրամի կանաչ գոյն:

1845-ին, Վենետիկի Միսիթարեանի Հայր Դեւոնդ Ալիշանի եղբայրը՝ Սերոբը կը գայ Ամերիկա:

Ամերիկեան քաղաքացիական պատերազմին, հայերը կը մասնակցէին իբրեւ զինուորներ և բժիշկներ, որոնց մէջ էր Սիմոն Մինասեանը Ֆիլադելֆիայից:

1880-ից, Սուլթան Համիդ Երկրորդի (Կարմիր Սուլթանի) գահակալութեան շրջանում գործադրուած հայատեաց քաղաքականութեան պատճառով, Մուշից, Խարբերդից, Տիգրանակերտից բաւական թուով հայեր կ'արտագաղթեն և կը հաստատուեն Նիւ Եորք, Փրովիդենս, Բոստոն, Ուստըր, Ֆրեզնօ և մօտակայ շրջաններ:

Միացեալ Նահանգների մասոնական օթեակներում, հայերն եւս բերել են իրենց մասնակցութիւնը: Յիշատակենք հետեւեալները:

Ուաշինկթըն նահանգի Քաշմիէր գիւղակի “Միշըն” թիւ 158 օթեակին անդամակցել են երկու Զմիւռնահայ Որմնադիրներ: Դեկտեմբեր 1799-ին “Ուաշինկթըն” թիւ 59 օթեակին մի ոմն Օհանէս Սրապեան կ'անդամագրուի և 1802-ին կը դառնայ Գերյարգելի Վարպետը Ֆիլադելֆիոյ “Քուլմպիա” թիւ 91 օթեակի:

Մեծ քաղաքներում մասնակցել են բաւական թուով հայեր, ինչպէս Նիւ Եորքում գումարուած “Silvan Grove” No. 295 օթեակի շուրջ 40-50 հայեր, որոնց թիւը լի ու լի բաւարար էր մէկ կամ երկու հայ անգլիախօս օթեակներ կազմելու համար: Զը նայած Նիւ Եորքի մեծ օթեակը իր իրաւասութեան տակ ունեցել է անգլիախօս և զանազան ազգերի խմբաւորումներ, ինչպէս Փրանսական, իտալական, սպանական, յունական և գերմանական օթեակներ, բայց ըստ Մեծ Քարտուղարի արտայայտութեան այլեւս չէ թոյլատրուում նոր օթեակների հիմնադրման: Այս որոշումից դուրս կը մնան Պէյրոսի, Դամասկոսի և Զահլէի արաբախօս և Փրանսախօս ութ օթեակները: Այս օթեակներէն մէկի գերյարգելի վարպետը Բժ. Կ. Մ. Պահլէեանն է, Պէյրոսի, Լիբանան:

Հայ մասոնները շատ պատասխանատու դիրքերի են հասած եղել: “Մանհատ” թիւ 62 օթեակը, ունեցել է երկու գերյարգելի վարպետներ:

1925-ի ամսուայ ընթացքին Պոլսի “Հայաստան” թիւ 1085 օթեակի 8-10 անդամները, ամերիկեան օթեակի հայ մասոնների հետ ունեցել են հանդիպումներ, որպէսզի Նիւ Եորքի

և Նիւ Զըրզիի մէջ հիմնադրուեն հայ օթեակներ, սակայն գործնական արդիւնքի չէ հասած:

Ըստ Միշիգըն նահանգի մեծ օթեակի պաշտօնաթերթ Masonic World 1952-ի Յուլիս-Օգոստոս միացեալ թիւերի մէջ յիշուած է, որ «նոյն նահանգի մեծ օթեակի մեծ վարպետը իր շքախումբով Յունիս 21, 1952-ին Տիթրոյիթ մեկնած՝ «Արարատ» թիւ 582 օթեակին բացումը հանդիսաւորապէս կատարելու համար: Տիթրոյիթի ու շրջականերու 500ի մօտ ազատ-որմնադիրներ իրենց տիկիններով հիմնարկութեան ճակերոյթին ներկայ գտնուած են:

«Արարատ» օթեակի պաշտօնատարները հետեւեալներն էին.-

Ճան Բաբել՝ գերյարգելի վարպետ, Նահապետեան Ճան՝ մեծ վերահսկող, Քիւրճեան՝ փոքր վերահսկող, Տէյվիտսըն Ճէք՝ գանձապետ, Զամանիկեան Լէօ՝ քարտուղար, Տէրտէրեան Լեւոն՝ աղօթասաց, Թումաճանեան Ազատ՝ կրտսեր սարկաւազ և Սահակեան Արմէն՝ արարողապետ, Քէհանեան Ռիչըրտ՝ արտաքին պահապան:

«Արարատ» օթեակի աշխատութեանց գումարումները տեղի կ'ունենան իւրաքանչիւր ամսւայ առաջին երկուշաբթին: Հետեւեալ անդամներն էլ մաս կը կազմեն «Արարատ» օթեակի հիմնադիրներուն.- Հալըճեան Դաւիթ, Գէորգեան Պետրոս, Գորգոյեան Եղուարդ, Բաքլայեան Արշի և Թագւորեան Տրդատ:

Վերոյիշեալ մէջբերումները երբէք չեն յիշատակում, որ «Արարատ» օթեակը ունեցել է հայկական ազգային ըմբռնումով կանոնադրութիւն: Պիտի եզրակացնել՝ քանի որ պաշտօ-

նական մասն էր կազմում ամերիկեան մասոնական վաւերական ուխտին, ուրեմն, նման խնդրով չը պիտի զբաղուէին: Դա չը պիտի արգելք հանդիսանար որ նրանք հնարաւորութիւն չը պիտի ունենային ազգանպաստ ձեռնարկութիւնների կազմակերպման: Արդեօք ունեցել են թէ ոչ, դժբախտաբար որեւէ արձանագրութիւն հնարաւոր չեղաւ ձեռք բերել:

Ինչպէս պարզուում է՝ Մասաչուսէց նահանգի մի շարք հայաշատ կենդրոններում եղել են օթեակներ ինչպէս Տիթրոյիթում, բայց ոչ ազգային իմաստով և կամ մեծամասնութիւն կազմելով ամերիկեան օթեակներին:

7. ԹԻՒՐԳԻՈՅ ԵՒ ՀԱՅԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ

Անցեալում, ամերիկեան պատմաբանները, ինչպէս Charles William Heckethorn, William Joseph Whaleme-ը, բոլոր ազատ-որմնադրական կազմակերպութիւնները ներկայացրել են իբրեւ գաղտնի համայնքներ կամ մարմիններ, նաեւ յիշատակելով տասնեակ ուրիշ համայնքներ՝ նմանեցնելով մասոնական շարժման՝ բացասական մօտեցումներ դրսեւորելով: Թուրքիոյ և նորակազմ հայկական գաղտնի հակասուլթանական միութիւնները հետեւեալ քննական մօտեցումով՝ որ եւրոպական աշխուժացնող յեղափոխական ալիքները, ինչպէս երիտասարդ մի Գերմանիա, մի երիտասարդ Լեհաստան, մի երիտասարդ Իտալիա առաջացրեց նաեւ մի երիտասարդ Թուրքական կազմակերպութիւն, որ յաջողութիւն չարձանագրեց: Նոյն ղեկավարութեամբ, թէ Կ. Պոլսում և թէ Լոնդոնում, 1867-ին, վերակազմուեց հետեւեալ ազդարարութեամբ, որ ոչ թէ միայն վերացումը Ղուրանի և Սուլթանի գերիշխանութեան, այլ ազատագրումը կրօնական և քաղաքական բռնութիւններից և յատկապէս որդեգրումը նոր քաղաքականութեան, ոչնչացնելու Ռուսական ազդեցութիւնը Արեւելքում՝ ազատագրելով Porte-ի

Քրիստոնեայ հպատակներին: Քանի որ Երիտասարդ Թուրքիոյ ազատագրական շարժումները, ուղղակի թէ ոչ, նպաստաւոր դեր է խաղացել հայկական ազատագրական շարժումների սկզբնական կազմաւորման և եղել է ճակատագրական, ուստի, յիշատակենք՝ մասոնական պիտակով, ովքեր էին Թուրքիոյ ազատագրական շարժումների ղեկավարները՝ հետեւեալ կերպով: Փարիզի և Լոնդոնի՝ Zia Bay, Agha-Efendi, Count Platter, մի լեհացի, որ ապրում էր Զիւրիխում, Kemal Bey, Simon Deutsch: M. Bonnal, Ֆրանսական դրամատան վարիչ՝ Pera, որ Կ. Պոլսի կոմիտէի գլխաւոր ներկայացուցիչն էր: Մուսթաֆա Փաշան համաձայնուել էր, որ տարեկան հարիւր հազար Ֆրանկով նպաստի կազմակերպութեան դրամարկղին: Մուրադ Բէյը, որ ներկայ Սուլթանի եղբայրն էր, դառնում է Young Turkey Party-ի ղեկավարը, որին մասնակցում էր անուանի Միդհատ Փաշան: Մուրադ Բէյը Թուրքիոյ տառապանքները վերագրում էր ուղղակի Սուլթանին և Քամարիլլա Պալատին: Ամերիկեան հեղինակները անցնում են Հայկական Ընկերութիւն բաժնին, ուր յիշատակում է Հայկական կազմակերպութիւնը հետեւեալ փաստերի վրայ հիմնուած:

1888-ին Ռուսիոյ Հայերը կազմում են գաղտնի ընկերութիւն ընդէմ Ռուսիոյ: Վերջին 1896-ի դէպքերը Եւրոպայի ուշադրութեան առարկայ դարձաւ՝ Թուրքիոյ հայ ընկերութիւնների գոյութիւնը: Նրանք կազմակերպուած են նման հին Carbonari, իբրեւ արեան վրիժառուներ: Ինչպէս ասած՝ կոմիտէները իրար հետ անծանօթ են, անգամ չը գիտեն ինչ կոմիտէից է

հրահանգուած: Հինգ կոմիտէներ են՝ երկու հար-
իւր անդամներով: Յիշատակուում է կոմի-
տէների անունները՝ Հնչակ, Դրօշակ, Ապտակ,
Կայծակ և Վոչինչակ (Destruction): Վերջին
երկուսը վերջերս կազմուած, 1926-ի ընթացքին:
Գաղտնիացած կոմիտէները պիտի գործադրեն
հրահանգուած որոշումները հերթականօրէն, ոչ
նոյն ժամանակ, ինչպէս 1895-ի Հնչակի ցոյցը,
իսկ Դրօշակինը՝ 1896ի Բանկ Օթօմանի վրայ
գործադրուած յարձակումը: Նմանապէս, նման
հերթականութեամբ պիտի կատարեն իրենց
վստահուած հրահանգները: Նաեւ, 1896-ի Գարա-
հիսարի պատահարի ընթացքում ձերբակալուած
հայ դաւադիրներինց յայտնաբերուած փաստա-
թղթերը՝ ապացուցում են որ ինչպիսի սարսա-
փելի խափանարար ակտեր պիտի կատարուեն,
եւայլն: Հետաքրքիր է Անգլիոյ կապակցու-
թեամբ հետեւեալ մէջբերումը, որ թարգման-
ւած կը ներկայացնենք: «որ Անգլիոյ ներկայի
քննարկումը ի շահ հայութեան ցուցաբերում է
այդ երկրի ժողովրդի նկարագրի իրական և
կատարեալ տգիտութիւնը: Եթէ հայերը արժա-
նի լինէին և կամ պիտանի անկախութեան, պիտի
գործադրէին, ինչպէս Շուէցարացին՝ մի խեղճ
ազգ, հինգ դար առաջ պատերազմելով Աւստրիոյ
դէմ, մինչ հայերը՝ հարուստ, պիտի պատերազ-
մէին Թուրքիոյ դէմ»: Նոյն հեղինակը՝ Ռուսիոյ
վերաբերող՝ յիշատակելով Նիհիլիստների պատ-
մականը, անդրադառնում է հայկականին, որ
1886-ի Դեկտեմբերին, Ռուսիոյ պետութեան
կողմից ձեռք բերուած փաստաթղթերի վրայ
հիմնուած, շեշտում է երիտասարդ և կրթուած
հայերի կողմից կազմակերպուած գաղտնի
կոմիտէների ճիւղաւորումները որ կարելի է հա-

մեմատել և նմանցնել «Երիտասարդ Իտալիա»ի,
1848-ի ընկերակցութիւններին: Իրենց նպատակն
է՝ Ռուսիոյ դէմ ապստամբուելով հիմնադրուէ
միացեալ և անկախ Հայաստան:

Ուրիշ մի հեղինակ, Թուրքիոյ մասոն
օթեակների մասին նշել է, որ չնայած սկզբ-
նական շրջաններում ենթարկուել են հալա-
ծանքների, բայց հնարաւոր է եղել հիմնել կա-
րեւոր կենտրոններ թէ Պոլիսում, թէ Ջմիւռ-
նիայում և թէ Հալէպում: Ունեցած ժամանա-
կաւոր յաջողութիւնները բացատրուում է շնոր-
հիւ կանանց հանդէպ ցուցաբերած ազատագրա-
կան գաղափարի գործադրութեամբ, որ բազմա-
կնութիւնը մերժուած էր և կանայք առանց
ծածկոցի մասնակցում էին մասոն օթեակների
հանդէսների: Ինչքան որ, մի շարք արեւմտեան
օթեակներ դէմ են եղել կանանց անդամակ-
ցութեան՝ եղաւ բարիք՝ ի նպաստ արեւելեան
կանանց:

Բացի Թուրքական օթեակներից, Թուրքիոյ
մէջ գոյութիւն ունէին նաեւ անգլիական, ֆրան-
սական և զանազան եւրոպական ազգերի օթեակ-
ներ, որ առանց նրանց հովանաւորութեան ան-
կարելի էր հիմնել զուտ հայկականը:

Յաջորդով պիտի ներկայացնենք հայկական
մասոնական օթեակների կազմութեան և մաս-
նաւորապէս՝ ինչու կազմուեցան:

8. ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏ-ՈՐԴԱՆԱԴՐԱԿԱՆ ՕԹԵԱԿՆԵՐԸ

Անցեալում, 1860-ից սկսած, յատկապէս Պոլսի և Զմիւռնիայի հայերը սկսել են հետաքրքրուիլ մասոնական սկզբունքներով: Թուրքիոյ մէջ ոչ մի փոքրամասնութիւն, բացի յոյներէն հետամուտ չէ եղել իր մայրենի լեզուով օթեակ հիմնելու: Զմիւռնիոյ հայութիւնը այդ թուականին գտնուում էր ազգային մշակութային և կրթական վերածնունդի մէջ: Ունէին ընդարձակ վաճառականական կապեր Փոքր Ասիայի և Եւրոպայի հետ՝ լինելով մի տեսակ առեւտրական կամուրջ: Եւրոպայի տարածքում՝ շնորհիւ իրենց շարունակական շփումներին՝ պատճառ կը դառնայ զուտ հայկական օթեակներ հիմնելու:

Օթեակների կազմութեան լուրջ և իրական պատճառների մասին պիտի անդրադառնանք: Առ այժմս անցնենք հետեւեալ պատմական մէջբերումներին՝ երբ և ինչպէս կազմուեցան հայկական օթեակները:

«Այս ծրագիրը գործադրելու համար, հայերը դիմեցին Զմիւռնիա հաստատուած “Հոմերոս” թիւ 806 անգլիախօս Ազատ-Որմնադրական Օթեակի գերյարգելի վարպետին, որ օգնէ իրենց

ծրագրին գործադրութեան: Վերոյիշեալ օթեակը, Անգլիոյ Մեծ Օթեակի արտօնութեամբ, Յունուար 25, 1860-էն ի վեր, կանոնաւորապէս կ'աշխատէր Զմիւռնիոյ մէջ:

Այս անգլիական օթեակին առաջին տարւայ պաշտօնատարներու ցանկին վրայ կը հանդիպենք կարեւոր եղբօր մը՝ Սերովբէ Ազնաւուրի, որ Մեծ Վերհսկողի աթոռը գրաւած է նոյն օթեակին մէջ: Սերովբէ Ազնաւուրը Պոլսոյ մէջ, Ազատ Որմնադիր և “Օտ Ֆէլլօ” Եղբայրացութեան ներկայացուցիչ, մեծ դեր ունեցած է Պոլսոյ “Մէր” Ազատ-Որմնադրական Օթեակի հիմնարկութեան մէջ: Իր խիզախ պատասխաններով խարազանած է “Լոճաւորեալ-Խաւարեալ”ի առաջնորդ Պատուելի Զմուրճեանը “Մասիս” օրաթերթի մէջ, որ կը խմբագրուէր Կ. Իսթիւճեանի կարող գրչի տակ: “Մասիս”ի այդ թիւերը մեծ հետաքրքրութեամբ մինչեւ օրս կը կարդացուին: Սերովբէ Ազնաւուրը դարձուցած էին կարկառուն դէմք մը Պոլսոյ և Զմիւռնիոյ մէջ:

«Առաջին Հայ Ազատ-Որմնադրական Օթեակի հիմնարկութիւնը կը պարտինք Զմիւռնիոյ Հայոց, որոնք Անգլիոյ Մեծ Օթեակին արտօնութեամբ հիմնեցին “Մեծն Տիգրան” թիւ 1014 հայախօս Օթեակը: “Հոմերոս” թիւ 806 Օթեակին կարեւոր անդամները հիմնադիրները եղան “Մեծն Տիգրան” թիւ 1014 Օթեակին՝ բարոյապէս օգտակար ըլլալու Հայ տարրին: Հայ Օթեակին բացման արարողութիւնը մեծ շուքով կատարւած է Յունիս 5, 1864-ի երեկոյին Հոմերոս Օթեակի մեծամեծներեն, որոնք կարողութիւն մաղթած ու բաժակներ վեր բարձրացրած և պարպած են Հայ Ազգին արեւշատութեան ու

Հայ Որմնադրութեան փայլուն ապագային:

“Մեծն Տիգրան” Հայ Օթեակը իր առաջին 12 տարուան ընթացին բեղուն կեանք մը ունեցած է թանկագին հունձքով: Սկսած է Յունիս 5, 1864-ին և վերջնականապէս փակուած է Յունիս 6, 1894-ին՝ քաղաքական դէպքերու հետեւանքով:

«... 1894 տարին ու անկէ յետոյ յաջորդաբար տարիները “Մեծն Տիգրան” 1014 Օթեակի հեռատես ու խոհեմ անդամներուն զգացնել տուած են թէ այլեւս կարելիութեան սահմանին մէջ Հէր Օթեակին աշխատանքները շարունակել, օտար օթեակներ յաճախել, նոր եղբայրական յարաբերութիւններ ստեղծել, օտար հիւրեր ընդունիլ, երբեմն ալ շատ բարձրաստիճան Մեծ Օթեակի պաշտօնեաներ հիւրասիրել, ինչպէս Անգլիոյ Կալլէսի Իշխանը, յետոյ Եդուարդ է: Ան իր Հնդկաստան ճամբորդութեան ընթացքին Չմիւռնիոյն անցնելու միջոցին, փափաք յայտներ էր Անգլիոյ Մեծ Օթեակին իշխանութեան տակ գտնուող Օթեակի մը այցելել:»

Նոյն երեկոյին երբ “Մեծն Տիգրան” Օթեակը իր կանոնաւոր նիստը կ’ունենայ, լուր կը տրուի Օթեակին արտաքին դռնապանին, թէ Անգլիոյ Մեծ Օթեակի բարձր պաշտօնատար մը կը փափաքի Օթեակը այցելել: Օթեակի պաշտօնատարները, գլխաւորութեամբ գերյարգելի վարպետին, պարտ ու պատշաճ արարողութեամբ դէպի արեւելք կ’առաջնորդեն Անգլիոյ Մեծ Օթեակի Մեծ Վերահսկող Եղբայր Գահաժառանգ Կալլէսի Իշխանը (ապագայ Եդուարդ է): Օթեակին գերյարգելի վարպետը իր ձեռքի մուրճը, Խորհրդանիշ Իշխանութեան, նորին վսեմութեան կը յանձնէ, որ շնորհակալութեամբ

կը վերադարձնէ զայն գերյարգելիին: Իշխանը իր բարձր գոհունակութիւնը կը յայտնէ եղած ընդունելութեան համար և մեծապէս ուրախ կը զգայ, որ հայերը, Անգլիոյ Մեծ Օթեակի հովանաւորութեան ներքեւ, հայախօս օթեակ մը հիմնած են իրենց պատմական Տիգրան Մեծ թագաւորի անունով: Իշխանը իր հետեւորդներով և ընկերակցութեամբ Հայ, Անգլիացի, Իտալացի եղբայրներու, կը վերադառնայ մարտանաւը, որ զինքը պիտի տանէր Հնդկաստան:

«Կալլէսի Իշխանը ներկայ եղած է նոյն երեկոյթին ի պատիւ իրեն տրուած խնջոյքին: Մի ոմն Վարդան Փափագեան հայերէն երգ մը երգած է Իշխանին ի պատիւ, ինչ որ Կալլէսի Իշխանը մասնաւոր կերպով կը յիշատակէ իր շնորհակալութեան պատասխանին մէջ: Վերոյիշեալ “Մեծն Տիգրան” Օթեակի կողմէ սարքուած ուղերձին և Իշխանին Չմիւռնիոյ մէջ խնջոյքին նկարագրութիւնը և Վարդան Փափագեանի երգին օրինակները կը գտնուին Փարիզ, Նազարեան? Մատենադարանը:»

«Չմիւռնիոյ մէջ “Մեծն Տիգրան” հայ Օթեակը ոսկեդար մը ունեցած է իր աշխատութեանց ընթացքին: Քաղաքը աւելի լայն ազատութիւն կը վայելէր տնտեսական, մտաւորական մարգերուն մէջ քան թէ մայրաքաղաքը, ուր Սուլթան-Խալիֆան կ’ապրէր: Եղբայրներու ցանկին վրայ կ’երեւին Չմիւռնահայ մտաւորական վերազարթնումի ռահվիրաներէն շատերու անունները: Օրինակ՝ Տէտէեան եղբայրները՝ Յարութիւն, Կարապետ և Ստեփան, տպագրիչ, թարգմանիչ միանգամայն, Մամուրեան Մատթէոսը իր “Արեւելեան Մամուլ”ով, հիմնուած

1871-ին և իր թարգմանութիւններով. իր տեւողութեան օրով, 1886-ին, Մեսրոպեան Վարժարանը կը վերակառուցուի Սպարթալեան եղբարց օժանդակութեամբ: Զիլինկարեան Գրիգորը իր տպարանով, խմբագրութեամբ «Ծաղիկ»-ի 1862-1867. Նուպարեան Մեսրոպը իր Փրանսէրէն հայ բառարանով, ձօնած Տիկին Մատլէն Եսայեանին, ծնեալ Սեպուհ Պէյ Մաքսուտ, եղբայրը Սիմոն Մաքսուտի, որ կը բնակէր Պոլսոյ Միջագիւղ թաղը և անդամակցած էր Պոլսոյ «Սէր» Օթեակին Յունիս 24, 1867-ին:

«Ուրիշ կարեւոր անձ մը, որ «Մեծն Տիգրան» Օթեակի անդամ էր, Արապեան Կարապետ մեծահարուստն է, մեկենաս գրականութեան, պաշտպան մտաւորականներու և արուեստներու: Ան իր ծախքով կառուցած էր Զմիւռնիոյ արհեստանոցը:

Բժ. Գ. Ամատեան իր Զմիւռնահայ գաղութին նուիրուած յօդուածներէ մէկուն մէջ կ'արտայայտուի այսպէս. «Իզմիրնահայ մշակութային շարժման մէջ մասնաւոր տեղ մը կը գրաւէ Մատթէոս Մամուրեանը, որ ոչ միայն իբրեւ գրագէտ արժէքաւոր ծառայութիւններ մատուցած է ազգին այլ եղած է նաեւ ազգային գործիչ, թարգմանիչ և լեզուագէտ միանգամայն՝ նախապէս Պոլսոյ ազգային Պատրիարքարանի մէջ վարած է դիւանագիտական պաշտօն և ինք եղած է գրեթէ մեր մէջ դիւանական լեզուն ձեւաւորողը, աշակերտած է Փարիզի Մուրատեան Վարժարանին: Հետագային երբ իր թերթը կը հիմնէ, մեր ներկայ աշխարհաբարի մեծագոյն մշակներէն մին կը հանդիսանայ, իբրեւ զայն յղկող և զարգացնող: Ունի բազմ

մաթիւ հեղինակութիւններ ու դասագիրքեր: Իզմիրի Ազգային Վարժարանի մէջ, իր տեսչութիւնը շատ արդիւնաւոր եղած է և գրասէր ու հայրենասէր սերունդ մը հասցուցած է»:

Մամուրեան 1883-ին կը հիմնէ իր սեփական տպարանը, ուր լոյս կը տեսնէ իր «Արեւելան. Մամուլ»-ը:

Իր գրական գործունէութեան յոբելեանը տօնուած է մեծ շուքով Իզմիրի մէջ, Հոկտեմբեր 17, 1899-ին: Ան մեռած է 1901-ին, 71 տարի քում:

Զմիւռնիոյ արհեստանոցը, անուղղակի կերպով, ինչպէս իւրաքանչիւր Ազատ Որմնադիր, օգնած է «Արշալոյս Արարատեան»-ին, որ կըրցած է մօտաւորապէս կէս դար իր գոյութիւնը պահել, 1840-էն սկսեալ:

Օթեակը, իր գոյութենէն մինչեւ իր դադարումը, հարիւրէ աւելի անդամներ ունեցած է: Յիշատակութեան արժանի են՝

«Գրիգոր Զիլինկիրեան, ծնած 1839-ին, եղած է ծանօթ գրագէտ, հրապարակագիր և թարգմանիչ: Լամաութիւնէն և Միւսէնէն կատարած է թարգմանութիւններ, այլ մանաւանդ թարգմանած է Վիքթօր Հիւկոյի բազմահատոր «Թշուառները», զոր հայացուցած է շատ յաջող կերպով:

Մեսրոպ Նուպարեան նոյն սերունդին կը պատկանի: Թարգմանած է Մուրիէի, Լաֆօնթինի գործերը: Յօրինած է Փրանսէրէնէ հայերէն առձեռն և ընդարձակ բառարաններ:

Տէտէեան Եղբարք 1850-ին կը հիմնեն իրենց սեփական տպարանը: Տէտէեան եղբայրները ոչ թէ միայն պարզ տպագրիչներ էին, այլեւ գրող:

Թարգմանած և հրատարակած են բազում գործեր: Իրենց հրատարակութիւններուն շնորհիւ ընթերցասիրութիւնը սկսած է ծաւալիլ ժողովրդական խաւերուն մէջ, իզմիր թէ գաւառները:

Այս օթեակը իր կանոնաւոր նիստերը կ'ունենար իւրաքանչիւր ամսոյ առաջին շաբաթ օրերը: Թէ ի՞նչ լեզուաւ կը կատարուէին օթեակին աշխատանքները, յայտնի չէ:

9. ՊՈԼՍԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ՕԹԵԱԿԸ

1866 թ. “Ըստ նոր տոմարի, Մայիս 7-ին, Կիրակի ցերեկ ժամը ճիշտ 7-ին”, Պոլսի Գուլէ Գաբու թաղի Եազըճի փողոցի թիւ 21 տան վերնաշարկում կը բացուէ պոլսահայ առաջին հայկական մասոնական օթեակը “Սէր” անունով: Հիմնադիրների շարքում կային՝ ճարտարապետ Սերովբէ Ազնաւուրը, որ տարիներ առաջ Անգլիայում ընդունած էր մասոնութեան ուխտը, թատերագիր Սրապիոն Հէքիմեանը, “Մեղու” ի նախկին խմբագիր՝ Յարութիւն Սըվաճեանը, Սերովբէ Թագաւորեանը որ Զէյթունի ապստամբութեան շրջանին անընդհատ փառիզ ու Պոլիս գնաց ու եկաւ ժողովարարութիւններ արաւ, դերասան էքլեանը, Միքայէլ Ալիշանը, տաղանդաւոր գրագէտ ու “Իր չորս կողմը յարգանք սփռող” Մատթէոս Մամուրեանը: Եւ շատ ուրիշներ:

Ճիշտ ժամը եօթին “Սէր” ի դռները բացւում են ու հայ մասոնները կամ “Ազատ Որմնադիրները”, վեր կեցած, ձախ ձեռքերը կուրցրելին դրած, աջ ձեռքերը առաջ երկարած՝ ընդունում են հրաւիրուած օտարազգի մասոններին: Սրանց թւում կային Պոլսում գործող անգլիական, ֆրանսական և բազմազան մասո-

նական օթեակների “գերյարգելի վարպետներ”ը (նախագահները): Անգլիոյ հիւպատոսը, ֆրանսական դեսպանատան առաջին քարտուղարը և ուրիշներ:

“Տաճար”ը կամ սրահը երկարաձեւ էր: Արեւելեան կողմը դրուած էր մի սեղան, որի գլուխը նստած էր ժամանակաւոր եղբայր Ս. Ազնաւուրը: Նրա երկու կողքի աթոռների վրայ բազմած էին օտարազգի հիւրերը: Նախագահի սեղանից քիչ հեռու ձախ կողմը ամրացած էր “եղբայր հռետոր”ի սեղանը, աջ կողմը՝ “եղբայր ատենադպիր”ի սեղանը: Տաճարի միւս ծայրը կը գտնուէր “եղբայր դռնապան”ը, նրա երկու կողմը դրուած էին “առաջին հսկող”ի ու “երկրորդ հսկող”ի սեղանները:

Օթեակների կամ տաճարի չորս անկիւններից կախուած էին չորս խոյակներ, որոնք ներկայացնում էին մասոնական չորս գլխաւոր առաքինութիւններ, այն է ժուժկալութիւն, անվեհերութիւն, խոհեմութիւն և արդարութիւն:

Օթեակի յատակը մօզաիքեայ յարդարանքներով ընդելուզուած էր: Դա խորհրդանշում էր այն, որ մարդկային կեանքը անստոյգ է, և պէսպիսի ելեւէջներով ու դրուագներով լեցուն, “նման մարդկային կենաց, որոնք այլազան պատահարներու հակասական դէպքերով շրջապատւած են”:

Նախագահին սեղանին վրան դրուած էր բացուած Աստուածաշունչը, հարթաչափը, ուղղաչափը, եռանկիւնաչափը, փոքրիկ մուրճը, ծեփիչը:

Բոլոր ներկայ եղողները ձգած էին իրենց

վզին կապոյտ ժապաւէններ:

Ս. Ազնաւուրը նախ ֆրանսերէն լեզուով ժողովը բաց արաւ ու կարդաց “Մեծ Արեւելք” ֆրանսական մայր օթեակից ստացուած արտօնագիրը և հաստատման վկայագիրը, որը լսուեց յոտնկայս: Այնուհետեւ Հայ Ազատ Որմնադիրների կողմից նա յայտնեց խորին շնորհակալութիւններ ներկայ գտնուող օտարազգի հիւրերին:

Անգլիական դեսպանը հիւրերի կողմից իր բարեմաղթութիւնները յայտնեց “Սէր” առաջին հայկական լեզուով գործող օթեակին: “Այս օրւան է գործելով ի փառս Տիեզերական Եղբայրութեան զգացումների տարածման — ձեր հայկական ‘Սէր’ օթեակը — կը կապէ զազգի Տիեզերքի մասոնութեան հետ”:

Այդ ճառից յետոյ օտարազգի մասոն հիւրերը թողին օթեակը:

Փոքր ընդմիջումից յետոյ “Սէր”ի արարողութիւնը շարունակուեց հայերէն լեզուով և տեղի ունեցաւ օթեակի պաշտօնէութեան ընտրութիւնը, որից յետոյ բոլոր եղբայրները հրաւիրուեցին տանը վարի յարկը մասոնական ճաշկերոյթին (ազապ) մասնակցելու:

Ըստ եւրոպական սովորութեան բաժակները բարձրացուցին “ի փառս տիեզերական եղբայրութեան” և յետոյ բարեմախտութիւններ յայտնեցին “Սէր օթեակի բարեյաջողման” և “ազգիս հայոց”:

Ինչ կը նշանակեն մասոնական խորհրդանշանները

Անկիւնաչափը, որ կ’ուսուցանէ մեզի բարոյականութիւն և ներդաշնակ ապրելակերպ մը:

Հարթաչափը՝ սա հաւասարութեան և ուղիղ կենցաղի խորհրդանշանն է:

Ուղղաչափը՝ արդարութեան և ճշմարտութեան նշանն է:

Մուրճը. ան եղած է երկար ատեն եղբայրներուն միջեւ իշխանութեան խորհրդանշանը:

Քերիչը մեզի կ'ուսուցանէ կարգապահութեան առաւելութիւնները, նմանապէս մուրճը անոր ընկերակցող կը յղկէ մակերեսները ինչ որ ցոյց կուտայ թէ պարտինք ուղղել մեր անկանոնութիւնները, հարթել մեր բարքերը բնութեան օրինաց ներդաշնակութեամբ: Այն ինչ որ կ'ընէ մուրճը արհեստաւորի ձեռացը մէջ, ողջմիտ և իմաստուն բանականութիւն մ'ալ միեւնոյն ազդեցութիւնը կը գործէ մարդկային կիրքերուն վրայ՝ սանձելով հպարտութիւնը, անհետացնելով նախանձը, սպառիչ ոգին չափաւորելով բարկութիւնը եղբայրական սիրոյ մէջ: Գոգնոցը, որ ձեզի հագուցին ընծայման ժամանակ, աշխատանքի նշանն է...

Ծեփիչը, որ կ'ուսուցնէ տարածել և ընդհանրացնել եղբայրական սիրոյ ու համակրութեան շաղախը, որ կը միացնէ զմեզ ամենքիս մէկ հատիկ սիրոյ միութեան մը մէջ, որ երջանկութեան սկիզբն է:

Իբր մեծ օրինակ և նշանաբան ընդունեցէք ձեզի այս հոյակապ փառայեղ լուսաւոր աստղը, որ ամրացած կը տեսնէք իմ աթոռի ետեւի բարձրութեան վրայ նա լոյս է և ջերմութիւն կը սփռէ անխտիր ամենուն:

Վերջ:

Անգլիական քէ Ֆրանսական

Հովանաւորութիւն

Անգլիական և ֆրանսական մասոնութեան գործեակերպի տարբեր երանգները մի տեսակ փորձաքար էին դարձած հայ մասոնների համար, որոնք դեռ 1865-ի կէսերից մինչ 1866-ի գարնան անվերջ հանդիպումներ ու մասնաւոր ժողովներ ունեցան, որպէսզի վճռեն թէ արդեօք ո՞ր երկրի մասոնութեան հովանաւորութիւնը ընտրեն: Անգլիայի՞ թէ Ֆրանսայի: Կարեւոր էր այն պատճառով, որ առանց մէկի կամ միւսի հովանաւորութեան, մասոնները չէին կարող բանալ թուրքիոյ մէջ հայ օթեակ, որ ազատ և անկախ լինէր թէ՛ պատրիարքարանների աչքից և թէ՛ տեղական կառավարութիւններից: Ազատ հայկական օթեակ, պատասխանատու անգլիական կամ ֆրանսական Մայր օթեակին, կարող էր միայն դռնփակ գործել իր անդամների հետ: Նա հաշուետու էր իր բարոյական ու նիւթական գործունէութեան համար միայն Փարիզի կամ Լոնդոնի առաջ. կարող էր մի շարք ուրիշ մասնաճիւղ-օթեակներ ստեղծել Հայաստանի գլխաւոր կենտրոններում, գտնել ու ջոկել հայ բնակչութիւնից ամենաընդունակ գաղափարապաշտ տարրերը և ազգային ընտրանիի միջոցով նորանոր օթեակներ բանալ աւելի հեռաւոր հայաբնակ վայրերում՝ ու այդպիսով ամուր գետին պատրաստելու համազգային նոր կառուցուածի համար:

Տեսականօրէն այդ ծրագիրը իրականալի էր, մանաւանդ որ մասոնական գործունէութիւնը միշտ պահանջում էր գաղտնապահութեան սկզբունքը:

Մենք ունէինք անգլիասէր և գաղիասէր կամ ֆրանսական մասոնութեան հետ սերտօրէն կապուած հայ մասոններ: Կարեւոր է ներկայացնել թէ ինչ հիմքերի կամ փաստերի վրայ հիմնուած էր “Մէր” օթեակի վերջնական դիրքաւորումը:

“Մէր” նախապատրաստական ժողովներում, որ տեղի ունեցան Սերովբէ Ազնաւուրի Ղալաթիոյ բնակարանի մէջ, սկզբում տարակարծութիւնները մեծ էին: Ինքը՝ Ազնաւուրը, որին մեծ յարգանքով էին վերաբերում միւս հայ եղբայրները, լայն կրթութիւն ստացած ճարտարապետ էր. տարիներ ապրած էր Լոնդոն, անդամ էր այնտեղի Զորդան օթեակին: Նա և Միքայէլ Ալիշան, որ անդամ էր Պոլսի Օրիէնթալ անգլիական օթեակի նաեւ Աղջիկեան, անդամ անգլիական ինթէգրիթի օթեակի, առաջարկում էին, որ ապագայ հայկական օթեակը ընդունէ անգլիական ազգային Մայր օթեակի հովանաւորութիւնը: Այդ առաջարկի դէմ էին եղբայր Սվաճեանը, Սրապ Հէքիմեանը, Էքշեանը, Երանեանը ու մասնաւորապէս Սերովբէ Թազուրեանը, որոնք պնդում էին, թէ ազգային հեռանկարների տեսակէտից պէտք է ընդունել Ֆրանսայի “Մեծ Արեւելք”ի (Grand Orient) հովանաւորութիւնը՝ կապուելով Ֆրանսայի ու ռումանական երկրներում գործող մասոնութեան հետ:

Անգլիան, —ասում էին նրանք— միշտ Թուրքիոյ պաշտպանը եղած է, ու այդ կացութիւնը երբեք Թուրքիոյ մէջ ապրող այլազգիներուն օգուտ մը եղած չէ: Գալով Անգլիոյ մասոնութեան՝ անիկա շատ յարգուած է անգլիական կառավարութեան աչքին, բայց ոյժ մը չէ

անոր համար:

Կային ասողներ նոյնպէս, որ անգլիական կառավարութիւնը յաճախ մասոնութեան վրայ կը նայէ իբրեւ անգլիական քաղաքակրթութիւնը և անգլիական շահերը արեւելեան երկիրներու մէջ ներմուծող ազդակի վրայ: Այս մտքի մէջ կար որոշ ճշմարտութիւն, որ արդէն իրականութիւն էր և որ յիշատակուած է մանրամասնօրէն, յատկապէս հայերի մասնակցութիւնը մատնանշելով: 1762–1800 թ. տեղացի և քիչ թէ շատ ընտրանի տարրը, ի հարկէ հայերի մէջ կարելի էր գտնել, որ վերաբերում էր հեռաւոր արեւելքին՝ իր մէջ առած մերձաւոր արեւելքը եւս:

Անգլիասէր հայ մասոնները պնդում էին որ, “Անգլիոյ եղբայրները աւելի համերաշխ են մէկգմէկու հետ, ու անոնց մասոնութիւնը աւելի զարգացած է քան գաղիական լոճերու մէջ: Այս ալ աչքերնէս չկորցնունք, որ Անգլիան Բարձր Դրան համար եւս հզօրագոյն պետութիւնն է, որոյ կամքը Թուրքիոյ համար օրէնք մըն է: Յաճախ հոստեղի անգլիացիք աւելի ազատ են Պոլսոյ մէջ իրենց ուզածն ընել, քան թէ Անգլիոյ մէջ:

Հետեւապէս, ասում էին նրանք, հայկական օթեակը, ընդունելով անգլիական մասոնական հովանաւորութիւնը, կ'օգտուի լիակատար ազատութիւնից”:

Բայց այս պատճառաբանութիւնները չէին համոզում Ս. Թազուրեանին և միւսներին, որոնք ասում էին. — “Գաղիոյ ժողովուրդի ասպետական ոգին ամբողջովին ընդունուած է ֆրան-

սական մասոնական օթեակներէն: Ասոնք ոյժ կը ներկայացնեն. եթէ մեծ ոյժ մը չըլլային, ինչո՞ւ Նապոլէոն կայսրը պիտի պահանջէր, որ իր հօրեղբայրը՝ Ժեռօմ Նապոլէոնին անպատճառ մասոնական գերագոյն վարպետի պաշտօնը տրուէր: Եթէ Լիբանանի մասոններուն Ֆրանսան օգնեց, շնորհիւ կառավարչական բարձր պաշտօններու մէջ ծառայող եղբայր մասոններուն էր, որոնց թելադրած էին իրենց օթեակները: Ասոնք Զէյթունի հայերուն ալ կ'ուզէին օգնել, բայց աւա՛ղ, դուրսէն միջամտողներ եղան, Գաղիան ալ մէկ կողմ քաշուեցաւ”:

Ֆրանսական մասոնութեան հետ սերտօրէն կապուած հայ մասոնները ունէին այլ պատճառաբանութիւններ: Նրանք ասում էին, որ Անգլիան “մասոնութենէն ամբողջովին վանած է քաղաքական ոգին, ուստի և անգլիական օթեակներին մէջ մեր կարօտ ազատութեան շունչ տալ կը պակսի...”:

Չնայած որ Ֆրանսիայի 1848 թ. ազատատենչ երազները փոխարինուած էին վաթսուական թուականների նոր համակարգով՝ բայց և այնպէս հայ մտաւորականութիւնը շարունակում էր յիշել նոյն շրջանի ազատամիտ գաղափարները ու շարունակում էր սիրել ազատախոհ Լամառին ու Բերանտէ բանաստեղծներին, արմատական գաղափարախօս Լուի Բլանին և ուրիշներին: Բայց այդ ֆրանսական օթեակներում յաճախ “աշխատանքներ են եղած յօգուտ Լեհ ազգի ճակատագրին” ու մինչեւ իսկ “Ժողովարարութիւններ” են եղած ու մեծ ստակներ ցրուած տարագրութեան մէջ ընկած եղբայրներու:

Նոյն ժամանակներում Ֆրանսական մասոնութիւնը շատ ազդեցիկ դեր էր կատարում Եւրոպայում և մասոնների միտումները այսինքն՝ քիչ թէ շատ քողարկուած ազգային հեռանկարները ունէին իրենց տրամաբանական իմաստը: Գաղտնիք չէր նոյնպէս ե՛ւ այն, որ Ֆրանսական մասոնութիւնը բոլոր Ֆրանսական յեղափոխութիւնների ժամանակ (1789-1830, 1848) թ. “մտքերի յեղափոխիչ” իւրայատուկ ազդեցութիւն ունեցաւ և ինքն էլ ազդուեց նրանցից:

Ֆրանսական մասոնութիւնը ու նրա կենտրոնական օթեակ “Մեծ Արեւելք”ը կրում էր մի ուրիշ բնոյթ էլ, որ հայ մասոնների մի մասի մէջ համակրանք էր յարուցանում: Այն է՝ նա ժխտում էր նորագոյն ժամանակների համար բարձր կղերի դերը մարդկային յառաջամտութեան տեսակէտից, ու հռչակել էր իրեն հակակղերական, թէեւ ոչ հակակրօն, կրօնը թողնելով մասոնների խղճի ազատութեան:

“... ես կը նախընտրեմ խնամութիւն մը կապել Գաղիոյ մասոնութեան հետ, քան թէ Անգլիոյ, չէ թէ ասի անբաժան է. չէ՛, քաւ լիցի, այլ ինչ որ է. Անգլիան մեր հոգուն ու ազգերնու շահին քիչ մը գիտես քի հեռու կանգնած է”, - ասում էր ջղուտ, փոքրահասակ Վ. Թադ-ւորեանը, “Պզդի Սերօբը”, միշտ կորովի ու հաւատաւոր այդ մարդը, որ ի վերջոյ կարողանում է համոզել բոլոր ներկայ եղող եղբայրներին, որ “Մէր”ը Ֆրանսական մասոնութեան (Մեծ Արեւելքի) հովանաւորութեան տակ մտնի ու նրանից հաստատուի:

Քանի որ եղբայրները յանձին Ազնաւորի

...նախ օրոք ապագայ նախագահը, անհրաժեշտ են համարում Ս. Ազնաուրի գոնէ մի առաջարկը ընդունել, որ "Օթեակի արաբողութիւնները կամ ծեսերը պիտի կատարուին ոչ թէ ֆրանսական կրճատուած ու փոփոխուած ձեւերով, այլ անգլիական Սկովտիոյ ընդունուած ծրագրով":

Քանի որ այդ ժամանակ ֆրանսական "Մեծ Արեւելքի" և անգլիական "Մեծ Օթեակի" կանոնագրութիւնների խտրութիւն չկար, ուրեմն "Մէր" օթեակը կապուեց ֆրանսականին: Այսպիսով "Մէր" օթեակը կը կազմակերպուի: Միաձայն քննարկելով "Մասիս"ների խմբագրապետ կարապետ Իւթիւճեանին կը յանձնուի Ֆրանսայի "Մեծ Արեւելք"ի սահմանադրութեան թարգմանութիւնը, որ լոյս կը տեսնի 1875-ին, Կ. Պոլսում:

"Մէր" օթեակը համարեայ ամէն մի ամիս նոր անդամների ընտրութիւն էր անում: Ինչպէս հայ բողոքական ազգապետ Ղազարոս Տաւուտը (1867, Փետրուար 7), հայ լուսաւորչական բարեգործ, շատ ազգային միութիւնների անդամ Սիմոն Մաքսուտ Պէյը (1867 Յունիս): Հայ կաթողիկոսութեան թատերագիր և բանաստեղծ Մկրտիչ Պէշիկթաշեանը (1867, Մարտ 21)-ին: Պէշիկթաշեանի "Ընծայումին" կը նուագեն "եղբայր Մոցարթ"ի մի քանի երաժշտական կտորները, իսկ տաս եղբայրները կ'երգեն "Նոր Ընծայի" "Տուր ձեռք ինձ, եղբայր ենք մենք"ը:

Շատ կարեւոր է ներկայացնել հետեւեալ տասնութէկ հայ մասոնների հակիրճ կենսագրականները, քանի որ սկզբնական ութ և ինը

ամիսների ընթացքին համախմբել էին թրքահայութեան ընտրանին, որ մեծ պատկառելի ազդեցութիւն ունեցան պոլսահայ բարոյական միջոցաւոր վրայ:

1. Մատթէոս Մամուրեան, հայ մտաւորական՝ "Վրոյր", "Շահնուր" կեղծանուններով եւս ստորագրում էր հետաքրքրական յօդուածներ Չմիւռնիայի "Ծաղիկ"ում, Պոլսի "Մասիս"ում, "Մեղու" երկշաբաթաթերթում և կամ Թիֆլիսի "Կռունկ"ում: Վաղ, երիտասարդական տարիքում, Պոլսից առաջ, Չմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանում աշակերտների ոյժով աշխարհաբար թատերական խաղեր ներկայացրեց վարժարանի բեմի վրայ: Յետոյ տուեց մի շարք թարգմանութիւններ գեղեցիկ հայերէնի վերածած Բոմառչէի և Վոլթեռի երկերից:

Յիշատակենք այդ ժամանակին առնչւող այս բացասական և գռեհիկ արտայայտութիւնը:

«Խաւարամիտներու պէս Չամուրճեանը, "Երեակ"ում գրում է "կարգ մը հայ երիտասարդներ ուսմակապետութեան գաղափարներով սրտերը լցուած Վոլթէռի անունով երդուողներ են: Գիտե՞ն արդեօք այդ ճահիլները, որ արուեստներու ու գիտութեանց հետեւելն ալ հոգեկեցոյց առաքինութեանց կարգը դնելն՝ հեթանոսական գաղափար մըն է:"

«Գիտեմ», պատասխանել էր Մամուրեան, «եթէ ասով է որ հեթանոս եմ, ուրախ եմ»:

Եօթանասուն թուականներին Մամուրեանը արդէն մօտենում էր յեղափոխական ըմբռնումներին: Այդ ժամանակն էր որ սկսեց գրել իր վէպը "Սեւ Լեռի Մարդը", մի վէպ 1829 թուի

ռուսահայոց կեանքից:

Յատկանշական է, որ դէպի խիզախ և իտէալիստ հերոսների նպատակն էր “Արարատեան Աշխարհի Ազատումը”, որից յետոյ վէպի հերոսները մտնում են ժողովուրդի մէջ ընկերային քաղաքական պրոպականդ անելու նպատակով: Մամուրեանի մտածելակերպի համար բնորոշ է նոյնպէս և այն, որ վէպի հերոսը ասում էր. «Մեր յոյսն այս լեռան վրայ է, ես դիւանագիտութեան չեմ կրնար վստահիլ. դիւանագիտութիւնը բանաբանութեան վրայ իր ոյժը կը հիմնէ և ինքն անգոր է»:

2. Յարութիւն Սըվաճեան՝ նոյնպէս ծանօթ դէմք էր ժամանակակից պոլսահայութեան մէջ: Դա “Մեղու”ի հռչակաւոր խմբագիր-հրատարակիչն էր, յայտնի նաեւ “Մեչեխուչա” գրական կեղծ անուան տակ:

Տարիներ շարունակ “Մեղու”ի էջերում մերկացրնում, գանակոծում էր հայ հանրային կեանքի ջոջերի —ամիրա, պատրիարք, ազգային երեսփոխան, Ջուհաճեան, եւայլն— “մահացու, ազգամնաս արարքները”: Միշտ անշահախնդիր, միշտ հեգնանքի ու երգիծանքի ենթարկող իր հակառակորդներին, նա սակայն, միշտ չափազանցում էր և միշտ ճանճի բզզոցը առիւծի գոռոցների տեղ ընդունում: Իրական կեանքին յարմարուող չէր և միշտ տուժում էր: Ջքաւոր ընտանիքի գաւակ էր: Ինքնակրթութեամբ էր մտաւորականների շարքն անցած: Մինչեւ վերջը աղքատ մնաց, ինչպէս աղքատ ու չքաւոր էր այն գաղթականը, որի դառն վիճակը նրա սրտին այնքան մօտ էր:

Սըվաճեանն էր առաջինը, որ Ազգային Սահմանադրութեան առաջին օրերի ոգեւորութիւնից յետոյ, իր “Մեղու”ի մէջ բողոքեց Ազգային Ժողովի անգործութեան դէմ՝ ասելով թէ նա բուն ժողովուրդը թողած՝ չի ուզում կամ չի կարող հայ ժողովուրդի իսկական շահերը պաշտպանել: Եւ Ազգային Ժողովը, “եւք մը գտնելու համար”, դիմեց գրաքննչական ատեանին և խափանեց “Մեղու”ն՝ կիսա-կղերական, կիսա-“ազատամիտ”, կիսա-խաւարամիտ բլոկի աջակցութեամբ:

Բայց Սըվաճեան չվհատուեց: 1866-ին նա հրատարակեց “Մատնութիւն” վերնագրով գրքը՝ քոյկը, որտեղ աւելի մեծ թափով, աւելի ուժգնօրէն յարձակուեց Պատրիարքի քաղաքականութեան վրայ ու մերկացրեց նրա քսութիւնները:

Նա իր ժամանակի հայ արմատականներին խմբակին էր պատկանում: Նա “կայծակի արագութեամբ”, ինչպէս ինքն էր ասում, սիրեց ու մտերմացաւ “Ազատն Աստուած”ի հեղինակի հետ, երբ վերջինս ապրելով մի քանի ամիս Պոլսում ժողովել էր իր շուրջը “յառաջդիմական ու լուսաւորեալ” երիտասարդ տարրերը:

Սըվաճեանն էր, որ իր “Մեղու”ի էջերը տրամադրել էր Միքայէլ Նալբանդեանին և ռուսական բանակուիւններին: Այդ էր պատճառը, որ Գ. Վարդապետ Այվազովսկին դիմել էր ռուսներին գործոց նախարարութեան ու համոզել էր արգիլել “Մեղու”ի մուտքը Ռուսաստան, իբրեւ “հակա-եկեղեցական, անաստուած, հակա-կառավարական ու յեղափոխական թերթ”:

Սըվաճեանն էր, որ պայքար մղեց “յօգուտ

հայ աղջկանց կրթութեան” և յօգուտ այն բոլոր հարցերի, որոնք տրուած էին եւրոպական դեմոկրատ-արմատական մամուլի էջերում:

Սըվաճեանի կողքին նստած էին պոլսահայերի միւս երկու հրապարակագիր ու “խմբագիր-տնօրէնները” Ստեփան Պ. Փափազեան, որ “Ժամանակ”ի խմբագիրն էր և կարապետ Իւթիւճեանը, որ “Մասիս” թերթն էր հրատարակում:

3. Ստեփան Փափազեան չոր ու երկայնահասակ, երկայն ոտքերով ու ձեռքերով մի մարդ էր, դէմքը մի քիչ տխուր, բայց սիրտը միշտ լցուած հաւատով, “եթէ ազգերնուս մէջ միութիւն ըլլայ, ամէն աղէկ բան կ’ըլլայ”: Նա էր, ինչպէս իր ժամանակակից հրապարակագիրները, իր տուրքն էր տուել “բանաստեղծութեան”, Սահմանադրութեան առաջին շրջանին և ամէն առթիւ միութիւնն էր փնտռում և միութիւնն երազում:

Հետագային, եօթնասուն թուականներին, ակնարկներ էին տեղի ունենում, որ “Հայն ալ կրնայ արիւն թափել”, Փափազեանը գրում էր: “Արիւն ալ մնա՞ց ազգիս երակներուն մէջ, որ ազգը ելլէ ու արիւն թափէ”: Այս խօսքերի համար եղան մեղադրողներ: Բայց մեղադրողները հազիւ թէ մտածում էին, որ “արիւն թափելէ առաջ” հայութեան պակսում էր նախ քաղաքական կազմակերպութիւն, որպէսզի թափած արիւնը արդիւնք տայ:

Ս. Փափազեանը իր “Ժամանակ” լրագրի էջերը բաց էր արել հայ գաւառներում տեղի ունեցած բռնութիւնների մասին գրուած թըղթակցութիւններին: “Սէր” օթեակին նա ներկա-

յացրած էր բազմակողմանի մի “աշխատանք” հայ ուսուցչի մասին:

Եթէ մինչ ցայսօր, —ասում էր նա այդ դրութեան մէջ— վարժապետներ մեծաւ ահիւ և երկիւղածութեամբ սպասարկութեան կը կանգնին ամիրայի մը տան մէջ անոնց հրամանին ակնդէտ մնալով ու ամիրայի զաւակին հետ պարապելու միջոցին անընդհատ լսել “վարժապետ ջուր մը բեր, վարժապետ չպուխիս կրակ մը տուր”... ա՛լ պէտք է ազգովին բողոքենք այդ վիճակի դէմ ու փոփոխենք զանի:

Սա Փափազեանն էր, որ համարձակօրէն բողոքեց Ազգային Ժողովի Նախագահ Սէրվիչէնի ծրագրի դէմ, որտեղ ասուած էր. “Քանի որ վարժապետը ազգի ստակով կ’ալրի, ուստի լրագրապետ չի կրնար ըլլալ”: “Ասիկա” ասում էր Փափազեան, “վարժապետի ձայնը խեղդելու միջոց մըն է. կ’ուզեն ըսել ‘Դու վարժապետ ես, քո լեզուն քիչ մը կարճ բռնէ դուն խոհմութեամբ գրէ’”...

4. Կարապետ Իւթիւճեանը աւելի դիւրագրգիռ, աւելի ջղային, թէեւ ի վերջոյ միշտ ներողամիտ ու համբերատար, նա երկար տարիներ “Մասիս”ի խմբագիրն եղաւ և մի ամբողջ սերունդ կրթեց ու պատրաստեց Պոլսի հայ հանրային կեանքի համար:

Դեռ յիսնական թուականներից նա առաջինն էր, որ Ժողովրդականացրեց տնտեսական հարցերը հայ մամուլի միջոցով: “Մասիս”ի էջերումն էր, որ Փարիզ կրթուած Նիկողայոս Զարոյեանը զետեղեց ուսումնասիրութիւններ պոլսահայութեան տնտեսական վիճակի մասին,

առաջարկեց խմբագրի հետ միասին համագործակցութեան —կօօպերատիւի— գաղափարը պոլսահայ վաճառականութեան ու արհեստաւորներին:

Կարապետ Իւթիւճեանը “Սէր” օթեակի մէջ տարին երկուսից երեք անգամ “աշխատանքներ” էր ներկայացնում “Եւրոպիոյ անցուղարձի” մասին: Այսպէս՝ նա հաղորդում էր Ալպանիոյ և Կրետէի ապստամբութեանց վերաբերեալ նիւթեր ու խորհրդաւոր կերպով աւելացնում. “Ֆրանսան վճռական կերպով խորհուրդ տուած է Տաճկաստանին կացութիւնը դիւցազնական դարմանումներու ու գործունէութեան պիտի կալօտի”:

Մէկ ուրիշ առիթով գրել է հետեւեալը. “Հաստատ տեղեկացած եմ, որ Ֆրանսական կառավարութիւնը պահանջած է քրէթացիներու, սելւեռնցիներու խլրտման առթիւ ընդհանուր բարեկարգութիւններ, իսկ Ռուսիոյ դեսպանը ասած է քրիստոնեայ ազգերու վերաբերմամբ՝ Autonomie ou Anatomie —ինքնավարութիւն կամ անդամահատութիւն— ու մեծապէս տպաւորութիւն թողած է Բ. Դրան վրայ:

Այդ զեկուցումից յետոյ գերյարգելի վարպետը, տեսնելով “Սէր”ի անդամների յուզումը, ընդմիջում է նիստը:

5. Սրապիոն Հէքիմեանն, 34-35 տարեկան, որ օթեակի կազմութիւնից առաջ պոլսահայ հանրային կեանքից հիասթափուած՝ ընկած էր բարոյական խարխափումների մէջ: Մկրտիչ Պէշիկթաշլեանի հետ հայ թատրոնի հիմնադիրներից մէկն էր: Նախ քան Հայ թատրոնը,

յիսնական թուականների կէսին, Պոլսի Նաումի թատրոնում նա սկսել էր թրքերէն լեզուով բեմադրութիւններ անել, սակայն Պէշիկթաշլեանի ազդեցութեան տակ հասկանալով իր սխալը, մեծ եռանդով նուիրուեց հայերէն թատերգութիւններին: Իր ընկերոջ նման սկսեց գրել գրաբար և կիսագրաբար հայ պատմական ու համարեա միշտ չափաբերական ողբերգութիւններ հայ բեմի համար:

Ստեղծուած էր “Արեւելան Թատրոնը”, ինքն էլ ղեկավար՝ հայ անդրանիկ թատրոնին: Բեմը օժտուած էր իր ժամանակի եւրոպական թատրոնների գրեթէ բոլոր կատարելագործութիւններով: Դերասանները ստանում էին ամսականներ:

Հէքիմեանի խմբի մէջ կային լաւ ոյժեր, ինչպէս Մնակեան, Պէնլեան, Թրեանց և առաջին հայ դերասանուհիները՝ երկու քոյր Արուսեակ և Աղաւնի Փափազեաններ:

Նա եղել էր թէ՛ դերասան, թէ՛ թատրոնի ղեկավար, և թէ՛ մանաւանդ հեղինակ երեք հատոր թարգմանութիւնների, բայց անուանում էին “Բանաստեղծ”:

6. Սերովբէ Թագուրեանը իր մտերիմներու շրջանում կոչւում էր “Պզտի Սերոբ”: Հասակը կարճ էր, բայց միտքը “երկար”, ասում էր նրա մասին Սըվաճեանը: Ինչպէս յիշուած է նա Ֆրանսական օթեակով էր տարուած: Նա երբեմնի Պոլսի “Բարեգործական Ընկերութեան” վարիչներից մէկն էր: Զէյթունի ապստամբութեան շրջանին նուիրուած էր Զէյթունի նիւթական օգնութեան գործին:

Պոլիս վերադառնալուց առաջ մի առ ժամանակ մնում է Փարիզ, շփուում է ֆրանսական հանրապետականների շրջանում, նրանց օգնութեամբ ընդունում է “Les Vrais Amies” մասունական օթեակի մէջ, կապեր հաստատում ֆրանսական արմատական քաղաքական գործիչների՝ Ժիւլ Ֆավուի և Ֆլօքէի հետ ու վերադառնում է հայրենիք։

“Սէր” օթեակում թագաւորեանը քաղաքական միտումներ էր ուզում ներմուծել մասունական “աշխատանքների” մէջ և որ ընդգծուած հակառուս քաղաքականութեան էր հետեւում ազգային գործերում։

Հետագային, ռուս-տաճկական պտերազմի և Բեռլինի համաժողովից յետոյ՝ ընդմիջտ տեղափոխեց Փարիզ, քաշուեց իր պատեանի մէջ և նուիրեց լեզուաբանական հարցերին։ Ֆրանսերէն լեզուով հրատարակեց “Essai d'un systeme de linguistique comprenant l'interpretation des racines par les lettres de Palphabet, appliquee a la langue Arménienne”, 1881.

7. Ռոմանոս Սէտէֆեան, նկարիչ և ճարտարապետ։ Օթեակի գանձապետը։ Նրան էր յանձնուած 1867 Մարտին, ի յիշատակ Մ. Նալբանդեանցի մահուան տարեդարձին, մի մեծ ներկայացում կազմակերպել Պոլսի թատրոնում։ “Մասիս”ի խմբագրութիւնը այդ առթիւ իր 18 Մարտի համարում գրում է.-

“Այս վառվռուն խաղը ամենայն կերպիւ արժանի էր Մ. Նալբանդեանցին։ Օր. Ե. Գարագաշեան ճառ մը արտասանեց Ռ. Սէտէֆեանի հեղինակութեամբ ու փոքրիկ Վիրգինիա Գարա-

գաշեան Նալբանդեանցի հոգին ձեւացնելով, անդրչիրիմէն դուրս եկաւ և ազատութեան վրայ անոր գրած տաղն երգեց։” Այնուհետեւ տեղի ունեցաւ Սէտէֆեանի “Վարդան Մամիկոնեան” ողբերգութիւնը, երաժշտութեամբ Զուխանեանի։

Բնորոշ էր Սէտէֆեանի համար, որ նա իր ողբերգութեան մէջ մի քանի անգամ հայ քաջերին կոչել էր տուել “Հայը Հայաստանին, Հայաստանը Հայո՛ւն”։ Նա գրած էր նաեւ “Կործանումն Ռուբինեանց թագաւորութեան”ի ողբերգութիւնը, որի մէջ դերակատարներ էին դերասանուհի Օր. Արուսեակ Փափագեանը և երիտասարդ Պետրոս Աղամեանը։

8. Մ. Երամեան, հաւանաբար հանգուցեալ տաղանդաւոր Գ. Երամեանի եղբայրը։

9. Էքշեանը՝ հայ բեմը պաշտող, տաղանդաւոր դերասան։ Յիսնական թուականներին յաջողեց հայ կին դերակատարներ բեմ բարձրացնել, յանձինս Օ. Ֆանին և Օր. Ա. Փափագեանին։ Այդ ժամանակներում հայ կնոջ բեմ դուրս գալը “Մենծ գայթակղութիւն” էր համարում պոլսահայութեան մէջ։

10. Յակոբիկ Նորատունկեան՝ պատկանում էր հայ արմատական մտաւորականութեան։ Զբաղւած էր ազգային հարցով և ունէր ինքնատիպ ծրագիր։ Զէյթունի դէպքերից յետոյ, Հռոմից գրում էր Մկրտիչ վարդապետ խորիմեանին։

“Մէկդի թողունք հայկական դանդաղութիւնը. ձեռք ձեռքի տալով ջանանք թափանցելու հայու սրտի մէջ վաղեմի հայկական հայրենասիրութիւնն ու իր գլխուն մէջ խորին քաղաքականութեան և ճարտար զինուորութեան

հանձարն և վերջապէս ասոնցմով Հայաստանի անգութ չղթաները խորտակելու: Կարելի է հարցընել թէ ո՞վ կարող է զանոնք գործադրելու, այն ժամանակ պիտի պատասխանեմ՝ մենք, և միմիայն հետեւեալ յօդուածներն անմիջապէս ընդունելով:—

Ա. Մասնակցութիւն երեք կամ հինգ անդամներէ բաղկացեալ:

Բ. Նպատակն ազգիս արտաքին գործերը վարել:

Գ. Նպատակն Հայաստանի չղթաները խորտակել. ասիկա երկար տարիներ յաջորդաբար աշխատելով առանց վհատութեան, խոհեմութեամբ, և ասանկով նպատակնուն հասնիլ... Բնաւ չեմ կասկածիր, որ մերժէք, որովհետեւ գիտէք թէ պտուղները մօտ ժամանակի մէջ պիտի տեսնենք: Գիտէք թէ Զէյթունի գործքը այսպիսի խայտառակ կերպով չէր բռնուեր”...

Խորմեանը գտնուելով հեռաւոր գաւառներում և ունենալով իր առանձնայատուկ գործելակերպը՝ Յակոբիկ Նորատունկեանի առաջարկին չպատասխանեց:

Նորատունկեանները երկու թէ երեք եղբայրներ էին ու Պոլսի յայտնի իբրեւ շատ կրթուած ընտանիքներ:

Հայրս, —պատմում էր Գաբրիէլ Նորատունկեան, որ Յակոբիկի եղբորորդին էր ու “Սէր” օթեակի անդամ ընտրուել եօթանասունական թուականներին— ունէր զանազան լեզուաց հարուստ մատենադարան ու ես ալ անկէ կ’օգտուէի: Օր մըն ալ Չամուռճեան պատուելին մեզի եկած էր ու զիս տեսաւ “Թափառական Հրեայ”ի ընթերցանութեան վրայ: Ինծի բան մը չըսաւ,

բայց հօրս սկսեց համոզել, որ անիկա արգիլէ ինծի այդ գրքի ընթերցումը: Ու ինծի դիմելով ըսաւ. “Սա Գաղիոյ ու գերման փիլիսոփաները, ըլլայ Վոլթեր, ըլլայ Եփրէնզ կամ Հէկել, զանոնք կարդացած եմ, բայց անոնք ամէնքն ալ անհաւատ են, զաւակս”: Հայրս ոչինչ չպատասխանեց և, խօսքը փակելու համար, թաս մը սուրճ հրամցուց:

11. Գրիգոր Զիլինկիրեան՝ Զմիւռնիայի “Տիգրան” օթեակի անդամ և “առաջին հսկող”: Եկել էր Պոլիս իր սիրած բանաստեղծ Մկրտիչ Պէշիկթաշլեանի “Սէր” օթեակի “Ընծայման” արարողութեան ներկայ գտնուելու: Երեսունը բոլորած, եռանդուն, Եւրոպայի արմատական գաղափարները ընդգրկած, խմբագիրն էր նաեւ Զմիւռնիայի “Ծաղիկ” երկչաբաթաթերթի: Մի առ ժամանակ ուսուցիչ էր նաեւ Մեսրոպեան վարժարանում, որ կ’ստիպուէր հրաժարելով ուսուցչական պաշտօնից, քանի որ “չափէ դուրս ազատախոհ էր, չափէ դուրս կղերին քննադատող ու չափէ դուրս պայքարող հոգի ունէր”: Նա յայտնի էր որպէս լաւ թարգմանիչ: Թարգմանել էր երեսուն հատոր Ֆրանսական վէպեր Վիկտոր Հիւգօյից, Էօթէն Սիւլից, Փռէվօից, Ֆօյէից, Ժորժ Սանդղից, Միւսէից և ուրիշ հեղինակներից: Կարելի է ասել որ վաթսուական և եօթանասունական թուականների թրջահայ ընտանիքներում աշխարհաբար ընթերցանութեանը ամենամեծ զարկ տուողներից մէկն էր Գրիգոր Զիլինկիրեանը:

Պոլսում այդ ժամանակաշրջանում չունեցանք հայ կեանքին վերաբերող զանազան և

սիրային վէպեր: Հայ ամիրայի, հայ քաղքենիի, հայ քահանայի ընտանիքներում մի տեսակ “գայթակղութիւն” էր համարուում, եթէ սիրային վէպը, երկու սեռերի սիրոյ զգացմունքների ելեւէջները ներկայացուած լինէին իբրեւ թէ տեղի ունեցած է հայ ընտանիքում:

Կողմնակիօրէն հայ վէպի գոյութեան և չգոյութեան վրայ ազդում էր նաեւ 1805 թ. Օսմանեան կառավարութեան տպագրական օրէնքը: Հայերէն գիրքը դուրս գալուց առաջ, հեղինակը պիտի ստանար հայոց պատրիարքի թոյլատուութիւնը ու տպագրուած գրքի վրայ պէտք է կցուած լինէր “Հրամանով . . . պատրիարքի”...

Գրիգոր Զիլինկիրեանն էր, որ շատ տարիներ յետոյ խրախուսեց ու համոզեց Գ. Տիւսաբին հրատարակելու իր “Մայտա” վէպը:

10. ԹԻՒՐԳԻՈՅ “ՍԷՐ” ՕԹԵԱԿԻՑ ՅԵՏՈՅ

“Սէր” օթեակը ունեցաւ շուրջ 30 տարիների ազգապահպանման բեղմնաւոր գործունէութիւն — 1866–1896: Իրենց մասնակցութիւններն են բերել բժիշկներ, պետական պաշտօնեաներ, գրագէտներ, մտաւորականներ և վաճառականներ: Ազգային օգտաշատ գործունէութեան նպաստած են եղել արտաքին շինիչ տարրեր: Նախ՝ մամուլը, Զմիւռնիոյ “Արմենիա” Արարատեանը, Մամուրեանի “Արեւելեան Մամուլը” և իր “Մասիս”ները, Պոլսոյ վարժարաններ՝ Պէրպէրեանը, Իւսկիւտարի Սուրբ Խաչը, Մայր Վարժարանը, Սահակեան, Մեսրոպեան, Սուրէնեան և վերջապէս Խասգիւղի Ներսէսեանը, յետոյ հայ թատրոնը՝ Ադամեանը, Մկրտիչ Պէշիկթաշեանը, Թովմաս Թէրզեանը, որ «Odd Fellows»-“Բարի Ընկերաց” մասոնական ճիւղի պետ նշանակուած էր:

Օսմանեան Սահմանադրութեան հռչակումից օգտուելով, ութ մասոնական հայ եղբայրներ՝ Ամերիկայից և Պէյրութից վերադառնալով Խարբերդ, կը դիմեն Grand Lodge of Scotland Մեծ օթեակին, էդինբուրգ, 1909-ին թոյլտուութիւն կ’ստանան բացելու Խարբերդի “Եփրատ” օթեակը, թիւ 1078 (Մամուրէթ-Իւլ-Ազիզ): Այդ

օթեակը խիստ օրինակելի և անջնջելի հետքեր կը ձգէ հայ ազատ որմնադրութեան պատմութեան մէջ:

Արժանի է յիշատակումն ութ հիմնադիրներէն անունն ազգանուններէ, որոնք ձգած արտասահմանեան հանգիստ կեանքը, վերադառնում են հայրենիք:

1. Վարդան Ս. Վէգնեան, Connecticut, Widow's Son “Այրիին Որդի” թիւ 1 օթեակից:

2. Սերոբէ Կ. Վարդեան, Պէյրուսից, Peace “Խաղաղութիւն” թիւ 908 օթեակից, Սկովտիական Մեծ Օթեակի հրամանի տակ աշխատող, որ յետոյ եղաւ Եփրատի առաջին գերյարգելի վարպետը:

3. Ոսկան Յովհաննէս Թոփալեան, Պէյրուսից, նոյն օթեակից:

4. Յարութիւն Կիրակոս Թէրզեան, Պէյրուսից, նոյն օթեակից:

5. Յովհաննէս Կիրակոս Թէրզեան, բժիշկ, Պէյրուսից, նոյն օթեակից:

6. Յարութիւն Գասպարեան, Նիւ Եորքի “Նաշընալ” թիւ 209 օթեակից:

7. Խաչատուր Տէր Մանուէլեան, Նիւ Եորքի նոյն օթեակից:

8. Մարտիրոս Կ. Օնանեան, “Ինտիանա-փոլիս” թիւ 575 օթեակից:

Հոկտեմբեր 29, 1910-ից մինչ Նոյեմբեր 1, 1913, շուրջ 29 տեղացիներ, որոնց մէջ երկու Հիւսէյնիկցիներ կ'անդամակցին օթեակին:

Առաջին Համաշխարհային պատերազմից առաջ, Խարբերդ քաղաքը ունէր շուրջ 15-20 հազար բնակչութիւն: Գոյութիւն ունէր Ամերիկ-

եան և Ֆրանսական քուէջներ, նաեւ Թլկատին-ցիին (Յովհաննէս Յարութիւնեան) բարձրագոյն վարժարանը:

Եփրատ քուէջը հիմնուած էր 1878-ին, Խարբերդ, որ կարծես նկատուած էր իբրեւ մի Աթէնք արեւմտեան Հայաստանի մէջ, իր կողքին ունենալով Մէզիրէն:

Խարբերդ Մէզիրէով, ազդուած շրջակայ-գիւղերի բնական գեղեցկութիւններից և հայրենաշունչ մթնոլորտից, արտադրեց ընտիր գրագէտների, դեղագործների, փաստաբանների, արուեստագէտների մի շարք, ինչպէս, Թլկատինցին, Ռուբէն Զարդարեանը, Ռուբէն Որբերեանը, Փրոֆ. Կարապետ Սողիկեանը, Փրոֆ. Տօնապետ Կ. Լիզէճեանը և շատերը:

Եփրատ օթեակի 13 հոգիներից միայն մէկ հոգի կ'ազատուի ահաւոր սպանդից:

Պոլիս՝ 1915-ից յետոյ

Պոլսի, 1918-ի “Հայաստան” օթեակի կազմութիւնը, որ ըստ “Սէր” օթեակի հեղինակ Ա. Ֆէնէրճեանի “Հայաստան” թիւ 1185 օթեակի հանդիսաւոր բացումը կը կատարուի, Բերա, Բուլօղլու փողոց, թիւ 1, Կ. Պոլիս, Երկուշաբթի, Հոկտեմբեր 18, 1920, երեկոյեան ժամը 8:30-ին երկու հարիւրից աւելի հիւրերի ներկայութեամբ:

Հայկական Ազատ Որմնադրական պատմութեան մէջ առաջին անգամն էր, որ Հայկական Պետութեան Կարմիր, Կապոյտ և Նարնջագոյն երանգներով շինուած դրօշակով “Հայաստան” թիւ 1185 օթեակը կը սկսէր իր

աշխատութիւնները:

Բացառիկ մի երեւոյթ, որ տեղի կ'ունենայ Թուրքիոյ մէջ:

Օծման արարողութիւնը կը կատարէ P. C. A. Leete, նախկին գերյարգելի վարպետ “Օրիէնթալ” թիւ 687 օթեակի, հիմնուած 1856, 25 Նոյեմբերին, Խորմի պատերազմի միջոցին:

Երբ Նոյեմբեր 11, 1918-ին Բրիտանական, Ֆրանսական, Իտալական և Յունական նաւատորմի ղեկները հեզասահ գնացքով մուտք կը գործէին Պոլսոյ նաւահանգիստը ու Տուժա Պահէի, Սէլիմիէի ու Պէշիկթաշի հանդարտ ջրերի մէջ կը խարսխուէին, այդ ժամանակ, Դեկտեմբեր 4, 1918-ին Սկովտիոյ Մեծ Օթեակից և Պոլսի “La Turquie” թիւ 1049 Ֆրանսասօս օթեակից կախում ունեցող հայ ազատ որմնադիրները ժողով գումարելով, Դեկտեմբեր 2, 1918-ին յատարարութիւն կը յղեն Սկովտիոյ Մեծ Օթեակի մեծ քարտուղարին՝ Դէյվիդ Րիդին, շնորհաւորելով և ողջոյններ ուղղելով Մեծն Բրիտանիոյ, Սկովտիոյ, Իրլանդայի եղբայրներին, արդարութեան մեծ յաղթանակի համար, որ ձեռք բերւեցաւ Տիեզերական Համաշխարհային Պատերազմի մէջ՝ բռնակալութեան ոճրագործ տիրապետութեան վրայ: Այս պաշտօնագրի մէջ մասնաւորապէս կը շեշտուէին հայ մարտիրոսացեալ ազգի անօրինակ տառապանքները և անհուն կորուստները և անկախ Հայաստանի կազմութեան համար ազգային բաղձանքները կը ներկայացուէին մայր Մեծ Օթեակին՝ խնդրելով անոր բարեացակամ օժանդակութիւնը առ այդ:

Վերոյիշեալ նիստը կը գումարուի հայ մա-

սոնների պատմագիր և նաեւ “Լա Թիւրքի” թիւ 1045 օթեակի քարտուղար՝ Արմենակ Ֆէնէր-ճեանի բնակարանում:

“Հայաստան” օթեակի առաջին թեկնածուն եղած է Յովհան Մայրագոյն Վարդապետ Կարապետեանը, որ “Հայաստանի Կոչնակ”ի Հոկտեմբեր 4, 1924 թիւին մէջ ձօնած է սիրուն մաղթանք մը “Գիտակից Սէր” վերնագրով:

“Հայաստան” օթեակը մինչ իր վախճանը 1925 թ. ունեցել է վեց գերյարգելի վարպետներ և հարիւրի մօտ անդամներ: Աչքառու դեր է խաղացել Դաշնակից ուժերի գրաւման միջոցին:

Սկովտիոյ Մեծ Օթեակի կողմից “Հայաստան” թիւ 1185 օթեակի վաւերացման թիւն է Մայիս 1, 1919:

Շատ կարեւոր է շեշտել, որ Անգլիայի և Ֆրանսայի մասոնական կենտրոնական մեծ օթեակներն էին համարուում թէ անկախ և թէ ղեկավարը բոլոր օթեակների: Զանազան ազգերից կազմուած բոլոր վաւերական օթեակները, անգամ իրենց երկրից դուրս, զուտ անգլիական կամ Ֆրանսական՝ պիտի ենթարկուէին կենտրոնին: Ուրեմն, երբեւէ անկախ հայկական օթեակ չէ եղել: Աւելին, իբրեւ խիստ գաղտնի կազմակերպութիւն, եթէ մի անհատ անգամ է որեւէ տեղական օթեակի չի կարող մասնակցել մի ուրիշ տեղական օթեակի առանց կենտրոնի թոյլտուութեան: Այդ պատճառով բոլոր օթեակները դառնում են դերակատարներ՝ նպաստելով իրենց պետական քաղաքականութեան: Այդ միտումով, ներկայացնում ենք Սկովտիոյ Գերագոյն Օթեակի Դեկտեմբեր 3-ի նամակը՝ ի

պատասխան “Հայաստան” օթեակի Յունիս 6, 1919-ի նամակի, որի մէջ հետեւեալ յանձնարարութիւններն է տրուում:

1- Այն ամէն հայերը, որոնք զանազան թըրքական օթեակներու մէջ ընդունուած են և բարձրացած առաջին, երկրորդ և երրորդ աստիճաններու, չեն կարող ընդունուիլ “Հայաստան” օթեակին մէջ իբր անդամակից: Մեծ քարտուղարը կ'ակնարկէր “Great Orient of Turkey”-ի, որուն մեծ վարպետներէն մին եղած էր Թալաթ Փաշան: Անոնք որ կը փափաքին անդամ ըլլալ “Հայաստան” օթեակին, պարտաւոր են իրենց դիմումը կատարել պարտ ու պատշաճ օրինական եղանակով և ըստ այնմ ունենալ իրենց աստիճանի բարձրացումները:

2- Այն մարմինը, որ կազմուած է Թուրքիոյ մեծ օթեակին պատկանող կարգ մը անդամներէ, չէ կարող ճանաչուիլ “Հայաստան” օթեակին կանոնաւոր մարմինը, հետեւաբար չի կարող ընդունուիլ “Հայաստան” օթեակին մէջ: Նմանապէս “Հայաստան” օթեակին անդամներուն թոյլատրուած չէ ունենալ որեւէ որմնադրական գործողութիւն և յարաբերութիւն նոյն մարմնի անդամներուն հետ:

Վերոյիշեալ նամակը օդեակի վաւերացումից յետոյ է ուղղուած եղել:

Չը մոռնանք յիշտակել, որ Յունիս 4, 1923-ի երեկոյեան “Հայաստան” օթեակը կ'ունենայ հանդիսաւոր մի նիստ, ուր Արտավազդ Միւրմէեան — յետոյ արքայիսկոպոս — Ազատ Որմնադրութեան Վսեմ աստիճանը ընդունեց:

“Հայաստան” օթեակի փայլուն շրջանակը

վերջ կը գտնէ 1925-ին: Պայմանների դժուարութեան պատճառով Մայիս 4, 1931-ին հաւաքւելով՝ կ'որոշուի առայժմ դադրեցնել աշխատութիւնները, առաջին կոչին պատասխանելու պայմանով:

Հնարաւորին չափ փորձեցինք ի մի հաւաքել և առանց փոփոխութիւնների, ներկայացնել Թուրքիոյ ու Թրքահայաստանի հայ ազատ որմնադիրների կամ ինչպէս ասած՝ մասոնների պատմականը, որոնք վերաբերում էին Զմիւռնիոյ “Մեծն Տիգրան”, Պոլսի “Սէր”, Խարբերդի “Եփրատ” և նորէն Պոլսի “Հայաստան” օթեակներին:

Հիմա անցնենք հայ օթեակների կազմութեան դրդապատճառներին:

II. ԻՆՉՈՒ ԿԱԶՄՈՒԵՑԱՆ
ՀԱՅ ՈՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕԹԵԱԿՆԵՐ
ԹՈՒՐՔԻՈՅ ՄԵՋ

Որպէսզի հնարաւոր լինի պատմականօրէն ճշտելու այն պարագաները որոնք առիթ ստեղծեցին, որ մի քանի ազգային դէմքեր, մասնաւորապէս՝ պոլսահայ մտաւորականներ, հիմնելու հայկական մասոնական օթեակներ: Ուստի կարեւոր են յիշատակել հետեւեալ մէջբերումները:

Ինչպէս Ռուբէն Բերբերեանն է շեշտել, չնայած որ Պոլիսը կենտրոնն էր հայ մտաւորականութեան, բայց և այնպէս կենդրոնն էր նաեւ հայ ստրկամտութեան և հայ ստրկահոգութեան: Դեռ Տիւզեան ամիրաների եղերական դէպքի շրջանից սկսած՝ հասարակ երեւոյթ էր դարձած, որ պոլսահայերի փոխադարձ կռիւները մէջ հայերը իրար հանդէպ շատ աւելի վատ էին, քան թուրք կառավարութեան հանդէպ: Նրանք աւելի էին վնասել իրենց դաւաճանութիւններով, մատնութիւններով, անսահման չարակամութիւններով, քան կառավարական կաշառակեր ու սրտի խորքում հային ատող թուրք պաշտօնեաները: Լինում էին դէպքեր, գոնէ մինչեւ եօթանասունական թուականը, երբ Սուլթանը աւելի վեհանձն և ազնիւ էր գտնւում հայերի շահերի վերա-

բերմամբ, քան մի Հասունեան պատրիարք, մի գոռոզ ամիրա, մի Վ. Այվազովսկի, մի գաւառական հայ վաշխառու:

Զմիւռնիայի “Արշալոյս Արարատեան” հրատարակութեան խմբագիր Պալթազարեանը, կաշառք ստանալով թէ թուրք կառավարութիւնից և թէ անգլիական դեսպանատնից, անվերջ քսութիւններ էր անում պոլսահայ արմատական մտաւորականութեան դէմ:

Սրապիոն Հէքիմեանի, Մկրտիչ Պէշիկթաշլըեանի ու լաւագոյն ուժերով ստեղծուած հայ թատրոնը, 1865 թուականներին բռնել էր բարոյական անկման ուղին: Թրքասէր Վարդովեան և իր ընկեր դերասանները պղծելով հայ թատրոնը, ազդուրացութեան մէջ փնտելով իրենց դափնիները: Պղծեցին հայ բեմը, հայ լեզուն թրքականի փոխելով և հայ բեմը ողողելով թրքական բարքերի զաւեշտներով:

1860-ին, Պոլիսը գտնւում էր բարոյական հեղձուցիչ մթնոլորտի մէջ, շնորհիւ հայ բարքերի անկման:

1860-ին, Սըվաճեանը որ դեռեւս մասոն չէր, “Ազգային Սահմանադրութեան” սկզբնական շրջանում, իր “Մեղու”-ի մէջ գրում էր. “Միանանք ազգայնութեան փառաւոր դրօշակի տակ: Ազգայնութիւնը ամբողջ ազգն է”: Քանի տարիների ընթացքին, պոլսահայութիւնը զգաց որ “Սահմանադրութիւնը” ազգային-եկեղեցական գործերի կանոնադրութիւն է և ոչ թէ երաշխաւորելու հայ քաղաքացիական ազատութիւնները: 1862 թ. Զէյթունի ապստամբութեան եղերական հետեւանքները, Թրքահայաստանի գաւառներ-

րում տեղի ունեցող բռնութիւնները, խմբական բռնի կրօնափոխութիւնը, քրտական թալանները, առեւանգումները, հարկերի հաւաքման թուրք, երբեմն և՛ հայ վաշխառուների հետապնդման հրէշային միջոցները, սրբապղծութիւնների բազմացումը, եւայլն: Ապա, հայ գաւառացին որեւէ փրկութիւն չէր տեսնում ոչ պատրիարքարանի և ոչ էլ Սահմանադրութեանը շուրջ բոլորած քաղաքական, կրօնական, խառն և ոչ խառն ժողովներից: Պիտի շեշտել, որ Սահմանադրական ընդհանուր ժողովը շարունակաբար զբաղած էր պոլսահայ ազգային կռիւներով ու շահերով և ժամանակ չունէր զբաղելու հայ գաւառացու տառապանքներով:

Պոլսի մէջ, որեւէ հայ ընկերութիւն, ո՛չ եկեղեցին, ո՛չ Ազգային Սահմանադրական ժողովը, ոչ երեք հայ եկեղեցիները չը կարողացան ստեղծել “Սէր”. չկար մարդասիրական կապ Պոլսի և գաւառաբնակ հայերի միջեւ:

Ազգային Սահմանադրութիւնը, Ազգային-եկեղեցական գործերի կանոնադրութիւն էր: Ոչ թէ երաշխաւորելու հայ քաղաքացիական ազատութիւնները:

Յիշատակութեան արժանի է, անցեալում, Պոլսում գոյութիւն ունեցող յետադիմական շարժման պատճառով “Մխիթար Աբբա՛օր իր ծննդավայրը լքելը ու վենետիկ հաստատուիլը: Անկասկած, ատոր մէջ դեր խաղացին Լուսաւորչական-Բողոքական հայ եղբայրներու տգեղ վէճերը: Նոյնը ուզեցին այդ մութ ուժերը ընել Հայ Ազատ Որմնադրութեան հանդէպ”:

Մխիթար Աբբա՛օր՝ Սեբաստացիի հաստա-

տւիլը վենետիկ՝ Մխիթարեան Միաբանութեան կազմաւորմամբ Ս. Ղազար կղզում, թերեւս կարելի է համարել աստուածային ամենամեծ բարիքներից մէկը, որ այդ ժամանակաշրջանում, անհնարին էր պատկերացնել: Արդե՞ք, նման մի ազգապահպանման հսկայ և պատմական միաբանութիւն, ինչպէս կարող էր գոյութիւն ունենալ թուրքիոյ մէջ, եթէ Մխիթար Աբբա՛օրը յաջողէր հաստատուելու Պոլիս, որ ի վերջոյ ենթարկուելով թրքական հալածական քաղաքականութեան պիտի կորստեան մատնուէր ինչպէս պատահեց հայ մասոնական օթեակներին: Պարզ է, որ անցեալում մասոն մտաւորականութիւնը երբեւէ չէր կարող գուշակել ապագան: Այս յիշատակումով ուզեցի նշել որ «չկայ չարիք՝ առանց բարիքի», հայ ժողովրդական առածը:

Անցնինք սոյն նիւթի շարունակութեան և վերջաւորութեան:

Այդ ժամանակաշրջանի պատմականի վրայ հիմնուած, կարելի է ասել՝ «այդ օրերին մասոնական ուսմունքը ընդգրկում էր մի շարք վսեմ գաղափարներ՝ Եղբայրութիւն, Համբերատարութիւն, Օգնութիւն, Ինքնակատարելագործում, Լուսաւորութիւն:

«Ըլլալ ազատ», այսինքն՝ լինել ազատ՝ կանխակալ կարիքներից, աղանդներից, չլինել ստրկահոգի, չենթարկել միտքը որեւէ ստրկութեան, հաւասար աչքով նայել զանազան կրօնքների վրայ ևայլն:

«Ալ ժամանակ է որ կղերը ձեռք քաշէ ազգային կրթութենէն: Ժողովուրդի կրթու-

Թիւնը աշխարհական դպրոցի գործն է, ու լաւագոյն դպրոցն է օթեակը, քանզի անիկա կը պրպտէ, զլոյս և զճշմարտութիւն, կը կատարելագործէ զմասունն և անոր միջոցով զազգը»:

Այսպիսի խոհերով ու ծրագրով էին մտահոգւած թրքահայ ազատ-որմնադիրները, —մասունները— որոնք հաւաքուեցան “Եղբայր” Սերովբէ Ազնաւուրի շուրջը:

Պոլսոյ յետադիմական և ժամանակի ամենաուժեղ դէմքերից մէկն էր Յովհաննէս Տէրոյենց (Չամուռնեան)ը, տնօրէն-խմբագիր՝ “Երեւակ” ուսումնական, բանասիրական և կրօնական կիսամսեայ, ապա՝ ութօրեայ հանդէսի, 1857–62, 1864–66), Պոլսում: Արտայայտուել է կղերա-ամիրայական վերնախաւի հայեացքները, հանդիսացել է հակասահմանադրականների պատւարը, պահպանողական-յետադիմական դիրքերից պայքարել է ընդդէմ դեմոկրատական գաղափարների և նրա ներկայացուցիչների՝ Միքայիլ Նալբանդեանի, Գ. Չիլինկիրեանի, Կ. Ութուռնեանի: “Հիւսիսափայլ”, “Լա Մեղու”, “Ծաղիկ”, ու “Մասիս” պարբերականների արծարծած լուսաւորութեան ու ազատութեան գաղափարները համարել է ազգաւնաս, կրօնն ու եկեղեցին հայ ժողովուրդի «առաջընթացի և ազգային միասնութեան միակ միջոցը»: Մեծ տեղ է յատկացրել հայ առաքելական եկեղեցու դիրքերից գրուած կրօնական յօդուածներին: Նիւթեր է տպագրել Արուեստի պատմութեան, մատենագրութեան, աշխարհագրութեան, բժշկութեան, պատմութեան վերաբերեալ:

Ներկայացնենք նաեւ, վերջերս տպագրուած,

Մեսրոպ Արք. Աշճեանի՝ “Էջեր Հայ Եկեղեցւոյ Պատմութենէն”, հետեւեալ լուսաբանական մօտեցումը եւս:

«Կ. Պոլսոյ մէջ, հայ պատրիարքներուն երբեմնի սանձարձակ գործունէութիւնը չափաւորելու և ինչու չէ, նաեւ իրենց հեղինակութիւնը բեկանելու համար սուլթանները համակիր էին այն խմորումներուն, որոնք տեղի կ'ունենային Կ. Պոլսոյ պատրիարքարանին շուրջ 1840–ական թթ.: Երբ իրարու յաջորդեցին հոգեւոր ժողովներ, որոնց կ'անդամակցէին թէ հոգեւորական, թէ՛ ալ աշխարհական բանիմաց անձնաւորութիւններ: Բայց Ազգային Սահմանադրութիւնը խմբագրելու պատիւը կ'երթայ ա'յս խումբ մը մտաւորականներուն, որոնք զօրաւոր ազդեցութեան տակ էին Ֆրանսայի 1848–ի յեղափոխութեան, ուսանած և ապրած ըլլալով Փարիզի մէջ —Օտեաններ, Սէրվիլեաններ և Ռուսինեաններ: Ազգային Սահմանադրութիւնը, որ Սուլթանի կողմէ իր վաւերացումը ստացաւ՝ մեծ ոյժ կուտար աշխարհական դասին, ընտրեալ մարմիններուն մէջ հաստատելով 1/7րդ համեմատութիւնը՝ ի նպաստ աշխարհականներուն»:

12. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ
ՔԱՅՔԱՅԻՉ ԴԵՐԸ ՀԱՅ ԴԱՏԻ
ԿԱՊԱԿՅՈՒԹԵԱՄԲ

1890-ական և 1915-ի կոտորածների դրդապատճառներին վերաբերող՝ Ա. քարի Նասիրեանը, իր 1984 թ. անգլերենով հրատարակուած աշխատութեան մէջ, Աբըրդինի պարլամենտական և նախկին նախարար James Bryce-ի, յենուած Կիպրոսի պայմանագրութեան և Բրիտանական դաշինքին, պարլամենտական նիստում շեշտել է, թէ ինչպէս, Հայաստանի կապակցութեամբ, Բրիտանիան ցուցաբերեց կատարեալ թերացում:

“Դա այս երկրի վերաբերումն էր”, «գրկելով հայութեան հանդէպ Ռուսիոյ կողմից երաշխաւորուած պաշտպանութիւնը, համաձայն Սան Ստեֆանոյի դաշնագրութեան, յիշելով 1890-ի հայկական կոտորածները: Ըստ Նոյեմբեր 1918-Արտաքին Գործոց Նախարարութեան յիշատակագրի, հաստատելով, որ Բրիտանիան պարտաւորուած էր, թերեւս իրաւասութեամբ (juristically) և հաւաստիօրէն, “բարոյական” հանգամանքով գործադրելու Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածը, որ քիչ վերջ, վարչապետ David Lloyd George-ն եւս նոյնութեամբ կ’երկրորդի – James Bryce-ը շարունակելով՝ – «Մեր չարաշուք միջամտութեան պատճառով, հայութեան մեծամասնութեանը ըստ 1878-ի Սան Ստեֆանոյի, կը տրուէր ենթակայ Ռուսական դրօշի պաշտանութեան... Բրիտանական պետական վարմունքը անխուսափելիօրէն առաջնորդեց հայութեան հանդէպ գործադրուած 1895-97, 1909 կոտորածներին և 1915-ի ահաբեկի ողջակիզման»:

1978-ի Փետրուարին, պատմաբան Գալուստ Գալոյեանը, Լոնդոնում, Դ. Մարշալ Լենգը իրեն կը պատմէ, որ իրեն յանձնարարուած կը լինի Լորդ Միլների անձնական արխիւը կարգի բերելու, որի մէջ կը յայտնաբերուի 13 կէտերից բաղկացած մի փաստաթուղթ, ուր Հայաստանը անտեսուած է: Նա ռազմական գործիչ էր, գեներալ, 1918 Դեկտեմբերին Անգլիայի ռազմական ուժերի ընդհանուր հրամանատարը՝ նաեւ Փարիզի խաղաղութեան ժողովում անգլիական պատւիրակութեան անդամ: Ապրիլ 29, 1919-ին նա այցելեց Երեւան և էջմիածին, նաեւ տեսակցելով Հայոց Կաթողիկոսի հետ:

Համաձայն David M. Lang-ի՝ British Policy in Transcaucasia-i 1818-1819 ... page 208-209, «Եթէ մի անկախ հայկական վեց վիլայէթներից աւել կամ նրանցից պակաս տարածքում, – ըստ 13-րդ կէտի, – և պահանջուի որեւէ պետութեան հովանաւորութիւնը, Բրիտանիան պէտք է ձեռնպահ մնայ որեւէ պահանջ առաջադրելուց»:

Նորէն, ըստ David Lang-ի, (էջ 210-215), 1919 թուի Յունուարին, երբ գեներալ Գէորգ Միլնը գտնուում էր Անդրկովկասում, նոյն ժամանակ, Սալոնիկում անգլիական զինուած ուժերի գլխաւոր հրամանատարն էր, նրան յանձնարարուած էր «Մուսավատական տեղական վարչակար-

գին խոստանալ Բրիտանիոյ կառավարութեան պաշտպանութիւնը:

Ըստ պատմաբան Արման Կիրակոսեանի՝ Բրիտանական արտաքին գործերի նախարար և յետոյ վարչապետ Հենրի Զօն Palmerston-ը հետեւեալ ձեւով ներկայացրեց և փաստօրէն ձեւաւորեց Մենն Բրիտանիոյ արտաքին քաղաքականութիւնը, ընդգրկելով ապագայ ընթացքը, «Համարել որ այս կամ այն երկիրը պէտք է դիտուի որպէս Անգլիոյ յաւերժ դաշնակից կամ մշտական թշնամի, նշանակում է վարել կարճատեւ քաղաքականութիւն: Մենք չունինք յաւերժ դաշնակիցներ, ինչպէս և չունենք մշտական թշնամիներ: Յաւերժ և մշտական են միայն մեր շահերը, և մեր պարտքն է պաշտպանել դրանք»:

Ընդհանրապէս, ամբողջ Վիենայի ժողովի գումարումով, Բրիտանեան յաջողեց, ինչպէս ասած՝ Դիպլոմատիոյ միահեծան իշխանութիւնը չէզոքացնել և շարունակաբար թուրքիոյ նպաստելով՝ որ պատճառ եղաւ հայ ժողովրդի կործանման-ինչ պէս, թուրքիոյ կողմից 1862-ին Ֆուլադ փաշան իր քաղաքական կտակում շեշտում էր - «Լաւ է կորցնել մի քանի նահանգ, քան տեսնել, թէ ինչպէս է Անգլիան լքում Բարձր դուռը»: Ոչ թէ միայն Ֆուլադ փաշան, այլ նաեւ թուրքիոյ թանգիմաթի շրջանի բոլոր պետական գործիչները ըմբռնում էին Բրիտանական մօտեցումը հանդէպ թուրքիոյ, որ ամէն գնով պաշտպանել է թուրքիոյ ամբողջականութիւնը:

Թուրք պատմաբան R. S. Salahin-ից մէջբերումներ (ըստ պատմաբան Գ. Գալոյեանի), «Turkish Diplomacy»-ի գրքում արձանագրուած, որ

1923 թուի Յուլիս 24-ին, պարտուած թուրքիան, հաշտութեան պայմանագիր ստորագրելով պատերազմում յաղթած պետութիւնների հետ՝ թուրքիան հիմք ունի Լոզանի պայմանագիրը համարելու՝ «Ազգայնական թուրքիոյ դիւանագիտութեան խոշորագոյն յաղթանակը»: Այսպիսով, պայմանագիրը ստորագրող ոչ մի պետութիւն առաջ չը քաշեց մէկ և կէս միլիոն հայ նահատակների հարցը: Salahin-ի նոյն գրքում յիշատակում է նաեւ, թուրքական պատուիրական ղեկավար Իսմէթ փաշան, 1922 Դեկտեմբեր 13-ին, ուղղակի «մերժեց հայերի համար “Ազգային Օջախ” ստեղծելու առաջարկը, որն անհամատեղելի էր (թուրքիոյ) անկախութեանը և որը կարող էր թուրքիան անդամահատել...»:

Կ. Պոլսի Բրիտանական գործերի գլխաւոր շտաբը իր 1919 թ. Ապրիլ 4-ին կազմած «Շաբաթական զեկուցագիր» թիւ 12-ում» յիշատակում է, որ Ադրբեջանի կառավարութեան ղեկավարը յայտարարել է, թէ «Անգլիացիները Ղարաբաղը մեզ են տալիս, այնպէս որ այլ հարցեր չեն կարող լինել»: Նաեւ յիշատակում էր -որ 1918-ի Յունուար 15-ին, Ղարաբաղում նշանակուած նահանգապետ Խոսրով Սուլթանովը թուրքական գործակալ է: (ըստ Public Record office, London-FO608/80):

Վերոյիշեալ զեկուցումից անկախ՝ ըստ National Archives of the USA, 860j-Washington-Հասկելի բացակայութեան փոխարինող գնդապետ Ռէյը, նշել է որ «Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը հայեր են», զարմանալով Դր. Սուլթանովի նշանակման, որ նա հանրածանօթ

Անդրկովկասեան թրքական գործակալ է և նրա ղեկավարութեամբ հայկական կոտորածներ էին կատարուում Ղարաբաղում: Բացի այդ, մասնաւորապէս, Լ. Ջենկինսը՝ Անդրկովկասի ԱՄՆ-ի հիւպատոսը՝ Փարիզի խաղաղութեան խորհրդաժողովին՝ ամերիկեան միշընին ուղարկած իր հեռագրում, Յունիս 10, 1919-ին շեշտում է, որ «հայերի կոտորածները Շուշիում իրագործուել է մոսաւաթական կանոնաւոր զօրքերի կողմից՝ Սուլթանովի հրամանով և անգլիացիների կողմից միջոցներ չեն ձեռնարկուել այն կանխելու համար»:

Հետաքրքիր է Գ. Գալոյեանի՝ ռուսերէն լեզուով «Նագորնո Ղարաբաղ» թերթից հետեւեալ մէջբերումը՝ «Այդ ժամանակամիջոցում, Ղարաբաղում էր գտնուում Անգլիական միշընը՝ Մայոր Մոնկ Մեզոնի գլխաւորութեամբ, որը Զանգեզուրի, Զիբրայիլի, Շուշիի և ամբողջ Ղարաբաղի նահանգի փաստական ղեկավարն էր, չնայած 1919 թ. Յունուարին Ղարաբաղի Ազգային խորհուրդը Ղարաբաղի հայկական մասում ինքնավարութիւնը վերցրել էր իր ձեռքը:

Թէ Գեներալ Թոմսոնը, թէ բրիտանական զօրքերի հրամանատար գնդապետ Շատելվորտը միասին խորհրդակցութեան ընթացքին, որտեղ հրաւիրուած էր նաեւ Հայոց ազգային խորհրդի նախագահ՝ Ա. Շահնազարեանն, որ որեւէ գնով չընդունեց Սուլթանովի իշխանութիւնը: Ըստ վերոյիշեալ նոյն թերթի, գեներալ Թոմսոնը յայտարարել է, որ Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչի բռնած դիրքը՝ «Ղարաբաղի գործերին իր միջամտութեամբ Հայաս-

տանը կարծես թէ պատերազմ է յայտարարում Անգլիային»:

Տեղին է յիշատակել գնդապետ Ռէյի մի ուրիշ կարեւոր վկայութիւններից, որ, Սուլթանովի ղեկավարութեան շրջանում, Ղարաբաղում չէին դադարում մահմեդականների պարբերական յարձակումները հայկական գիւղերի վրայ, որոնք թալանում ու աւերում էին «Բրիտանացիների թոյլտուութեամբ», շրջափակելով հայերին զրկում էին նրանց սննդամթերքից, «չատ հայեր սովամահութեան ենթարկելով»: Սեպտեմբերի վերջերին ակնյայտ էր դարձել, որ «Ադրբեջանը, թուրք սպանների և թուրք-թաւրների օգնութեամբ, արշաւանք էր նախապատրաստում Ղարաբաղի դէմ»: Ռէյի մի ուրիշ վկայութեամբ «թէ ինչպէս 1919 թ. Հոկտեմբերին 1200 ասկերներ հրանօթներով ու գնդացիներով եվլախից շարժուել են Ղարաբաղի վրայ, իսկ Բաքուից նրանց օգնութեան են շտապել 1000 զինուած հետեւակայիններ: Դրանց ղեկավարել է ոչ անյայտ Նուրի փաշան: Ղարաբաղի վրայ էր շարժում նաեւ Սուլթանովի եղբոր գլխաւորած 4000 հոգուց բաղկացած զորախումբը, որը տեղակայուած էր Նախիջեւանում»:

1919 թ. Նոյեմբեր 24-ին, գնդապետ Ռէյը Լոնդոնի ԱՄՆ-ի դեսպանին յղած հեռագրում տեղեակ էր պահում, որ «թուրքական հրամանատարութեան տակ գործող ադրբեջանական կանոնաւոր զօրքերը լուրջ յարձակման են անցել Զանգեզուրում, մեր փորձերը՝ դադարեցնել արիւնայեղութիւնը... անյաջողութեան են մատ-

նըւում»։ Գնդապետն առաջարկում էր Հայաստան մտցնել դաշնակից զորքեր, «հակառակ դէպքում կը շարունակուի անարխիզմի կամ բոլշեւիզմի տարածումը և կ'ոչնչանան մեր հայ դաշնակիցները»։ (Ըստ Public Record Office, London, FO 608/80)։

Համաձայն «The National Archives of the USA, 860j.01/180.»-ի, Անդրկովկասում, ըստ անգլիական զորքերի հրամանատար գեներալ Կորիի, Փարիզի խաղաղական խորհրդաժողովը պիտի լուծի Զանգեզուրի պատկանելիութիւնը, մինչ այդ Զանգեզուրը կառավարուելու է Հայկական Ազգային Խորհրդի կողմից։ Ադրբեջանի կառավարութիւնը պիտի ձեռնպահ մնայ։ Սոյն դիրքորոշումը պաշտպանել է նաեւ Հայաստանում Դաշնակիցների գերագոյն յանձնակատար գընդապետ Հասկելը։

Փարիզի խորհրդաժողովում հայերին հետաքրքրողը միայն Սեւրի դաշնագիրն էր։

Ի նկատի պիտի ունենալ որ դաշնակիցներից ոչ մէկը ձգտեց հայերին իրական օգնութիւն կազմակերպելու խնդրում։

Ըստ Լլոյդ Ջորջի եզրակացութեան «Հայերը ստիպուած կը լինեն սահմանափակուել իրենց սեփական ուժերով, իսկ այդպիսի պայմաններում նրանք, ընդունակ չեն տիրելու թուրքական Հայաստանին»։ «Ես, -աւելացնում է Լլոյդ Ջորջը, -չեմ կարող ինձ վրայ պատասխանատուութիւն վերցնել և համաձայնել Մեծ Հայաստան ստեղծելուն»։ (Գ. Գալոյեան՝ ըստ Պրավդա թերթի)։

Հայաստանում գերագոյն յանձնակատար նշանակուած ամերիկեան բանակի գնդապետ Հասկելը, յենուած Հայաստանում ստեղծուած ծանր վիճակի վրայ, Փարիզի խորհրդաժողովի նախագահին յղած իր հեռագրում հետեւեալ ձեւով է արտայայտուել։ «...Ադրբեջանցիները յարձակումները արեւելքում և հարաւում, որոնց աջակցում են ամենուրէք ծաւալող մահմեդական ապստամբութիւնները, գնալով շատանում են...», որոնց հետեւանքով հայերը «ցանկացած պահի կարող են ոչնչացուել»... «Եթէ բրիտանական քաղաքականութիւնն արգելում է հայերի պաշտպանութիւնը, ապա դա պէտք է փոխուի կամ պէտք է փնտրել այլ զորքեր այդ նպատակի համար»։ (Ըստ Public Office, London, PO608/78)։

Ֆրանսիոյ կապակցութեամբ կարեւոր է յիշատակել հետեւեալ պատմական փաստը, երբ 1920-ի Փետրուար-Մարտ ամիսներին քեմալական զորքերը զանգուածային կոտորածներ կազմակերպեցին Կիլիկիայում, Ֆրանսիան անպաշտպան ձգեց հայերին և իրենց զորքերը ետ քաշեցին։ Միայն Մարաշում հազարաւոր հայեր թուրքերը սրի քաշեցին։ Ֆրանսիոյ կեղտոտ արարքը յենուած է եղել, 1919 թ. Դեկտեմբերին, երբ Սիրիայում, Ֆրանսիոյ գլխաւոր կոմիսար Գէորգ Պիկոն «ոչ պաշտօնական» այց էր կատարել Սվազ՝ քեմալականներին առաջարկելով իր «ծառայութիւնը»։ Ադանան, Այնթափը և Ուրֆան թուրքիոյ վերադարձնելու՝ ակնարկելով տնտեսական փոխարինութիւններ։ Նմանապէս, գաղտնաբար Մուստաֆա Քեմալին յայտնել էր, որ «Ֆրանսիան պաշտպանում է

օսմանեան պետութեան անկախութիւնը», և իր զօրքերը կը նահանջեն վերոյիշեալ տարածքներէ, բացի այդ, նաեւ կ'առաջարկի Անտանտի միւս պետութիւններին նման քայլեր առնելու (տես Գալոյեան, էջ 132):

Պիտի ի նկատի ունենալ վերոյիշեալ դէպքերի առնչութեամբ՝ նոյն ժամանակաշրջանում Ֆրանսական պետական սանձը գաղտնօրէն գտնուում էր Ֆրանսիոյ Ազատ-որմնադիրներին ձեռքը և կոմիսար Գէորգ Պիկոն՝ «բարձրաստիճան Մասոն զինւորական էր», նմանապէս, նոյն ժամանակաշրջանում, շատ հաւանական է որ Անգլիական զենեքալի այցը Կիլիկիա՝ համարել ոչ խրախուսական՝ որ դարձաւ կեղտոտ ակտ ուղղուած փոքրաթիւ հայ պաշտպանողականների դէմ ենթարկելով նրանց ոչնչացման: Միջին արեւելքի կապակցութեամբ չը պիտի ուրանալ Անգլո-Ֆրանսական մասոնականների քայքայիչ դերը, որ մաս է կազմում սոյն աշխատութեան:

Համաձայն «Public Office, FO 608/78-ի, տես Գ. Գալոյեան էջ 550» Թէ Անգլիոյ զինւորական խորհուրդը, նմանապէս Լորդ Քերզոնը, Արեւմըտեան Հայաստանի ազատագրման համար, դէմ էին որեւէ զինւորական օգնութեան: 1919-ի, Հոկտեմբերի վերջերին, երբ Մեծն Բրիտանիոյ ռազմական խորհուրդը ստացել էր Գենեքալ Կորգանովի նամակը, որ խնդրում էր օգնել Հայաստանի կառավարութեանը ստեղծելու 30 հազարանոց բանակ: Նամակը քննարկուելուց յետոյ Լորդ Քերզոնը յայտարարել է՝ «Գենեքալ Կորգանովի առաջարկը յանգում է Երեւանի շուրջ փոքրիկ հայկական պետութիւն ստեղծելու

լու հարցի քննարկմանը: Ռազմական խորհուրդը գտնում է, որ դա յարմար առիթ կը լինի ասելու՝ որեւէ հեռանկար չկայ Մեծ Հայաստան ստեղծելու, որը ծաւալւելու էր Կիլիկիայից մինչեւ Կովկաս: Այժմ, երբ Կիլիկիան հաւանաբար կը գտնի Ֆրանսական մանդատը՝ անդին կը լինի մոռանալ Մեծ Հայաստան ստեղծելու գաղափարը և փորձել համոզել հայերին, որ ապագայի աւելի լաւ հեռանկարը դա երկու փոքրիկ պետութիւնների ստեղծումն է, մէկը՝ Կիլիկիայում, միւսը՝ Կովկասում»:

(Ինչպէս յիշուեց, Կիլիկիոյ կոտորածները արդէն առիթ էին ստեղծել Ֆրանս-հայկական լարուածութեան):

Ըստ բրիտանական աղբիւրների՝ անգլիական արտաքին գործոցներից՝ Մըք Դոնելը, 1921 թ. Փետրուարի 24-ի արձանագրութեամբ յիշում է՝ «Հայաստանին մատակարարուած զէնքը՝ աճեցրեց թուրք նացիոնալիստների մօտաւորապէս 100%-ը, որի համար Քեագիմ Կարաբեքիրը շնորհաւորական նամակ է ուղարկել բրիտանական ռազմական իշխանութիւններին...»: Ինչպէս հետագայում պարզուել էր, Անգլիայում հայերի զնուած զէնքի մի մասը Հայաստան չհասաւ, քանի որ, 1920-ի աշնանը Հայաստանում Սովետական կարգեր հաստատուելով, ճանապարհին գտնուող զէնքերը ընկնում է Քեմալականների ձեռքը: Ըստ Public Record Office, 371/6268-ի: Ինչպէս դէպքերը ցոյց տուեցին, անգլիական անփոյթ ձգձգումների պատճառով, հայկական զնուած զէնքերից անգամ, հայութիւնը զրկուեց:

Համաձայն The National Archives of the USA, 860j,

01/380-ի, Անգլիոյ Համայնքների անդամ Ա. Վիլ-
եամսը, պալատին ուղղուած իր ելոյթով դատա-
պարտել էր կառավարութեան քաղաքակա-
նութեան՝ հանդիմանելով նրանց, ովքեր Հայաս-
տանը համարելով «ոչ միջազգային կարեւորու-
թեան գործօն» առաջարկում էին ձեռք քաշել
Հայաստանից ընդհանրապէս: Ըստ Վիլեամսի,
«փաստը այն է, որ հայերը մեր կառավարու-
թիւնից ամուսնը ստացել են որոշ զէնքեր, բայց
դա եղել է ընդամէնը մէկ անգամ... մինչ այդ
նրանք աղաչում էին մեր կառավարութեանը
մարդիկ ուղարկել օգնելու իրենց կազմակեր-
պելու պաշտպանական ուժերը, և մեր կառավա-
րութիւնը հանգիստ կերպով մերժեց նրանց:
Նրանք խնդրում էին զէնք և չստացան: Նրանք
իրենց համար էին կուռում: Նրանք գնեցին ինք-
նաթիռներ և մեր կառավարութիւնը կանգնեց-
րեց ինքնքիւնների առաջումը»:

Ըստ գնդապետ Ստոքսի, մինչ Յուլիս 15,
1920, Անգլիոյ վարած քաղաքականութեան անդ-
րադառնալով, իր Օգոստոս 5-ի զեկուցման մէջ
նշում է «Բրիտանական շահերի տեսակէտից ներ-
կայումս դրութիւնն Անդրկովկասում հեռու է
բաւարար լինելուց...: Անմիտ ու անարդար կը
լինէր չհասկանալ, որ Անդրկովկասի բոլոր երեք
հանրապետութիւնները ստեղծուած իրադրու-
թիւնում աւելի քիչ են մեղաւոր, քան մենք:
Գեներալ Դենիկինին ցոյց տուած մեր հսկայա-
կան օգնութեամբ մեզ ոչ միայն չյաջողեց
ստիպել նրան կենդրոնացնել իր ուժերը բոլշե-
ւիկների նկատմամբ յաղթանակ տանելու համար
և ետ պահել նրան Անդրկովկասում անհանգիստ
վիճակ ստեղծելուց, այլեւս մենք զոհաբերեցինք

մեր սեփական շահերը և ձեռնպահ մնացինք
երեք հանրապետութիւններին զէնք ու ռազմա-
մթերք մատակարարելուց, ինչը հնարաւորու-
թիւն կտար նրանց ամեն կերպ դիմակայել բոլ-
շեիկեան վտանգին, երբ այն ապառնում էր
նրանց... Մենք ամեն բան պիտի անենք, որպէսզի
ցոյց տանք այդ հանրապետութիւններին, որ
խիստ հետաքրքրոււմ ենք նրանց ապագայով»:

Սոյն երեք կարեւոր մէջբերումներով կ'եզ-
րափակենք սոյն յօդուածը:

Ամերիկեան մանդատի կապակցութեամբ՝
համաձայն «Congressional Record», vol. L, part 3-ի,
դեռ նախքան ամերիկեան սենատի մերժման,
Սենատոր Քինգը յենուած ստոյգ տեղեկութիւն-
ների վրայ, գիտէր որ սենատորները բացասական
վերաբերմունք ունեն և արտայայտուել էր որ
սենատի մերժումը «հրաւէր կը լինի Հայաստանի
թշնամիներին՝ յարձակուելու նրա վրայ»: Հետա-
գայում սենատոր Քինգը նշեց, որ կոնգրեսի այդ
որոշումը իրօք որ ճակատագրական նշանակու-
թիւն ունեցաւ Հայաստանի համար:

Համաձայն «Public Record Office» FO 371/4964-ի,
1920, Նոյեմբեր 21-ին, Ֆրանսական լրագրող-
գործակալ Լուի Բրիանը, իր կառավարութեան
ուղղուած զեկուցագրում, գրեց հետեւեալը, որ
«Պաշտօնական անձանց հետ ունեցած զրոյցներից
ձեր թղթակցին յայտնի է դարձել, որ անգլիա-
ցիները համաձայնութեան են եկել Մոսկովա
Քեմալի հետ, որպէսզի նա գրաւի Բագուն, հետա-
գայում Բրիտանական կառավարութեանը յանձ-
նելու համար: Որպէս փոխհատուցում Անգլիան
զոհաբերելու է Հայաստանը»:

Վերոյիշեալ Public Record Office, թիւ FO 371/4948-ի, Դրօ-ի վարքագծի կապակցութեամբ, որ Ռուսիոյ հետ դաշնակցում էր, Անգլիոյ դիւանագէտ Ռ. Մաքդոնելը իր կառավարութեան յղած մի հաղորդագրութեան մէջ գրել է, «Դա փաստ է, որ Դրօն և Գիւլիսանդարեանը ծայրահեղ սոցիալիստներ են, որոնք համակրանք ունեն բոլշեւիկներին հանդէպ»:

Աւելի հետաքրքրական որ, Անգլիոյ արտաքին գործոց նախարարութիւնում այն կարծիքն էր ստեղծուել, դեռեւս 1920 թ. Նոյեմբեր 26-ին ղեկավար Ստոքսի հետ ունեցած հանդիպման ընթացքին խատիսեանը ասել է, թէ «թուրքերը ցանկանում են ուժեղ Հայաստան, որպէս բուֆէր Ռուսիոյ դէմ»: Այդ մասին Ստոքսը նոյն օրը հաղորդել է իր կառավարութեանը: Նաեւ այլ տեղեկութիւնների հիման վրայ, Անգլիան այն կարծիքին էր որ «Մուստաֆա Քեմալը ցանկանում է ուժեղ Հայաստան, որը կլինէր թափարգել ընդէմ բոլշեւիկների և Ռուսաստանի, մինչդեռ Լենինը ցանկանում էր ուժեղ-Հայաստան (Նորհրդայնացած), որպէս բոլշեւիկների ամրակէտ (Փորպոստ) Արեւելքում»: Այդ պատճառով էլ Անգլիոյ համար գերադասելի էր առաջին տարբերակը:

Վերոյիշեալ կարծիքների յիշատակութիւնը զգալի է դարձնում, թէ Հայաստանը ինչպիսի հակասութիւնների բեմ է դարձել, որ կարեւոր համարեցի ընթերցողների ուշադրութեան յանձնել: Միեւնոյն ժամանակ, Լոնդոնում հրատարակող «Թայմզ» օրաթերթը՝ 1920, Դեկտեմբեր 4-ի համարում հաղորդում է, որ «Հայկա-

կան Հարցը ...առ այժմ ռուսական հարց է»:

Մի քանի տող Ֆրանս-Քեմալական համաձայնութեան շուրջ. 1921 թուի դարնան, Կիլիկիոյ վերաբերեալ՝ ըստ «Public Office Record, FO 608/78-ի, Բուլֆուրը, դեռեւս Օգոստոս 31, 1919-ին, Փարիզից հաղորդել է Լորդ Քերզոնին, որ ամերիկեան և անգլիական իշխանութիւնները եկել են այն եզրակացութեան, որ «արտաքին օգնութեան բացակայութեան դէպքում տեղի կ'ունենայ հայերի ահաւոր կոտորած: Միակ օգնութիւնը, որ ամերիկացիները ի վիճակի են ցոյց տալ, դա սպառնալիքն է թուրքերին, որ եթէ նրանք չկանխեն վերահաս սարսափի վտանգը, հայերը կ'ոչնչացուեն վերջնականապէս»:

Համաձայն «The National Archives of the USA-860j. 4016»-ի, Կիլիկիայից Ֆրանսացիների հեռանալու օրերին՝ «Մերձաւոր Արեւելքի օգնութեան» կոմիտէն իր Մայիս 25-ի, 1921 թուի, վկայում է, «թուրքական նացիոնալիստների յայտարարութիւնը, որ Ֆրանսայի հետ ունեցած հակամարտութիւններում աւերուած մզկիթները և մինարեթները կը վերաշինուեն հայերի գանգերով»:

13. ՓՈԽԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԵԱՆ

Ընդհանրապէս, հիմնուած պատմական մի շարք վաւերական տուեալների վրայ, միջազգային մասոնական օթեակները լինելով հանդերձ ոչ-պետական և ոչ-կղերական «եղբայրական» ուխտեր՝ չահագործւել են իրենց պետութիւնների կողմից:

Հայ ազատագրական շարժման և նաեւ “Հայ դատի” կապակցութեամբ արձանագրուած և տպագրուած զանազան եղբայրական հրահանգները և դէպքերը ի նկատի առնելով, կարելի է ասել, որ իրենց կենտրոնական մարմինների ցուցմունքներով՝ մասոնականները բացասական դեր են ունեցել, նպաստելով թուրքիոյ պետութեան հայաջնջման քաղաքականութեան:

Կարեւոր համարեցինք հետեւեալ երեք մէջբերումները հերթականօրէն ներկայացնել: «Ո՞վ Զարդեց Հայ ժողովուրդը»՝ Փրոֆ. Յովհ. Փիլիկեանի յօդուածից (որ Լիբանանի Ամերիկեան, Գերմանիոյ Միւնիխի, և Անգլիոյ Լոնտոնի համալսարաններէն, Մեծն Բրիտանիոյ Մարդաբանական կաճառի Անդամ, դափնեկիր Հայաստանի Պետրոս Ադամեան մրցանակին արժանացած դէմք մը): Այս յօդուածը խմագրել է իբրեւ

բացառիկ՝ նուիրուած Մեծ Եղեռնի 80-ամեակին (1915-1995). հետաքրքիր է ներկայացրած իր փաստերից մէկը, որ 1971 թուականին յայտնաբերուած յոյժ գաղտնի նամակի հրատարակութիւնն է, գրուած 29, 1910 թուին:

Վերոյիշեալ նամակը, Անգլիոյ Հիւպատոս Սըր Ճ. Լոթհըրի կողմէ ուղղուած է Անգլիոյ Արտաքին Գործոց Նախարար Սըր Ս. Հարտինկի: Ինչ յայտնութիւններ կան պատմական այս փաստաթուղթին մէջ, որ կասկած չի ձգեր, թրքական պետութիւնը կը ղեկավարուէր Անգլիական Մասոնականութեան և Սիոնիզմի թուրք սիրահարներով: Ըստ Լոթհըրի՝ «թուրք անտեսանելի կառավարութիւնը Կրանտ Օրիյէնթն (մասոնական լոճն) է, Թալաաթ Պէյն ալ անոր Կրանտ Մասթըրը (մասոնական բարձրագոյն աստիճան)»:

«... Անգլիական պետական մասոնները աշխարհ բերին երիտ-թուրքերը, հայերին աւելի նրբութեամբ, քաղաքավարութեամբ, պետական օրէնքով և օրինականութեամբ ջարդելու համար, ոչ Համիտին պէս անօրէն վայրագութեամբ... Թալաաթը իր մասոն հայ եղբայրները, ինչպէս Գրիգոր Զոհրապը համբուրելով կառափնատուն ուղարկեց»:

«Լոթհըր կը փաստագրէ թէ ինչպէս մեր մեծագոյն ջարդարար Թալաաթ Պէյը իր կոմիտէին ոյժը երկրի վրայ տարածելու համար կը ծրագրէ մասոնական լոճերու տարածումը թուրքիայով մէկ, այն խայծով որ մասոն դարձողը պիտի դառնար եղբայրը Անգլիոյ թագաւորին և պիտի կարենար ձեռքը թոթուել և յետոյ նշաններ փոխանակել երբ ան իսթանպուլ այցե-

լէր, եւայլն»:

Մէջբերում մէկ ուրիշ յօդուածից.-

«Կիլիկիոյ հայութեան վերջին կոտորածը և Հօրս Կտակը»՝ ըստ Գէորգ Չազմաճեանի՝ (Փրոֆ. Յ. Յ. Չազմաճեանի եղբայրը որին նուիրել է այդ յօդուածը) «Ատանայի ջարդը սկսաւ Ապրիլ 14, 1909 —նոր տոմար— Չորեքշաբթի օրը, առաւօտեան ժամը իննին և տեւեց մինչ ամսոյն վերջը: Ջարդի ատեն հայերս ականալիչ կը սպասէինք, որ անգլիական բանակը շուտով օգնութեան պիտի գար և այդ ահաւոր ջարդէն մեզ փրկէր:

Ինչպէս պարզուում է, հիւպատոս Սըր Ժ. Լոթհըրի ժամանակ անգլիական Քոնսիւլ՝ Maj. Daugthy Wylie, կ'այցելէ Ատանայի շրջանը և իբրեւ հայասէր, մէկիկ մէկիկ կ'այցելէ հայոց մարտկոցները և տեսնելով խղճուկ զէնքերը և դիմադրող հայ տղաների եռանդը կ'արտայայտէ իր հիացմունքը: Դեսպանի հեռանալուց յետոյ հայերը կ'ականալէին որ անգլիական զօրքեր պիտի գան իրենց փրկելու: Հակառակը կը պարզուի: Ապրիլ 23, 1909, Ուրբաթ առաւօտեան, Տէտէ-Աղաճէն, 12,000 տաճիկ զինուորներ վար կ'իջնեն. փոքր ու մեծ թնդանօթներով շքր-ջապատուած հայութեան կ'սպառնան պահանջելով իրենց զէնքերի յանձնումը, հակառակ պարագային որեւէ մէկի չպիտի խնայեն՝ ամէն ինչ քար ու քանդ անելով: (Տես «Հայրենիք» ամսագիր, Մարտ 1960):

Ով պիտի երեւակայէր որ Անգլիոյ հիւպատոսը, որ իբրեւ թէ հայասէր՝ պիտի լրտեսէր

Ատանայի հայկական դիրքերը և զեկուցէր թուրքերին: Այստեղ, հաւանական է որ, թերեւս Անգլիոյ դեսպանը մասոնական եղած լինի կամ պետական հրահանգի գործակատար:

Նորից, ըստ Փրոֆ. Փիլիկեանի, կ'անդրադառնայ Լ. Ֆրայ-ի «Ջուրեր դէպի Արեւելք հոսող» գրքի, (L. Fry, Waters flowing Eastward, 1931) 1864-69-ին Սիոնիստները միայն հինգ տարիների ընթացքին, աշխարհի կարեւոր մայրաքաղաքների մէջ, Լոնտոն, Փարիզ, և Սբ. Փետրոս-պոլսի կ'ստեղծեն հինգ «միջազգային եղբայրութիւններ», որոնցից Փարիզինը կը կոչուի Ալիանս Իզրայէլիթ Իւնիվերսալ: Ատոլֆ Իսահակ Քրէմիւք (1798-1880) որ Ֆրանսայի Նիմ (Nimes) քաղաքի փաստաբանն էր և (Նափոլէոնի) Պոնափարթ ընտանիքին օրինական հարցերի խոհրդատուն, անդամ էր նաեւ անգլիական ամենէն նշանաւոր մասոնական կազմակերպութեան Սկոփտիական RITE-ի Միզրային Լոնին, և 1871-ին (մինչեւ իր մահը 1880-ին) կը դառնայ միանգամայն նախագահը և՛ Ալիանս Իզրայէլիթի, և՛ Գերագոյն Վարպետը (Supreme Master) Սկոփտիական պաշտամունքին՝ RITE-ին:

Հետեւեալը, նորէն՝ Փրոֆ. Փիլիկեանից, որ նոյնութեամբ կը ներկայացնենք:

Երիտ-թուրքերը իբրեւ Անգլո-Ֆրանսական գործիչներ, հայ ժողովուրդը ջարդեցին միայն ու միայն Օսմանեան կայսրութիւնը հիմնովին կործանելու միջոց՝ որպէսզի անոր շուկաները Անգլիոյ, Ֆրանսայի յանձնելու համար, ճիշտ այնպէս ինչպէս այսօր Սովետական Միութիւնը կործանեցաւ յանուն շուկայական պոռնկութեան:

Հայերս միշտ կը մոռնանք որ Աթաթիւրքը երիտ-թուրք Միութիւն և Յառաջդիմութիւն կուսակցութեան անդամ և պարագլուխ էր: Իր պարագլուխի դերը յետագային Անկլո-Ֆրանսայի աղբարիկները ստախօսութեամբ նսեմացուցին, կերտելով պատկերը սովորական, երիտասարդ, հասարակ գող-աւազակ միասեռական փեզեւենկ զինուորի մը, որ կամաց-կամաց իբր թէ իր հանճարով կառուցեց նոր Թուրքիան:

Հայկական Կիլիկիոյ յանձնումը Ֆրանսայի կողմէ Աթաթիւրքի բռնաբարութեան, պատմական աչք-ծակող փաստերէն մէկն է որ մեր երրորդ ջարդարարները Ֆրանսայի պետական մասոնական պոռնիկներն էին...

Լենինեան յեղափոխութիւնը լախտի հարած էր Անգլիոյ, Ֆրանսայի երախտաւորներու գլխուն... Լենին Ռուսիոյ պետութեան արխիւներուն մէջ յայտնաբերած էր իրենց նախկին դաշնակիցներու գաղտնի համաձայնութիւններուն կրկնօրինակները, և կը մերժէր նման դիւանագիտութիւն ուրիշ ժողովուրդներու արիւնը խմելու համար: Անգլո-Ֆրանսացի աղբարիկները աճապարանքով հայ-հաւարով Աթաթիւրքը մէջտեղ հանեցին Թուրքիան իբրեւ պատուար կառուցանելու համար նորածին, բայց հսկայական Սովետ Միութեան դէմ: Եւ յաջողեցան, այնքան մը որ (իբր թէ) Լենինը ինքն ալ ստիպուեցաւ նոյն խաղը խաղալ, այս անգամ ինքն ալ Աթաթիւրքին ոսկի ուղարկելով... Բայց հարց է թէ արդեօ՞ք Լենինեան քաղաքականութիւնն էր այդ, քանի որ պատմական փաստը ուրիշ է, այն որ այդ գործին պատասխանատուն մասոն եղբայր Թրոցքին էր...

Տակաւին 1905-ին Ռուսիոյ մէջ լոյս տեսած էր աներես, ցեղապաշտ, ոճրային «գաղտնի» ահաւոր տոքումէնտ մը, ՍԻՈՆԻ ԵՐԵՑՆԵՐՈՒ ՓՐՈԹՈՔՈԼԻՆԵՐԸ վերնագրով, հրատարակուած ռուսական օրթոտոքս եկեղեցականի մը կողմէ Նիլուս անունով, ուր առաջին ակնարկութիւնները կան մասոնական-սիոնիզմի կապին, ի խնդիր աշխարհի տիրապետութեան, ճիշտ հիթլերական-նացիական մտածողութեամբ:

Անցնենք մեր երրորդ կարեւոր պատմական մէջբերումին թէ ինչպէս մի հայրենասէր հայ և օտար օթեակի մասոն, գիտնալով որ պիտի գոհ-լի, կը փրկէ Թաւրիզի հայութիւնը Թուրքիոյ կողմից ծրագրուած կոտորածից: Նոյնութեամբ կը ներկայացնենք Ա. Ամուրեանի (Անդրէ Տէր Օհանեանի) “Պարսկահայերու Ջարդերը և Մասոնականութիւնը” յօդուածից այդ մասը «Մասոններու Դերը Հայկական Ջարդերու Մէջ» խորագրով:

Մասոնները իրենց ազդեցութիւնը ունեցած են պարսկահայութեան ջարդերու խնդրին մէջ, և այս առնչութեամբ Անդրէ Ամուրեան հետեւեալ տողերը կը գրէ.

«Ֆրամասոնութիւնը հարուածել է նաեւ պարսկահայութեանը: Եւ ահա թէ ինչպէս:

Առաջին Աշխարհամարտին թրջական բանակները երկու անգամ խուժեցին չէզոք Պարսկաստան: Առաջին հերթին Խալիլ Պէյն էր, որու հրամանատարութեան տակ գտնուող բանակը ջարդ կրեց Դիլմանի (Սալմաստ) տակ, հերոս Անդրանիկի ձեռքից: Երբ Խալիլ Պէյը փախաւ վան, նահանգապետ Ճիւտէթին զեկուցեց, որ

կոտորել է Արեւմտեան Ատրպատականի հայութեանը (Ուրմիայի և Սալմաստի) 1915-16 թուականին:

Երկրորդ անգամ թուրք բանակը ներխուժեց չէզոք Պարսկաստան 1917 թուի վերջերին թուրք Ալի Իսսան փաշայի հրամանատարութեամբ: Նա նպատակ ունէր, իբրեւ թուրք բանակի աջ թեւի հրամանատար, կտրել անցնել հիւսիսային Ատրպատականով դէպի Մուղան, այնտեղից էլ Բագու: Թրքական բանակի ձախի և կենտրոնի բաժինն էլ Հայաստանի վրայով պիտի անցնէր, հասնելու համար Բագու, փանթուրանական ծրագիրը իրագործելու:

Ալի Իսսան ջարդել սկսեց Արեւմտեան Ատրպատականի հայերին՝ Ուրմիայի, Խոյի, Մակուի, Ս. Թաթէոս Առաքեալի վանքի և Ղարատաղի Տգմար գաւառի հինգ հայկական գիւղերի բնակիչներին: Աւելի քան 10,000 հայեր զոհ գնացին ջարդարարին:

Թաւրիզ ժամանելով, Ալի Իսսան փաշան իր ճառի մէջ յայտարարեց, որ՝ ջարդել է Խոյի, Մակուի հայերին... Ապա տաս հոգի թաւրիզեցի երեւելի հայերի պատանդ էր վերցրել իբր թէ ըմբոստութիւնը կանխելու համար: Բայց բուն նպատակն էր թաւրիզի հայերին եւս ջարդել: 1918 թուի Յուլիսի վերջը և Օգոստոսի առաջին շաբաթն էր, թաւրիզի հայութիւնը կենաց և մահու տագնապի մէջ էր. տաս պատանդներ կալանքի տակ էին:

Յայտնի էր որ թրքական բանակի ձախի և կենտրոնի թեւերը պարտութիւն էին կրել Սարգարապատի, Բաշ Արաղանի և Ղարաքիլիսէյի

ճակատամարտում և 1918 թուի Յունիսի չորսին Բաթումի կոնֆերանսում թուրքիոյ պատուիրակները ճանաչել և ստորագրել էին Հայաստանի Անկախութիւնը, սակայն Ալի Իսսան փաշան անտեսել էր այդ դաշինքը և Յունիս, Յուլիս ամիսներին ջարդի էր ենթարկել Ատրպատականի հայերին: Ալի Իսսան փաշան ֆրամասոն էր: Պատմեմ մանրամասնութիւնը:

Տասնամեակներից ի վեր Թաւրիզ էին հաստատուել արեւմտահայ եղբայրներ՝ Գորոյեանները: Նազար Յ. Գորոյեանը հեղինակն է «Պարսկաստանի Հայերը» արժէքաւոր աշխատութեան:

Նրա եղբայրը՝ Տիգրան խան Գորոյեանը, հնախոյզ էր, հնութիւններ դնող և վաճառող, զբաղւում էր նաեւ ազգային գործերով և մտերիմն էր Ատրպատականի Հայոց թեմակալ Առաջնորդ Ներսէս Արք. Մելիք Թանգեանի:

Երբ Ալի Իսսան փաշան թաւրիզ է գալիս, Տիգրան խան Գորոյեանը հայութեան կողմից յարաբերութեան մէջ է մտնում փաշայի հետ և ձգձգում է թաւրիզի հայութեան ջարդի խնդիրը:

Այդ օրերին թրքական բանակը մեծ պարտութիւն է կրում Պաղեստինի ճակատում, գերմանացիներն էլ՝ արեւմտեան ճակատում, ուստի Ալի Իսսան փաշան ստիպուած է լինում արագ նահանջելու, առանց հասնելու իր նպատակին՝ թաւրիզի հայութեան ջարդին:

Շարունակութիւնը պատմել է Ստեփան խան Եղիազարեանը, որ մտերիմն էր Տիգրան խանի և վրայ է հասել հոգեվարքի մէջ գտնուող Տիգրան խանին:

Տիգրան խանին հարուածել էին քարերով, մարմինը ջարդելով, —ասում է Ստեփան խանը, —ՈՐՔԱՆ ՀԱՐՑՐԻ ԹԷ ՈՎՔԵՐ ԷԻՆ ԱՀԱՐԵ-ԿԻՉՆԵՐԸ ՏԻԳՐԱՆ ԽԱՆԸ ՉԱՍԱՑ. միայն թէ խնդրեց— որ իր ֆրամասոնական ժապաւենը և շքանշանները վերցնեմ ու պահեմ:

Բանից պարզուում է հետեւեալը: Տիգրան խանը ֆրամասոն էր և աւելի բարձր աստիճան ունէր քան Ալի Իսսան փաշան: Տիգրան խանը ձգձգել էր Թաւրիզի հայութեան ջարդի խընդիրը: Ալի Իսսանը ստիպուել էր ենթարկւել իր բարձրաստիճանին և ահա երբ ստիպւած էր եղել նահանջել, պատուիրել էր այլ ֆրամասոններին, որ ահաբեկեն Տիգրան խանին...

Խնդիրը պարզ է: Երբ Թաւաթ, էնվեր, Ճեմալ փաշաները ֆրամասոն էին և չխնայեցին իրենց ֆրամասոն հայ ընկեր Գրիգոր Զօհրապին, Ալի Իսսան փաշան էլ չպիտի խնայէր իր ֆրամասոն ընկեր՝ Տիգրան խան Գորոյեանին: (Տես “Ալիք” Յունիս 6, 1984)

Հայ մասոնական օթեակները երբեւէ չէին կարող մտածել որ անգլո-ֆրանսական կենտրոնական օթեակների կողմից շարունակաբար շահագործուել են: Քանի որ բոլոր հայկական օթեակները իրենց բարոյական և նիւթական գործունէութիւնը պիտի զեկուցէին վերոյիշեալ կենտրոնական մարմիններին: Սա ինքնին, բացի որ սահմանափակում էր հայ օթեակների գործունէութեան դաշտը, այլեւ նրանք, օրը օրին տեղեակ էին լինում հայկական միջավայրին վերաբերող անցուդարձերից: Հայ մասոնը, այդ օրերին չէր կարող ըմբռնել թէ ինչպէս է շահա-

գործուում: Ի նկատի ունենալով այդ ժամանակաշրջանի պոլսահայ խառնիճադանճ և ասպականուած մթնոլորտը, հայ մասոնը այլեւս ուրիշ ճամբայ չունէր՝ « Ու միայն հայ մասոնական օթեակի ձեւը ստեղծելով՝ նա կը կարողանայ լիովին կատարել իր մասոնական պարտականութիւնը յօգուտ իր հարազատ ազգին որ այնքան Լոյսի, Բարիի ու Ճշմարտութեան պէտք ունի»:

Կարեւոր է յիշատակել՝ չնայած որ Թուրքիոյ հայ մասոնները հաւատացած էին մասոնականութեան նպատակը քաղաքական գործունէութիւն չէ, բայց այն ըմբռնումն ունէին, որ եթէ օրերից մի օր ստեղծուի նման մի մտածելակերպ՝ գոնէ հնարաւոր կը լինի ստեղծել մարդասիրական կապ Պոլսոյ և գաւառաբնակ հայերի միջեւ, նաեւ բարոյական կապ ուրիշ տեղերի հայ ժողովուրդի ու թրքահայութեան միջեւ: Հայ մասոնները պիտի աշխատէին իրագործել այն, ինչպէս 1846 թ. Պոլսում հիմնւած “Համագգեաց” ընկերութիւնը, յետոյ ոչ պակաս թաքուն ու աղօտ միտումներով 1860-ի «Պոլսի Բարեգործական» ընկերութիւնը, եկեղեցին, Ազգային Սահմանադրութիւնը, երեք հայ եկեղեցիները, լուսաւորչական, կաթոլիկ, բողոքական չէին կարողացել իրագործել: Քաղաքական պարզ ըմբռնումներից զուրկ էր նաեւ վաթսուներկան թուականներին Պոլսում կազմուած “Բարեկարգութիւն Արեւելեան”ը հիմնուած Թ. Սվաճեանի, Մկրտիչ Տիգրանեանի և ուրիշների նախաձեռնութեամբ՝ լուսաւորութիւն տարածելու հայ գաւառների քրտերի մէջ, որպէսզի «ասոնց մէջ լուսաւորութիւնը տարածելով, կարելի ըլլայ մեղմացնել քիւրտերոյ բարքերը» ու այդպիսով փոխել քիւրտերու թշնամական յա-

րաբերութիւնները շրջապատող հայ բնակչութեան հետ: Աւելի ընդգծուած կերպով, «Պոլսի Բարեգործկան» ընկերութեան միտումները արտայայտուեցին «Անձնուէր» ընկերութեան մէջ, որ որոշ գոծունէութիւն ցոյց տուեց 1862 թ. Զէյթունի ապստամբութեան շրջանին:

Իբրեւ վերջաբան պիտի փորձել համառոտակի մատնանշել հայ օթեակների գործունէութիւնը, հայապահպանման տեսանկիւնից, յատկապէս Թուրքիայում:

Թուրքիոյ հայկական օթեակները, իրականութեան մէջ ամեն առիթ օգտագործեցին, հնարաւորին չափ նպաստելով և սատար հանդիսանալով հայ գրականութեան, թատրոնին, հայ մամուլին և հայ դպրոցներին: Թուրքիոյ դաժան միջնորոտում ունեցան դրական ազդեցականման գործունէութիւն: Դեռ նախ քան «զուտ» հայ օթեակների կազմակերպումը, 1860-ի Ազգային Սահմանադրութեան շրջանին և յետոյ, ի մասնաւորի Պոլսահայերը երբ զգալի չափով կը վայելէին ազատութեան պտուղները, «Յատկանշական էր տեսնել հայ ազատ որմնադիրներու սարքած դաշտահանդէսները և պարահանդէսները՝ ի նպաստ բարենպատակ և ազգօգուտ հաստատութիւններու: Սուլթանական շրջաններուն իսկ հայ դպրոցական տղաք «Մեր Հայրենի»-ը և ուրիշ ազգային հայրենասիրական երգեր կ'երգէին: Իսկ Պոլսի, 1918-ի «Հայաստան» օթեակը, Հոկտեմբեր 18, 1920 թուի պաշտօնական բացման արարողութիւնից յետոյ, մեծ հաճոյքով կը յայտարարուէ, որ Թուրքիոյ հայկական Ազատ Օթեակները իրենց աշխատանքները կը կատարեն հայկական եռագոյնի հովանու տակ:

Օգտուած Աղբիւրների Ցանկը

1. *History of the Ancient and Honorable Fraternity of Free and Accepted and Concordant Orders* (The Fraternity Publishing Co., Boston 1917, c 1898.)
2. Charles William Heckethorn, *The Secret Societies of all Ages and Countries*, by, in 2 volumes. (University Books, New Hyde Park, NY, 1965).
3. William J. Whalen, *Handbook of Organizations*. (Bruce Publishing Co., Milwaukee, 1966).
4. William J. Whalen, *Christianity and American Freemasonry*. (Bruce Publishing Co., Milwaukee, 1968).
5. *The Encyclopedia Americana*, 1959, Volume 18.
6. *The World Book of Encyclopedia*, 1982, volume 13.
7. Archbishop Mesrob Ashjian, *The Armenian Church in America*, (Armenian Prelacy, New York, 1995).
8. Մեսրոպ Արք. Աշգեան, *Էջեր Հայ Եկեղեցւոյ Պատմութեան*, (New York, 1994).
9. Mr. Armen Joseph, *The Library-Archives of the Dutch Order of Freemasons in the Hague*. (The Hague, Netherland).
10. Հայաստանի Սովետական Հանրագիտարան:
11. Ռուբեն Բերբերեան, *Հայ Մասնագէտը և «Սէր» Օթեակը Պոլսոյ մէջ: («Հայրենիք» ամսագրեր, 1937):*
12. Ա. Ֆէլէրճեան, *Հայ Ազատ Որմնադրական Օթեակներ Թուրքիոյ մէջ: («Հայրենիք» ամսագրեր 1954, 1955, 1956):*
13. Թ. Տէր Յովհաննէան, *Պատմութիւն Նոր Զուղայի, Ա և Բ Ռատորներ: (Նոր Զուղա, 1880-1881):*
14. Գալուստ Գալոյեան, *Հայաստանը և Մեծ Տէրութիւնները 1917-1923 թթ: (Երևան, 1999):*
15. Արման Կիրակոսեան, *Բրիտանական Դիւանագիտութիւնը և Արեւմտահայութեան Խնդիրը: (Երևան, 1999):*

16. Մ. Ս. Կիրակոսեան, Առաջին Համաշխարհային
Պատերազմը և Արեւմտահայութիւնը, 1914-1916 թթ.:
(Երեւան, 1967):
17. Akaby Nassibian, *Britain and the Armenian Question*.
(Great Britain, 1984).

Հեղինակի հասցէն՝

Researcher in Armenian Studies
Albert Sarkissian
131 Coolidge Ave., Apt. 527
Watertown, MA 02472-2801